Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99.092 Րա 88
Ա-99

ՐԱՖՖԻ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՐԱՖՖԻԻ ԿԵԱՆՔԻՑ

„Քաղցրախօս պահէ՛ր քու անուշ լեզուն,
Քնարդ ներդաշնակ, հոգիդ զգայուն":

Գ. Քաջիկա.

ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼ
Տպարան Ա. Մ. Մալխասեանի.
1904

25 FEB 2013
13 APR 2011
13563

Дозволено Цензурою, Тифлисъ, 26-го Іюля 1904 г.

ՐԱՖՖԻ

ՊԱՏԿԵՐՆԵՐ

ՐԱՖՖԻԻ ԿԵԱՆՔԻՑ.

Շատ ու շատ տարիներ անցան այն օրից, երբ մեր վիպագիր—հրապարակախօս Րաֆֆին մեռաւ և հողին յանձնվեց։ Պատմութեան առաջ պատասխանատու չը մնալու համար անհրաժեշտ կարիք կար, որ պարսկահայերի կողմից հաւաքաբար խմբագրվէր պարսկաստանցի բանաստեղծի լիակատար կենսագրութիւնը։ Մի բան, որ մինչև օրս առանց հետևանքի մնաց։ Տխուր իրողութիւն։ Եւ որքան գնում, այնքան զգալի է դառնում այն բաց տեղը, որ թողել է Րաֆֆին։

Բազմաթիւ բարեկամներ, թէ Կովկասից և թէ Պարսկաստանի այլ և այլ քաղաքներից, դիմեցին ինձ, նոյնպէս և յարգելի տիկին Րաֆֆին՝ յորդո-

րելով, որ մեր վիպասանի կենսագրութիւնը ես գրեմ, իբրև նրան խիստ մօտից ճանաչող։ Եւ արդարև իմ կողմից աններելի զանցառութիւն կը լինէր չը գնահատել նրա հազուագիւտ տաղանդը։ Ես կրկնակի պարտաւորութիւն ունէի։ Ինձ գիտողները լաւ գիտէին արդէն, որ Րաֆֆին և ես, մեր երիտասարդութեան օրից սկսեալ մինչ նրա մահը՝ եղել ենք խիստ մտերիմ բարեկամներ, այլ և միասին երկար ժամանակ եղել ենք Սալմաստում, Ուրմիում, Թաւրիզում և մի կարճ ժամանակ էլ Թիւրքաց Հայաստանում, իսկ երբ եղել էինք տարբեր տեղերում, շարունակ թղթակցել ենք միմեանց հետ։

Արդէն 60-ական թւականներից էլ առաջ, ես ծանօթացել էի Րաֆֆիի և նրա ընտանիքը կազմող անդամներից շատերի հետ։ Նրանցից զանազան ժամանակներում հարցուփորձով բազմաթիւ ուշագրաւ տեղեկութիւն եմ հաւաքել նրա մանկութեան ժամանակի վերաբերութեամբ։ Որից յետոյ մի պահանջ դարձաւ ինձանում հետաքրքրվել թէ նրա գրական գործունէութեամբ և թէ նրա կեանքում պատահած երևոյթներով։ Դրանցից շատերը ես գրի եմ առել և հաւատարմութեամբ պահել մինչև այսօր այն ամենն, ինչ որ ես անձամբ տեսել եմ, լսել և ստուգել վստահելի աղբիւրներից, շատ անգամ էլ դիմելով յիշողութեանս։

Եւ որպէս զի քանքարաթաղոյց չը լինեմ, ահա այսօր ես նրանց հաւաքելով հրապարակ եմ հանում, նախապէս խոստովանելով, որ իմ ներկայ աշխատութիւնը հեռու է Րաֆֆի ամբողջ կենսագրութիւնը լինելուց։

Ես միայն մի քանի քայլ առաջ գնալով հող պատրաստեցի նրա ապագայ կենսագրութիւնը կազմողի համար, որպէս մի նախերգանք։ Ես վստահ եմ, որ շատ չանցած դուրս է գալու մի նոր հոսանք, որ պրպտելով և թափանցելով անցած գնացած եղելութիւնների խորքերը՝ բազմակողմանի նկարագրելով, դուրս է բերելու նրա ամբողջ կենսագրութեան ընդհանուր գծերը։ Եւ որովհետև Րաֆֆին «Մշակով» ծանօթացաւ հայ գրական աշխարհին, «Մշակով» էլ ահա նրա կեանքի պատկերները տալիս եմ ընթերցող հասարակութեան։

Հանգուցեալ Րաֆֆի—Յակոբ Մէլիք-Յակոբեանցը ծնվել է 1835 թւականին Սալմաստի հայաբնակ Փայաջուկ գիւղում։ Նրա հայրը, Մէլիք Միրզա-բէգը՝ մի համեստ վաճառական էր իր ժամանակի առևտրական շրջանում, այնպէս որ նա մի լաւ հռչակ էր ստացել Սալմաստում, Խօյում, Ուրմիում, Թաւրիզում, և Թիֆլիսում։ Նա Փայաջուկ գիւղի ժառանգական Մէլիքն էր, ինքը և իր եղբայր Մէլիք Սարգիսը հերթով վարում էին այդ պաշտօնը։

Սալմաստի հայ ծերունիների պատմելով՝ այդ ընտանիքը շատ վաղուց բնակված է Փայաջուկում ունենալով մելիքութեան իրաւունք նոյն գիւղի վրա։ Մինչև օրս էլ այդ արտօնութիւնը պատկանում է նոյն ընտանիքից եղած շառաւիղներին։ Մելիք Միրզա-բէգի ընտանիքը կազմում էին՝ նրա պատկառելի կինը, ինը աղջիկներ և չորս որդիներ, որոնցից մեծը Րաֆֆի—Յակոբն էր, որին այնպիսի տաղանդ էր տուած, որ մի օր նա իր գրուածքներով մի մեծ յեղափոխութիւն պիտի ձգէր հայ գրական աշխարհում։

Ծերունի Մելիք-Միրզան, որին ես անձամբ տեսել և խօսակից եմ եղել, մի խիստ համակրելի, նահապետական մարդ էր, բնութիւնից օժտված գեղեցիկ յատկութիւններով։ Նա թէև կրթված չէր, բայց կրթութեանն էլ ատողներից չէր։ Մելիք-Միրզան Թիֆլիս գնալով, ծանօթացել էր այնտեղի հայ և ռուս դպրոցների հետ, որոնք լաւ տպաւորութիւն էին թողել նրա վրա. գառնալով Սալմաստ միշտ խօսում և աշխատում էր հայ գիւղերում դպրոցներ բանալու համար։ Նրա համեստ և սիրալիր հիւրասիրութեանը սահման չը կար։ Նրա տունը համարեա թէ գիւղական հիւրանոց էր այն ամեն օտարական հայի համար, որ մուտ գործէր Սալմաստ։ Ատրպատականի թեմա-

կալներից շատերը ամիսներով հիւրասիրվել են նրա տան մէջ։ Նոյն իսկ Խրիմեան Հայրիկը (այժմեան Վեհափառ Կաթուղիկոսը) 1861 թուականին Ատրպատական գալով՝ երբ Սալմաստ ժամանեց, նրա տան մէջ հիւրասիրվեց։ Մի խօսքով նրա սեղանը միշտ բաց էր Աստուծոյ հիւրի առաջ։ Մելիք-Միրզան իր գիւղական տունը և ընտանիքը կառավարելու համար պահում էր բազմաթիւ կաթնատու և մշակութեան օգտակար անասուններ և ձիեր։ Նա մշակում էր իր արտերը, պարտէզները և խնամք էր տանում իր ջրաղացների վրա։ Նրա տան մի կողմը՝ հայ գիւղացիական էր, իսկ միւս կողմը արիստոկրատիական ընդունարան՝ լաւ կահաւորած, որպէս քաղաքի ճաշակաւոր տուն։ Նա թէ հայ գիւղացի էր՝ արօրն ու մաճը ձեռքին, թէ վաճառական էր՝ առևտրական գործերով զբաղված։ Պէտք է աւելացնեմ, որ նրա տունը միևնոյն ժամանակ գիւղական հաշտարար դատարան էր՝ գիւղացիների վէճերը լուծելու համար։

Թէ Մելիք-Միրզայի և թէ սալմաստեցի բազմաթիւ հայ վաճառականների առևտրական գլխաւոր պարապմունքն էր շիլայ պատրաստել իրանց գիւղերում։ Դա մի տեսակ բամբակէ հաստ կտաւ էր, որ յետոյ իրանց սեփական հողերում մշակած տօրօնի կարմիր գունով ներկել տալով, ահագին քանակութեամբ արտահանում էին Թիֆլիս և վա-

ճառում, որի մէջ ժամանակին մեծամեծ գումարներ շահեցին։

Րաֆֆիի մայրը, որ մինչև օրս էլ կենդանի է, մի խիստ քաղաքավարի և բարեպաշտ կին է։ Նրա խնամքներով էր կառավարվում Րաֆֆիի Հայրենի օջախը, որ ծխում էր գիւղական լիառատ բարիքների մէջ։ Եթէ Մէլիք-Միրզան տան արտաքին գործերն էր կարգադրում, ոըպէս այր մարդ, տան ներքին գործերն էլ նրա տնարար կինն էր կարգի բերում։ Օր չէր անցնի, որ նրանց տանը մի քանի հիւրեր չը լինէին։ Օր չէր լինի, որ մի քանի չքաւորներ և թշուառներ չը կերակրվէին նրանց տան թոնրից դուրս եկած թաժայ հացից, կաթն ու թանապուրից, կամ ինչպէս իրանք էին ասում Աստուծու տուածից։ Ահա մի այդպիսի շէն տանից էր Րաֆֆին։

Այժմ դառնում եմ դէպի Րաֆֆիի մանկութիւնը։

Փայաջուկի գիւղական դպրոցում եղել է մի Վանեցի հայ ուսուցիչ, որի մօտ գնում էին գիւղի առաջաւոր մարդկանց որդիքը մի քիչ հայերէն սովորելու, այն էլ գրաբառ՝ ութ կանոն Սաղմոսի Աւետարանի և խրթնալեզու Նարեկի վրա։ Եղել է և արհեստ, այսինքն քերականութիւն, այն էլ կամաւոր, իսկ միւսները պարտադիր են եղել. յիսունական թւականներում դրանից աւելի էլ չէր կարելի սպասել։ Գրաբառ լեզուն և տիրացու

վարժապետները այդ դարաշրջանում իրանց ճիրանների մէջ էին պահում ժամանակի դպրոցները։ Այդ դպրոցի վարժապետը անուանի է եղել նրանով, որ «գաւազանաւ երկաթեաւ» չէ վարվել իր աշակերտների հետ,—այլ միայն ապտակահարութեամբ։

Ահա այդ դպրոցումն էր առել Րաֆֆին իր նախնական ուսումը։ Րաֆֆին ինձ պատմել էր, որ ինքն էլ մի քանի անգամներ յանդիմանութեան ապտակներ ստացել էր իր ուսուցչից դասերի համար, որովհետև նրանք չափազանց դժուար էին։ Բայց ինքը միւս աշակերտների պէս չէր փախել դպրոցից, ընդհակառակը մի քանի անգամ էլ ինքն է գոռացել իր վարժապետի վրա և դիմադրել, երբ նա իր ընկերակիցներին տեսել է սոսկալի ապտակահարութեան տակ։ «Դու ինչու ես խառնվում, Յակոբ, երբ ես իմ աշակերտներին ապտակում եմ, ասել է ուսուցիչը, հօ քեզ չեմ պատժում»։—Միևնոյն է պատասխանել է պատանի Րաֆֆին, մի օր էլ ինձ այդ օրին կը գցես։

Րաֆֆին իր մանկութեան օրերում եղել է շատ յանդուգն և շատ սրամիտ։ Գիւղական դըպրոցից տուն վերադառնալով, նա երբէք հանգիստ չէր մնում։ Ինձ պատմեցին, որ բացի իր համար յատուկ մանկական խաղեր և զուարճութիւններ որոնելուց, նա կը ստիպէր իր պառաւ տատին և

մօրը մանաւանդ ձմեռվայ երկար գիշերներում, որ շարունակ հրէշների գրոյցներ, կախարդական հըմայքներ, առասպելներ և հէքիաթներ պատմեն և ինքն էլ կը լսէր ականջները լարած։ Րաֆֆին իր մանուկ ժամանակից սիրել է հէքիաթներ, հին զրոյցներ, դիւական և ճիւաղական արշաւանքների պատմութիւններ լսելը, որոնցով էլ նա իր միտքը սրել է։ Մանուկ Րաֆֆին իրանց տան հիւրերին էլ շատ անգամ ուկնդիր կը լինէր նրանց խօսակցութիւնը լսելու համար և երկար նրանց կը նայէր, նկատելու համար թէ նրանք ինչ տիպեր ունեն, որպէս զի նրանց նկարէ թղթի վրա։ Թէև անհեթեթ. բայց վերջապէս նա գծագրում էր մի դէմք, որքան որ մի մանուկ կարող էր նկարել և վերջացնելով իր գծագրածը ցոյց կը տար ամեն մի հանդիպողին։

Ով որ մօտից ճանաչել է Րաֆֆիին, նա անշուշտ նկատած կը լինի, որ նա նկարչութեան ձիրք և ճաշակ ունէր։ Րաֆֆին իր այդ ճաշակն առաջ տանելով, մի ժամանակ գեղեցիկ կերպով նկարում էր մարդկանց պատկերներ, ծաղիկներ, աշխարհագրական քարտէզներ և այլն։ Մասնաւոր սէր էլ ունէր հրացան գործածելու և ձի հեծնելու վրա որ սովորել էր հէնց իրանց տանը և իրանց գիւղում։ Կարդալու և սովորելու մէջ այնքան յաջողակ է եղել Րաֆֆին, որ թէ իր ծնողներին

և թէ իր ուսուցչին զարմացրել է։

Նրա հայրը շարունակ նկատելով, որ իր Անդրանիկ որդի Յակոբի մէջ մի մշտավառ կրակ կայ դէպի ուսումն ու կրթութիւնը, մի օր նրան ասում է. «Յակոբ մեր այս Փայաջուկի դպրոցից բան չի դուրս գայ, արի քեզ հետս Թիֆլիս տանեմ, այնտեղ լաւ դպրոցներ կան, թէ լաւ հայերէն կը սովորես, թէ ռուսերէն և թէ առուտուր, որ մեզ շատ պէտք է»։ Պատանի Րաֆֆին, որ արդէն Տէր-Թոդիկեան տաժանակիր դպրոցը հազիւ թէ աւարտելով՝ այնտեղից հեռացել էր, այլ ևս իր հօր օձիքը բաց չը թողեց, շարունակ ստիպելով նրան, որ մի օր առաջ Թիֆլիս գնան։

Րաֆֆին, որպէս ուշիմ պատանի, սկսել էր թէ իր հօր գործերի մէջ պիտանի լինել և թէ իրանց գիւղացիական-մշակական գործերում օգտակար լինել, այնպէս որ նրա ընտանիքի անդամները մի առանձին համակրական հայեացքով էին նայում նրա վրա։ Ամբողջ ընտանիքի աչքը Րաֆֆիի վրա էր, որպէս իր հօր արժանաւոր յաջորդի, իսկ Մելիք-Միրզան էլ շարունակ ասում էր, թէ «Իմ Յակոբի համար ողջ Սալմաստում չը կայ»։

Վերջապէս դրանից մի կարճ ժամանակ յետոյ 16 տարեկան Րաֆֆին արդէն Թիֆլիսումն էր։ Նա մի քանի տարիներ մնալով Թիֆլիսում իր ուսման ծարաւին յագուրդ էր տալիս, հայերէն լեզուն սովորելով

Բէլախեան Կարապետ վարժապետից, որն այն ժամանակ Թիֆլիսում մեծ հռչակ ունէր, որպէս հայկաբան, իսկ ռուսերէնը և ուրիշ առարկաները նա սովորում էր Թիֆլիսի գիմնազիայում, որպէս պատրաստութիւն բարձրագոյն ուսում ստանալու համար։ Բայց այս վերջինը տեղի չունեցաւ, որովհետև հազիւ թէ նա գիմնազիան աւարտել էր, որ նրա ծնողները թախանձագին խնդրել էին նրանից, որ վերադառնայ Սալմաստ և ձեռք առնէ իրանց տան առևտրական գործերի ղեկը, նկատել տալով, որ նրա հայր Մէլիք-Միրզան ծերացել է և հիւանդագին դարձել, իսկ նրա եղբայրները անչափահաս են։

Րաֆֆին թէև ակամայից, բայց վերջապէս 1856-ին համոզվեցաւ վերադառնալ իր ծննդավայրը—Փայաջուկ, իր 21 տարեկան հասակում։

Ես Րաֆֆիի գործունէութեան շրջանը բաժանել եմ 3 շրջանների։ Առաջինը՝ 1858-ից 68. երկրորդ շրջանը՝ 1868-ից—78, իսկ երրորդ շրջանը՝ 1878-ից մինչև 1888 թուականը։

Րաֆֆին Սալմաստում սկսել է գործել թէ որպէս գրագէտ և թէ որպէս առևտրական մարդ, այլ և թղթակցելով այն ժամանակի պարբերական հայ օրագիրներին։ Մի կողմից էլ նա նիւթեր էր հաւաքում իր ապագայ հեղինակութիւնների համար, իր եռուն մտքերը լոյս աշխարհ բերելու

համար։ Թիֆլիսի կեանքը նիստն ու կացը և ստացած կրթութիւնը նրանում առաջ էին բերել վարքի ու բարքի յեղափոխութիւն, այնպէս որ այլ ևս Սալմաստի գիւղական կեանքը նրան դուր չէր գալիս։ Նա փոփոխութեան ենթարկեց իրանց տան ապրուստի և հագուստի ձևերը, եւրոպական եղանակով կահաւորեց իր պարապմունքի սենեակը, որ մինչ օրս էլ կայ։ Այդ սենեակում դասաւորեց այն բազմաթիւ գրքերը, որ բերել էր իր հետ Թիֆլիսից, թող որ հետզհետէ էլ բերել էր տալիս Պոլսից՝ թէ նոյն քաղաքում, թէ Զմիւռնիայում և թէ Մխիթարեան հայերի ձեռքով լոյս տեսած ուսումնական և կարևոր գրքեր, որոնցով նա մի ճոխ գրադարան կազմեց և սկսեց ընթերցասիրել նրանց։

Երիտասարդ Րաֆֆին իր տան գործերը կարգի բերելուց յետոյ, սկսեց զանազան դպրոցների և հասարակական օգտակար հիմնարկութիւնների ծրագիրներ կազմել Սալմաստի մի քանի հայաբնակ գիւղերի համար և պահանջում էր, որ դրանք անյապաղ գործադրվեն։ Սակայն նա խորհրդակիցներ և օգնականներ չունենալով, (ունենալու համար չէր մտածում), ուզում էր միայնակ գործել բացարձակ իրաւունքներով։ Յիշեալ ծրագիրները առաջացնելու համար հարկաւոր էր երկար համբերութիւն և ժողովրդականութիւն՝ մի բան, որ պա-

կասում էր երիտասարդ և անփորձ Րաֆֆիին։ Բացի այդ, նա սկսել էր ազդեցութիւն բանեցնել իր շրջապատողների և հայ առևտրական շրջանի մարդկանց վրա, նախատելով նրանց գիւղական շատ հասարակ կեանքը և շատ անգամ էլ նրանց երեսն ի վեր տալով նրանց չափազանց շահասիրութիւնը։ Մըտրակելով գիւղական համայնքների ձախ ու ծուռ կողմերը, նրան համակրող փոքրամասնութիւնն էլ փոքր առ փոքր նրանից հեռացաւ։ Իր հօրը և ազգականների խորհրդին էլ չէր լսում այդ դէպքում. «Ձեր խառնվելու գործը չէ» ասում էր նա, բնաւ միտ չը դնելով, որ Սալմաստի գիւղերի համար դեռ այդպիսի ծրագիրներ և հրապարակախօսութիւնները վաղաժամանակ էին։ Հէնց դրանցից էլ առաջացաւ այն մեծ թշնամութիւնը, որ ինչպէս պիտի տեսնէ ընթերցողը հետևեալ գլուխներում։ Րաֆֆիի ամբողջ առևտրական գիւղական ահագին տունը և կարողութիւնը քարուքանդ արեց, ուստի և նրա կազմած բոլոր կրթական ծրագիրներն էլ, ընդունելութիւն չը գտնելով, իսպառ ջուրն ընկան։ Ո՞վ կարող է ասել, որ Րաֆֆիի առաջարկութիւնները գեղեցիկ և օգտակար չէին, բայց սխալը նրա մէջն է, որ նա վիրաւորական լեզու գործածելով՝ չը կարողացաւ նահապետական գիւղացիներին գրաւել։

Տեսնելով Սալմաստի հայ հասարակութեան և նոյն իսկ իր ազգականների սառն և անտարբեր վերաբերմունքը դէպի իր ազգօգուտ առաջարկութիւնները և իր անձը, Րաֆֆին սրտի խորին ցաւով թողեց այդ բոլորը և այնուհետև ազգային հրապարակից քաշվելով՝ անձնատուր եղաւ իր գրական և առևտրական գործերին։

Այժմ տեսնենք, թէ նա այս առաջին շրջանում ինչպէս է գործում որպէս գրական մարդ և որոնք են այն աղբիւրները, որոնց դիմել է նա, որպէս նիւթ իր ապագայ գրուածքներից շատերի և գլխաւորապէս «Կայծերի» համար։ Պէտք է ասած, որ գրեթէ ընդմիշտ Րաֆֆիի մտադաղափարն էր Թիւրքահայաստանը. նա շարունակ խօսում և հետաքրքրվում էր թիւրքահայերի մէջ պատահած զրկանքների, առևանգութիւնների և անարգար անցքերի մասին։ Նրա սրտի մէջ այնպէս վառ էր ազգային զգացմունքների կրակը, որ իր լսածներն ու կարդացածները բաւական չը համարելով, վըճռեց ճանապարհորդել այդ կողմերը և իր սեփական աչքերով տեսնել իր թշուառացած հայրենիքը, պտտել մեր նախնիքների շինած գեղազարդ վանքերը, տեսնել պատմական Եփրատ գետի հրաշալի ափունքները և վերջապէս անձամբ լսել իր անբաղդացած հայրենակիցների ողբն ու կոծը։ Ճիշդ այդ միջոցին էլ մի խումբ հայ ուխտաւորներ

Սալմաստից գնում էին Մուշի ս. Կարապետի վանքը, Րաֆֆին էլ որպէս ուխտաւոր մտաւ նոյն խմբի մէջ և կարաւանով ուղևորվեց դէպի Մուշ։

«Ես ուղևորվեցի, ասում էր Րաֆֆին, ուխտաւորի անունով, որովհետև խենթի տեղ կը դնէին ինձ, եթէ ես պարզապէս ասէի, թէ գնում եմ հայրենիքը ուսումնասիրելու։ Այդ ժամանակներում լաւ լուսաբանված չէր հայրենիք բառը. տէր-Թոդիկները և խալֆաները անէծքի տակ բանադրել էին այդ սրբազան բառը։

ՐԱՖՖԻԻ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Րաֆֆին 1857-ին իր 21 տարեկան հասակում անցնելով Թիւրք-պարսկական սահմանը, մի քանի հայաբնակ գիւղեր և վանքեր տեսնելուց յետոյ, գնաց հասաւ Վան քաղաքը, իջնելով Այգեստանում։ Գնաց տեսաւ և Վարագայ վանքը, ժառանգաւորաց դպրոցը, ծանօթացաւ Խրիմեան Հայրիկի հետ, գովեց նրա արած օգտակար բարեկարգութիւնները Վարագայ վանքում։ Դրանից յետոյ մտնելով նաւակ՝ գնաց Աղթամարի վանքը և այնտեղից դուրս եկաւ յուսահատ և տխուր տպաւորութեան տակ։ Այդ տխուր տպաւորութեան տակ միայնակ և լուիկ գնաց նստեց Բզնունեաց ծովակի ափերի մօտ և զարկելով իր սրտի քնարի լարերին,

ողբաձայն երգեց իր անդրանիկ երգը։

«Ձայն տուր, ո՜վ ծովակ, ինչու լռում ես,
Ողբակից լինել չկամիս դժբաղդիս,
Շարժեցէք զեփիւռ ալիքը վէտ, վէտ,
Խառնեցէք արտասուքս այս ջրերիս հետ։
Հայաստանի մէջ անցքերին վկայ,
Սկզբից մինչ այժմ խնդրեմ ինձ ասա,
Միթէ միշտ այդպէս կը մնայ Հայաստան,
Փշալից անապատ երբեմն Բուրաստան։

Այնուհետև թողնելով Վասպուրականը և նրա շրջակայքը, Րաֆֆին բազմաթիւ վանքեր ու գիւղեր այցելելով՝ գնաց հասաւ Տարօն, տեսաւ Մուշի մշուշապատ դաշտերը և ս. Կարապետի վանքը, որ այնքան հռչակ ունի բարեպաշտ հայերի մէջ։ Րաֆֆին ճիշտ ս. Կարապետի որոշ ուխտի օրն էր հանդիպել վանքը, ուր և տեսել էր հարիւրաւոր ուխտաւորներ, որոնք եկել էին հեռաւոր երկիրներից՝ այր, կին և երեխայ, թափելով վանքը դրամի և այլ և այլ ուխտեալ նուէրների ահագին հեղեղ։ Ինչպէս ճանապարհի վրա հանդիպած վանքերը, այնպէս էլ ս. Կարապետի հարուստ վանքը գոհացուցիչ ազդեցութիւն չէին թողել նրա վրա։ Թէև Րաֆֆին մասամբ հասաւ իր նպատակին, բայց իր ցանկացած վայրերից շատերը չը կարողացաւ աչքից անցկացնել, թողնելով որ մի այլ յարմար ժամանակ այցելէ նրանց։ Այնուամենայնիւ նրա

հոգու թափանցող աչքերը նկատել էին այդ վայրերում և վանքերում անթիւ վիպական անմշակ նիւթեր։ Դժուար էր այդ թւականներին միայնակ ճանապարհորդել այն կողմերը, նոյն իսկ այսօր էլ։ Այն երկարաշար ուխտաւորների կարաւանը, որի հետ Րաֆֆին ուղեւորվել էր Մուշ, վերադառնում էր Սալմաստ, Րաֆֆին էլ ստիպված իր ընկերակիցների հետ նոյն կարաւանով վերադարձաւ իր հայրենիքը, բերելով իր հետ բազմաթիւ զանազան նկարագիրներ, լի տեղագրական և այլ պիտանի ծանօթութիւններով, որոնց հետզհետէ դասաւորելով և մշակելով, ապագայ վիպասանութիւնների և գրուածքների հիմքը դարձան։

Րաֆֆիի գրական գործունէութիւնը սկսվում է 1858-ից և դադարում է 1888 թուականին, երեսուն տարվայ մի շրջան. բայց պէտք է ասել, որ նա միայն այդ շրջանի վերջին տասնամեակումն է բեղմնաւոր՝ իր բազմազան գրուածքներով, ինչպէս կը տեսնենք իր տեղում։ Րաֆֆին թիւրքաց Հայաստանից վերադառնալով Սալմաստ 1858 թւականից սկսեց թղթակցել «Հիւսիսափայլին» և «Արծիւ Վասպուրականին։» Նա սաստիկ հետեւող էր «Հիւսիսափայլին» թէ լեզուին և թէ նրա ուղղութեանը։ Երկու գեղեցիկ և հետաքրքիր գրուածքներ, իր ճանապարհորդական տպաւորութիւններից նա զետեղեց «Հիւսիսափայլում», որոնցից մէկն էր

«Աղթամարայ վանքը». նրանք տպվեցին, որքան յիշում եմ 1860 թւականին։ Նրա գրասեղանի վրա միայն կարելի էր գտնել այն ժամանակի հայ պարբերական թերթերը — «Մասիս». «Մասեաց Աղաւնի» «Հիւսիսափայլ» «Կռունկ» և «Վասպուրական Արծիւ»։ Առաջին անգամն էր, որ ես տեսայ մի պարսկաստանցի հայի, որ իր հայրենասիրական զգացմունքները հաղորդում էր օրագրներին, որպէս թղթակից, որովհետև այդ թուականներին ամբողջ Պարսկաստանի հայերի մէջ ոչ միայն ուսման և ուսումնականի, այլ և լրագիր ստացողի սով և սնանկութիւն կար։

Րաֆֆին աւելի քան ընթերցասէր էր. Նրա հարուստ գրադարանը, հետզհետէ ստացած ռուս և հայ թերթերը և իր գրելիքները այնպէս էին զբաղեցնում նրան, որ շատ անգամ նա շաբաթներով տանից դուրս չէր գալիս։ Բնաւորութեամբ արդէն մելամաղձոտ, նա հազիւ թէ մասնակցում էր գիւղական զբօսանքներին և հանդէսներին. Նա յարգում էր ծերերին և նրանցից էր ձեռք բերում հարց ու փորձով, թէ ինչեր են անցել հին ժամանակներում։ Երբեմն էլ գնում էր նա Սավրա գիւղը, որտեղից էլ նիւթեր էր հաւաքում «Խաչագողի Յիշատակարանը» կազմելու համար։ Րաֆֆին սիրում էր հայկական երգերը, մանաւանդ «Մայր Արաքսին», այս վսեմ բանաստեղծութիւնը

նա շատ իրաւամբ անուանում էր հայոց երգերի թագուհին։

Րաֆֆիի հեղինակութիւններից այդ միջոցին գրեթէ պատրաստ էին նրա գրասեղանի վրա բազմահատոր «Փունջերը», «Խաչագողի Յիշատակարանը», «Կայծերը», «Սալբին» և «Խլվլիկը»։ Վերջին երկուսը մնում են մինչ օրս անտիպ։ «Խլվլիկը», որ մի ստուար աշխատութիւն է, իր չքաւորութեան օրերում գրաւ է դրել և գտնվում է իր պարտապանի ձեռքում։

Րաֆֆին սկզբում սիրահար լինելով քնարին և բանաստեղծական ճկուն ու համրած տողերին, այդ ուղղութեամբ էլ առաջ էր տանում «Փունջերի» հատորները։ Ս. Նազարեանցի ճառախօսութիւնները, Կիկերոնի թարգմանութիւնները, «Հանդէս Նոր Հայախօսութեան» երկու հատորները, Նալբանդեանցի գեղեցիկ գրուածքներն ու նրա թարգմանած «Թափառական Հրէայի» I հատորը մի մի ուղեցոյց եղան Րաֆֆիին, որոնցով էլ նա իր աշխարհաբառը հարթեց։

Այժմ տեղն է, որ նրա կեանքում տեղի ունեցած մի քանի փոքր ճանապարհորդութիւնները, այլ և մի քանի ուսումնական խօսակցութիւնները նկարագրեմ, որոնց ես էլ ներկայ եմ եղել։

Սալմաստումն ենք։ Մի օր Րաֆֆին ինձ ասաց. Ես արդէն ձանձրացել եմ տանը միայնակ

նստելուց և որոշել եմ այս առաւօտ ձիով մի զբօսանք կատարել ձեզ հետ. մի այլ բարեկամ ընկեր էլ ունենք, արդէն ձիերը պատրաստ են։ Դուք գիտէք, ասաց նա, որ Ալի աղա Շիկակը, որ մեր կողմերի քիւրդ վրանաբնակների ցեղապետն է, ինձ հետ բարեկամ է. գնանք նրա այժմեան կացարանը—Կաշկավիս, որ մի օդասուն և զուարճալի ձորակ է գեղեցիկ տեսարաններով. այստեղից հազիւ, թէ 20 վերստ լինի. սա մի փոքրիկ ձիարշաւ է, գնանք և մեր թթված կեանքին մի փոփոխութիւն տանք։ Մենք կէսօրից առաջ այնտեղ կը լինենք»։

Մենք ուղևորվելով Սալմաստից դէպի արևմուտք և կտրելով տափարակ դաշտագետինը, որի վրա փռված են բազմաթիւ գիւղեր, այնուհետև աստիճանաբար բարձրանալով սարահարթի վրա, մօտեցանք Հախվերան հայաբնակ գիւղին, որ մօտ է քրդաբնակ գիւղերին։ Մենք պէտք է անցնէինք այդ գիւղի մօտով։ Աւելի առաջ գնալով, մենք լսեցինք մի հրաշալի ձայն, մի խիստ ախորժելի երգի գեղգեղանք, մի տեսակ քրդախառն հայերէնով։ Երգողը Հախվերան գիւղի ծերունի տանուտէրն էր, որ իր սիրուն եզները գովելով կըլկլացնում էր իր սիրուն «լէ. լէ»-ները, զբաղված էր դաշտային մշակութիւնով։ Նա մի բարձրահասակ, աշխոյժով լի ծերունի—երիտասարդ էր, կրում էր իր ուսերի վրա մի հրացան, որը ցոյց էր տա-

լիս, որ նա պատրաստ էր ինքնապաշտպանութեան համար։ Դժնդակ գիւղական վարուցանը, տօթակէզ արևը, անընդհատ թշուառութիւնները չէին կարողացել մեռցնել նրա մէջ կորովն ու կենդանութիւնը։ Երբ մենք մօտենալով նրա աչքովն ընկանք, նա իր արօրը կանգնեցրեց և լռեց երգելուց։ Նա ճանաչեց Րաֆֆիին. երկու բարեկամները հեռուից իրար նայեցին և զուցէ սրտով էլ իրար հետ խօսում էին։

«Ես քեզ ճաշնասեմ Մէլիք Միրզաի լաճ», խօսեց հեռուից ծերունին, միևնոյն կերպով էլ պատասխանեց Րաֆֆին։ Իսկ ծերունու հրապուրիչ գիւղական երգի բովանդակութիւնը, որ ես արձանագրելով պահել եմ մինչ օրս, մօտաւորապէս հետևեալ կերպով էր կազմված։

Ժիր եզերըս առաջ տարէք արօրը,
Արտը կէս է, դեռ չենք հերկել բոլորը։
Անձրև կը գայ կը կանաչեն արտերըս,
Շարժվեցէք, շատ ու շատ են դարդերըս։
Նախորդ հունձըս քուրդը տարաւ, կուլ տուեց,
Կեր ու գարի, յարդ ու ցորեն չը թողեց։
Շուտով կը գան աշուն, ձմեռ, բուք, բորան,
Սով կը յայտնէ անբաղդացած Հախվերան,
Դէհ քաշեցէք, առաջ տանենք վարուցան,
Տէրն է միայն իմ արտերիս պահապան։
Իրիկվան դէմ ձեզ կարձակեմ, կեր կը տամ,
Դէհ վար արէք, ձեր ոտներին ես ղուրբան։
Լէ, լէ, լէ, լէ, լօ, լօ, լօ, լօ, (ամեն տան վերջում։)

Րաֆֆին ինձ ասաց, որ կարժէ ծանօթանալ այդ քաջ գիւղականի հետ. նա շատ անգամ կռուի բռնվելով քուրդերի հետ՝ քաջի պէս դիմադրել և նրանցից մի քանիսին վիրաւորել է, հէնց դրա համար էլ այս կողմերի քիւրդերը նրանից պատկառում են։ Եթէ չը լինէր նա՝ վաղուց արդէն Հախվերան գիւղը կը դադարէր գոյութիւն ունենալու ց։ Եկէք, որ ձեզ էլ նրա հետ ծանօթացնեմ։ Այս գիւղը, ասաց Րաֆֆին, լինելով քուրդերի ճանապարհի վրա, երբ նրանք ձմեռը ոչինչ պաշար չեն գտնում իրանց տներում, յարձակվում են Հախվերանի վրա և թալանում՝ կողոպտում են, որքան ուժ ունեն։ Պատահել է, որ նոյն գիւղի բնակիչները ամբողջ ձմեռը առանց պաշարի են մնացել. այդ քաջ ծերունին է միայն, որ զէնքը ձեռին իբրև հերոս՝ կարողանում է յաղթութեան առաջն առնել։

Երբ մենք բոլորովին մօտեցանք ծերունի երկրագործին՝ արտի մի ծայրում Րաֆֆին սովորական բարևներով ողջունելուց յետոյ ասաց նրան։

Մենք յօժար չենք ծերունի հայր, որ դուք ձեր դաշտային աշխատութիւնը կանգնեցնէք մեր պատճառով. դուք առաջ տարէք ձեր օրհնեալ արտերի գործը. Թող Աստուած ուժ և կարողութիւն տայ ձեզ և ձեր սիրուն եզներին։

—Դուք Աստուծոյ հիւրն էք, սիրելի որդիք.

դուք սոված կը լինիք. արդէն արեւը մեր գլխի վրա է կանգնած, պատասխանեց նահապետական ծերունին։ Վայր իջէք ձիերից. առանց մի բանով ձեզ հիւրասիրելու թոյլ չեմ տայ, որ դուք հեռանաք մեր գիւղի սահմանից։

Մենք թէև քաղաքավարական խօսքերով աշխատեցինք չընդունել նրա պարզ հիւրասիրութիւնը, բայց նա ստիպում էր, որ ընդունենք, և կարծես դիտմամբ երկարացնում էր իր խօսակցութիւնը՝ մի որևէ բանի սպասելով, այս ու այն կողմ նայելով։

Ծերունու արտի միւս ծայրին երևում էին ուռենիներ։ Մենք նկատեցինք, որ մի երիտասարդ գիւղացի գիւղի կողմից գալով, արագ ու մեծ քայլերով գնում էր դէպի դալար ու սիրուն ուռենիները։ Նա իր երկու ձեռներում բռնած ունէր մի մի բան։

—Ա՛յ որդիս եկաւ գիւղից, ասաց ծերունին. նա ինձ համար ճաշ է բերում։ Աստուած սիրէք, մի՛ մերժէք, ինձ հետ մի կտոր բան կերէք։ Գնանք միասին դէպի այն ծառերը, որոնք ես եմ տնկել և մշակել, դրանք ծառայում են ինձ որպէս հովանի տօթից պատսպարվելու համար և որպէս ճաշարան։

Չուզելով ծերունուն սրտաբեկ թողնել, մենք ընդունեցինք և ձիերից վայր իջնելով, գնացինք

նստեցինք ուռենիների ստուերում, ուր նրա որդին էլ արդէն ճաշը տարածել էր կանաչ խոտերի վրա։ Ծերունին պատուիրեց իր որդուն, որ եզներին արձակէ, որպէսզի հանգստանան, և ինքն էլ հսկէ մեր ձիերի վրա։ Ճաշը պարունակում էր ճերմակ լաւաշ հացեր, պանիր, կարագ, քամած մածուն և մի քանի հատ թերխորով հաւկիթներ, իսկ խմելու համար կար մի մեծ փարչով սառն թան, որ դրված էր ծառերի տակից հոսող փոքրիկ աղբիւրի ջրի մէջ։

—Խնդրում եմ, ասեց ծերունին, ախորժակով ուտէք այս գիւղական պարզ ճաշից, օրհնեալ մարդիկ. ձեր նախնիք էլ այսպիսի ուտելիքներով են սնվել։

Ասաց ու խաչակնքեց սեղանը։ Անկարելի է նկարագրել թէ ո՛րպիսի ախորժանքով էինք ուտում նրա անպաճոյճ սեղանից։ Ուտելու միջոցին՝ ծերունին երկարօրէն պատմում էր իրանց գիւղացիների թշուառութեան մասին։

Մենք, ասում էր նա, մեր ունեցածի տէրը չենք. ցանում ենք, մշակում ենք և հնձում, բայց դարձեալ սոված ենք, ապրում ենք դառն ստրկութեան մէջ։ Մի կողմից գիւղատէրն է մեզ կեղեքում, միւս կողմից քուրդն է թալանում։ Ես մի քիչ աւելի ունեմ քան թէ մեր միւս գիւղացիները. եթէ ես իմ ունեցածից տալիս եմ նրանց՝

ես, ընտանիքս և անասուններս զրկված ենք մնում, իսկ եթէ չեմ տալիս՝ նրանց դաժանագին մրմունջներին չեմ կարողանում դիմանալ։ Ես մի քանի անգամ, աւելացրեց ծերունին, ինչպէս գիտէք մեր մի քանի սրտոտ գիւղացիների հետ՝ զէնքը ձեռներիս քիւրդերի դէմ պաշտպանվել ենք և նրանց հարկաւոր դասը տուել ենք. բայց ի՞նչ արած. նրանք շատ են, լաւ զինված, իսկ մենք քիչ ենք, նրանք վրէժ են լուծում։

Մենք զգածված ծերունու խելացի, բայց տըխուր պատմութիւնից՝ մի մի յուսադրական խօսքեր ասացինք, իսկ Րաֆֆին ուղղեց նրան հետևեալ խօսքերը։

—Դուք մի վհատէք, ծերունի հա՛յր. Աստուած մեծ է, ձեր պաշտպանողական արիութիւնները անվարձ չեն մնայ։ Դուք ամուր բռնեցէք ձեր ձեռքում Մովսիսի գաւազանը, հովուի պէս կառավարեցէք ձեր գիւղի փարախը և համբերեցէք։

Լսելով այս խրախուսական խօսքերը՝ ծերունու տխրամած դէմքը մի քիչ զուարթացաւ, և սկսեց խօսքը փոխել։

—Երանի՜ ձեզ, ասաց նա, որ գրոց աշակերտ էք. մենք գիւղացիներս, կոյր ծնվել ենք այս լուսաւոր աշխարհում և կոյր էլ պիտի մեռնենք։ Ես հոգիս կը տայի, եթէ մէկը լինէր, որ իմ միակ երիտասարդ որդուս մի քիչ ուսում սովորեցնէր։

—Վարժարան չունէ՞ք, հարցրինք մենք։

—Ի՞նչ էք խօսում, սիրելի որդիքս, պատասխանեց ծերունին. Հախվերա՛ն ու վարժարա՛ն։

—Իսկ քահանայ ինչպէ՞ս, հարցրեց Րաֆֆին։

—Մեր քահանան վաղուց է, որ մեռել է. մեզ այժմս Սառնա գիւղի Ն... քահանան է մխիթարում. ձմեռը նա գալիս է մեր գիւղը և մնում է մի քանի շաբաթներ, երկար գիշերներում նա մեզ հաւաքում է մի տան մէջ և սկսում է մեզ պատմել մեր նախնեաց գործերից, մեր հայութիւնից և մեր սուրբ հաւատից։ Նա մեզ քաջալերում է, մեզ ամրապնդում է մեր քրիստոնէական կրօնի մէջ։ Նա այնպէս բարի է, ասաց ծերունին, նրապէս քահանայ ողջ Սալմաստում չը կայ. ա՛խ, ես ծառայ եմ նրա օրհնեալ գլխին։

Համակրելի ծերունին թէև գրագէտ չէր, բայց բաւական հասկացող մարդ էր. նա ճանապարհորդել էր Կովկասի կողմերը, գնացել էր մինչև Երուսաղէմ։ Երբ ճաշը վերջացաւ, մենք ոտքի կանգնելով շնորհակալութիւն յայտնեցինք, իսկ Րաֆֆին ասաց մօտաւորապէս հետևեալը։

—Թող հայր Աբրահամու սեղանի նման լիառատ մնայ քո սեղանը և քո ցորենի ու պաշարի շտեմարանները։ Պատկառելի հա՛յր, մենք քեզ չենք մոռանայ։ Ես բարեկամ եմ ցեղապետ Ալի աղայի հետ. այժմ էլ հէնց ուղղակի գնում եմ նրա վրա-

նը. ես նրանից կը խնդրեմ, որ իր հովանաւորութիւնը տարածէ ձեր գիւղի վրա և յոյս ունեմ, որ այլևս քրդական անախորժութիւններ չեն պատահի ձեզ հետ։

Շնորհակալ եմ, ասաց նա. բայց սևին սապոնն ի՞նչ անէ, խևին խրատն ի՞նչ անէ։

Այնուհետև մենք բաժանվելով ձիերը հեծնելու վրա էինք, երբ ծերունին ու Րաֆֆին մի կողմ քաշվելով երկար խօսում էին։ Ի՞նչ էին խօսում նրանք, այդ ես չը գիտեմ. միայն վերջին խօսքերը որ ես լսեցի, այն էր, որ Րաֆֆին ի նշան բարեկամութեան խոստացաւ մի հրացան ուղարկել ծերունուն։

Հախվերանից երկու ժամ ճանապարհ գնալով, մենք հասանք Կաշկավիսի ձորակը, ուր մեր առաջ բացվեց մի հիասքանչ տեսարան։ Այդ ձորակի երկարութեամբ կարկաչաձայն անցնում է Զօլա գետը, որի մի ընդարձակ եզերքում Ալի աղա Շիկակը իր բնակութեան տեղ է յատկացրել, որպէս զովարար ամարանոց։ Զօլայի երկու կողմերում ցից-ցից տնկված էին ցեղապետի, իր բէգերի և իր հետևորդների նահապետական վրանները և եղեգնից հիւսած շրջափակները։ Նրանց առաջ երևում էին բազմաթիւ թանգագին նժոյգներ և ձիեր՝ թամբած կազմ և պատրաստ։ Հարիւրաւոր զինված քրդեր, իրանց երկար նիզակները գետինը խրած,

իրանք անցուդարձ էին անում այս ու այն կողմը, կարծես նրանք պատրաստվում էին մի որևէ արշաւանք գործելու։ Եւ այդպէս էլ էր։

Ալի աղան այդ օրերում, իր քաջարի հեծեալներով մի յարձակում պիտի գործէր դրացի մի ուրիշ քրդական ցեղի վրա, իր վրէժը լուծելու համար։ Սարերից հետզհետէ իջնելով գալիս ստուարացնում էին ցեղակից զինված քրդերի թիւը՝ իրանց ամեհի ձիերի վրա նստած։ Մի կատարեալ զօրաբանակ էր։ Կէս օրից բաւական անցած էր, երբ մենք հասել էինք ձորակը։ Ալի աղան իր վրանից մեզ դիտելով, իր սպասաւորներից մէկին ղրկել էր առաջ, որ գայ մեզ ուղեցոյց լինի մինչև իր վրանը։ Մենք անցանք մի շրջափակի առաջով, որտեղ չորս պառաւ քրդուհիներ նստած՝ շարունակ հաց էին եփում, իրանց առաջ դրած երկաթէ շարժական կասկարայի վրա։ Թխած հացերը իսկոյն խլում, տանում էին քրդերը անհաշիւ, ով ինչքան կամենար։ Միւս կողմից էլ էշերի վրա բարձած ստացվում էին հետզհետէ տոպրակներով ալիւր։ Ո՞րտեղից էին բերում այդ մեծ քանակութեամբ ալիւրը։

Այնուհետև մենք անցանք մի քանի վրանների միջով, ուր Շիկակ ցեղի բէգերն էին նստոտած ծխելով իրանց չիբուխները։ Մենք մտանք վերջին վրանը, որը աւելի ընդարձակ էր և միւսներից աւելի շքեղ։ Այդ վրանում իշխանական փսեմափա-

ռութեամբ նստած էր ցեղապետ Ալի աղան մի քանի բէգերի հետ, որոնք կրում էին իրանց վրա քրդական ամեն տեսակ զէնքեր և մի ինչ-որ խորհրդով էին պարապած։ Քուրդ ցեղապետը մեզ տեսնելով ոտքի կանգնեց և քաղաքավարի կերպով մեզ ընդունելուց յետոյ պատուիրեց, որ մեզ համար ճաշ պատրաստեն։ Րաֆֆին շնորհակալութիւն յայտնելով՝ ասաց որ մենք արդէն ճաշել էինք։

—Գիտեմ ում մօտ էք ճաշել. այդ մասին ինձ լուր բերեցին, ասաց Ալի աղան. ես ճանաչում եմ այդ քաջասիրտ հային, որ ձեզ հիւրասիրել է։

—Ի դէպ, պատասխանեց Րաֆֆին. ես Հախվերան գիւղը պէտք է յանձնարարեմ ձեր բարձր ու հայասէր ուշադրութեանը, որը շատ անգամ յանիրաւի ոտնակոխ է եղել անազնիւ և անարի քիւրդերից, որոնք ձեր ցեղից չեն։

—Շատ ուղիղ է ասաց նա. բայց այսուհետև դուք վստահ եղէք, որ հախվերանցիները ապահով կապրեն, և ոչ ոք այլ ևս չի համարձակվի նրանց ձեռք դիպցնել։

Ալի աղան մօտ 60 տարեկան մի յաղթանդամ և բարձրահասակ մարդ էր։ Նրա դիմագիծը աւելի հայի էր նմանում։ Նա ունէր տասնից աւելի չափահաս և լաւ պատերազմող որդիներ։ Քուրդ իշխանը իր ձեռքի չիբուխը Րաֆֆիին տուեց որ ծխէ. դա մի մեծ յարգանքի նշան է քրդերի մէջ։

—Այդ չիբուխը իր սաթէ թանգագին ամզուկով՝ Բարթուղիմէոս առաքեալի վանքի վանահայր վարդապետն է ինձ նուիրել, ասաց Ալի աղան, որպէս բարեկամական յիշատակ, և կարժէ, որ դուք էլ դրանով ծխէք։

«Վարդապետ» և «Բարդուղիմէոս» բառերը այնպէս մաքուր արտասանեց, որպէս մի հայ։ Հետըզհետէ սպասաւորները ներս բերեցին արծաթէ մատուցարաններով սուրճ և մի քիչ յետոյ թէյ, որոնցից յետոյ սկսվեցին զանազան խօսակցութիւններ, որոնք մի ժամից աւելի տևեցին։ Րաֆֆին նկատելով, որ օրը տարաժամում է՝ ոտքի կանգնելով շնորհակալութիւն յայտնեց Ալի աղային նրա արած սիրալիր ընդունելութեան համար և իրաւունք խնդրեց հեռանալու ըստ արևելեան սովորութեան։

—Թէև մենք գնում ենք, աւելացրեց Րաֆֆին բայց յայտնում եմ, որ մենք սրտով չենք հեռանում ձեզանից։

Իսկ ցեղապետը որ ուրախ տրամադրութեան տակ էր՝ հետևեալ կերպով պատասխանեց։

—Թէ դուք և թէ ձեր ընկերակից ճանապարհորդները իմ հիւրերս էք մինչև վաղը. թոյլ չեմ տայ, որ հեռանաք։ Ես այս գիշեր ձեր պատուի համար քրդական երգողների և նուագածուների մի խումբ բերել կը տամ, որ դուք զուարճանաք,

և գիտեմ էլ, որ դուք կը ցանկանայիք դրան։ Իսկ վաղն էլ, աւելացրեց ցեղապետը, ձեզ համար մի քրդական ձիարշաւ անել կը տամ, որ աւելի էլ գոհ կը մնաք։

Մենք ընդունելով մնացինք, որովհետև խոստացված տեսարանները մեզ համար շատ հետաքրքրական էին։ Երեկոյեան պահուն մենք մի պըտոյտ արինք կանաչազարդ ձորակում։ Ալի աղայի երկու որդիների ընկերակցութեամբ, որտեղ մենք հանդիպեցինք բազմերամ լորամարգիների, կաքաւների և այլ թռչունների, որոնցից էլ հրացանի հարուածներով մենք վայր էինք գցել տասնից աւելի։

Մութն էր արդէն, երբ մենք մեր զբօսանքը վերջացնելով եկանք մտանք Ալի աղայի վրանը։ Մեր ամեն մէկիս ձեռքում կային մի մի հրացան և մի քանի հատ սպանված թռչուններ։ Ալի աղան այդ նկատելով՝ մեզ ուղղեց հետևեալ խօսքերը։

—Հայի հրացանը միայն թռչուններ կարող է սպանել, աւելի ոչինչ։ Լաւ չէ՞ր լինի, որ ձեր այդ հրացանները բարձր գնով վաճառէիք ինձ. գեղեցիկ են, հիանալի։ Հայը Փլայ է (այսինքն մշակ դասից), վրա բերեց ցեղապետը մի կեղծ ժպիտով նա իսկապէս չը գիտէ, թէ հրացանը ինչի՞ համար է հնարված։

Րաֆֆին, ցնցված այդ խօսքերից, այսպէս պատասխանեց։

—Հայը աւելի արժանաւոր կերպով է գործածում իր զէնքը, քան թէ քիւրդը։ Հայը իր անունը և իր հրացանը չէ կեղտոտում կողոպուտի և անարդար մարդասպանութեան համար։ Հայը այն ժամանակ է զէնքի դիմում, իշխան, երբ տեսնում է, որ իր կեանքին սպառնում են և կամ գործադրում է նրան զուարճանալու համար։ Իսկ քիւրդը, հակառակ իր քաջ անուան, վաղուց արդէն իր զէնքի վրա թողել է անարդար արեան բծեր, որ սակայն ցաւալի է։ Այս խօսքերից դուցէ դուք վիրաւորվէք, իշխան, բայց դուք և ձեր ցեղը բացառութիւն էք կազմում. այս իմ նկատողութիւնները այլ և այլ քրդական ցեղերի մասին են, և այս փաստերով կարող եմ հաստատել։

Ալի աղան որ լուռ լսում էր, կարծես զըղջալով իր ասածների վրա՝ այս պատասխանեց.

—Ձեր ասածները հեռու չեն ճշմարտութիւնից. տմարդի դէպքեր շատ են պատահել մերայինների ձեռքով, բայց դրանք ընդհանուր չեն. քիւրդ էլ կայ, քիւրդ էլ կայ։ Բայց, ասացէք խնդրեմ, դուք ո՞րտեղ էք սովորել հրացան արձակելը։ Հայ վաճառական դասը մեր կողմերում ծանօթ չէ բնաւ զէնք գործածելու հետ. որդիքս ինձ պատմեցին, որ դուք երեքդ էլ բաւական յաջողակ կերպով հրացան էք արձակում։

Րաֆֆին պատասխանեց։

—Ես չը գիտեմ, իսկապէս, թէ իմ ընկերները ինչ առիթներով են ծանօթացել հրացանի հետ, իսկ իմ մասին, ես այս կասեմ, որ մանկութիւնից մի առանձին սէր ունէի հրացանի վրա։ Երբ ես 8 տարեկան էի, մի երկար ճիպոտ ունէի ձեռքիս,

նրա մի ծայրը դանակով տաշելով տափակացրեցի, մի մատնաչափ տեղը ծայրում բարձր թողնելով. որպէս յենարան, յետոյ խսիրից կէս մատնաչափ լայն և մի թիզ երկար տաշեղը կամարի նման կլորացնելով՝ նրա մի ծայրը թելով կապում էի ճիպոտի տաշած տեղի մի կողմին, իսկ միւս ծայրը կպցնում էի յենարանին, որտեղ էլ պնդացնում էի խսիրից տաշած մի սլաք գրչածայրի մեծութեամբ։ Երբ մատներովս դիպչում էի կռացած խսիրի կամարին, սլաքը դուրս թռչելով դիպչում էր ճանճին կամ մրջիւնին. այս եղանակով հազարաւոր ճանճեր և մրջիւններ սպանեցի։ Յետոյ նկատելով, որ հասակաւոր մարդիկ հրացան արձակելով թռչուններ են վայր գցում, բայց որ հրացանը ինձ համար անմատչելի է, ինձանում մի այլ միտք ծագեց։ Ես ձեռք բերեցի երկու արշին երկարութեամբ մի եղէգ, որի մէջը դատարկ էր. նա ինձ ծառայում էր որպէս հրացանի փող, իսկ գնդակների տեղ գործ էի ածում սիսեռներ կամ կաւից շինած փոքրիկ կլոր գնդակներ, որ արևումը չորացնելուց յետոյ նրանցից մի քանիսը բերանս էի դնում և փողի մի ծայրն էլ դիպցնում էի բերանիս և փչելով գնդակների փողի միջանցքով հասցնում էի ուղղած նպատակիս։ Այդ եղանակով էլ բաւական փոքրիկ թռչուններ որսացի, որոնք փոքրիկ գնդակների հարուածից թէև չէին մեռնում, բայց շփոթված վայր էին ընկնում, իսկ ես վրա հասնելով բռնում էի նրանց։ Բայց երբ ես բաւական մեծացել էի, հրացան արձակելու սէրն էլ աւելի էր մեծացել ինձանում, ես փոքր առ փոքր ծանօթացայ իսկական հրացանի

հետ, մանաւանդ Կովկասի և այլ տեղերի ճանապարհորդութիւններն էլ ինձ այդ բանի մէջ նպաստեցին և այսօր, ինչպէս տեսնում էք, բաւական վարժված եմ։

—Ճիշտ է, ասաց Ալի աղան,—Կովկասում դուք աւելի ծանօթացած կը լինէք հրացանի հետ. ես լսել եմ, որ հայ ազգը բաւական մեծ թւով քաջ հեծեալներ, աստիճանաւորներ և զօրապետներ ունի կայսերական բանակի մէջ, և հետզհետէ աւելանալու վրա են։ Ռուս ազգը՝ մեծ ազգ է և մեծ կայսրութիւն, մենք միայն այդ կայսրութիւնից ենք վախենում և ակնածում։

Արդէն գիշեր էր. քիւրդերն շատ վաղ են ընթրում։ Ալի աղան պատուիրեց, որ ընթրիքը պատրաստեն։ Այս պատուէրը լսելուն պէս, մի կողմից քիւրդ բէգերը ներս մտնելով, եկան իրանց որոշ տեղերում նստեցին, իսկ միւս կողմից էլ սպասաւորները, մինը միւսի ետեւից ներս բերեցին պարսկական կլոր պղնձէ սինիների (մատուցարան) մէջ դասաւորած ընթրիքը։ Ալին 2 կամ 3 հիւրի առաջ դրեց մի մի սինի և մի խոր ամանով թան, մէջը դրած մի խոշոր փայտէ շերեփ։ Ընթրիքը պարունակում էր, բացի սովորական կաթնեղէնից, և զանազան թռչուններից պատրաստած կերակուրներ։ Ի պատիւ հիւրերի պատրաստված էր և մի մեծ գառը, ամբողջապէս խորոված մի առանձին սինիի

մէջ։ Սպասաւորներից մէկը, նստելով այդ սինիի մօտ, խորոված գառը մի րոպէում իր ձեռքերով պատառոտեց և դնելով գառան պատառները թեփշիների մէջ, բաժանեց սեղանակիցներին։ Քիւրդերը, ինչպէս և բոլոր մահմեդական ազգերը, ճաշի և ընթրիքի միջոցին ոգելից որ և է ըմպելիք չեն գործածում և չեն էլ խօսում։ Ամեն մարդ լուռ և գլուխը թեքած իր սինիի վրա՝ ձեռքով ուտում էր և շերեփով թան խմում, մինչև որ ցեղապետ աղան գլուխը վեր բարձրացնելով, ուղղվեց։ Դա մի նշան էր, որ ընթրիքը վերջացած է, որից յետոյ ամենքն էլ իսկոյն ուղղվեցան։ Ծառաները ձեռք լուալու ջուր բերեցին, յետոյ սուրճ մատուցին, իսկ յետոյ ամեն մի հիւրին տրվեց մի մի երկար չիբուխ ծխելու համար։ Այնուհետև Ալի աղան մի կարճ խօսակցութիւնից յետոյ, սպասաւորներից մէկին հրամայեց, որ նուագածուների խումբը ներս թողնեն, որ գան ու հիւրերի համար մի քիչ նուագեն ու երգեն։

Նահապետական օրկէստրի խումբը ներս մտաւ, բաղկացած չորս քրդերից։ Մէկի ձեռքում կար մի փոքրիկ թմբուկ, երկրորդի ձեռքում մի սրինգ, երրորդի ձեռքում մի ջութակ, իսկ չորրորդը մի կոյր երգիչ էր, որ իր հետ բերում էր մի թառ։ Նրանք շարքով նստեցին մեզ հանդէպ։ Նրանց նուագարանները իրանց հնութեամբ և պարզ ար-

ուեստով հետաքրքիր էին։ Քրդերը ինչպէս իրանց հագուստի, լեզուի, զէնքի և նիստ ու կացի առանձնայատկութիւնները չեն փոփոխել, այնպէս էլ պահպանել են իրանց ազգային հնաւուրց նուագարանների ձևը և հին երգիչների հանգն ու եղանակը։ Ջութակը, քիչ նմանում էր պարսկական քամանչային, բայց նրանից քիչ բաձրր էր և նիհար կազմուածք ունէր։ Նրա լարերը հիւսված էին ոչխարի աղիքներից։ Թմբուկը անարուեստ էր, սրինգը շինված էր եղեգնից, իսկ թառը գրեթէ պարսկականն էր։ Նախ ջութակահարն սկսեց մի մելամաղձոտ ներդաշնակութեամբ վի՜ն, վի՜ն, վի՜ն, վո՜ւ, վո՜ւ, վո՜ւ, յետոյ երեքը միասին, իսկ քիչ յետոյ կոյր երգիչը սկսեց ոգևորված երգել մի քրդական դիւցազներգութիւն խիստ ախորժելի ձայնով։ Երբեմն էլ նա իր ձեռքն էր առնում թառը, որն ածում էր լի հմտութեամբ։

Բնութիւնը թէև կոյր երգչին զրկել էր աչքերից, բայց օժտել էր նրան մի սքանչելի ձայնով, ընդունակ լսելիքով, տալով և նրա մատներին մի զարմանալի դիւրաթեք կարողութիւն։ Կոյրը ի բնէ կոյր ծնված էր, բայց նա իւրացրել էր իր մէջ թէ երգելու և թէ ածելու երաժշտական ընդունակութիւնները։ Մենք երկիւղած լռութեամբ և կախարդված լսում էինք դիւցազնական հին լեգենդան, որը վերցրած էր քրդական հերոսական կեան-

քից։ Երգչի սքանչելի ձայնը, նրա հանգերի պարզ հնչիւնները, նուագարանների ներդաշնակութիւնը, սիրուն գարնան հովիկը, գետի կարկաչահոս ընթացքի անուշ ձայնը, այն էլ վրանի տակ մի ձորակում, մի խօսքով դաշտային վրանաբնակ կեանքը մեզ այնպէս էր հմայել, որ մարդ կարծում էր, թէ գտնվում է մի գիշերային մոգական տեսարանի մէջ։

Երգիչը և նուագածուները յոգնելով դադար առին, որ նորից սկսեն։ Մենք էլ խզելով մեր լռութիւնը, սկսեցինք խօսել և ըստ սովորութեան գովաբանել թէ երգչին և թէ նուագածուներին։ Առիթից օգուտ քաղելով, ես Րաֆֆին ասացի թէ այս դաշտային հանդէսը միտքս բերեց պատմական Որփէոսը և նրա մուզաները, որոնք միասին հանդէս կազմելով, իրանց քնարով և դիւցազնական երգերով հմայում էին իրանց ունկնդիրներին։

—Բայց եթէ լաւ ուշադրութեան առնենք, պատասխանեց Րաֆֆին, այդ քրդական ջութակը պէտք է լինի մեր բամբիռը, որ մեր անմահ Խորենացին յիշատակում է, իսկ երգիչը նոյնն է, ինչ որ եղել են Գողթան երգիչները։ Տեսնո՞ւմ էք, աւելացրեց նա, այս լեռնային բնակիչները ինչպէս անխախտ պահել են իրանց ազգային բոլոր սովորութիւնները։ Պատճառն այն է, որ նրանք, ազատ ապրելով լեռներում գրեթէ ինքնագլուխ չեն են-

թարկվել բռնաբարական ուժերի, դրա համար էլ նրանք խրոխտ են, յարձակողական և տիրապետելու ախորժակով լցված։ Այն ինչ տափարակ երկրներում բնակվողները՝ պաշտպանողական միջոցներ չունենալով, շփվելով զօրեղ ազգերի հետ, իրանց ազգային սովորութիւնները կորցնելով՝ ընդունել են հետզհետէ ուրիշինը։

Րաֆֆին ոգևորված ուզում էր աւելի երկար խօսել, բայց ես նրա խօսքը կտրեցի, նկատել տալով, որ նուագարանն սկսվում է։ Այդ միջոցին նա դիմեց Ալի աղային, խնդրելով, որ երգել տայ իր այն քաջ որդու վրա հիւսված դիւցազներգութիւնը, որ ընկած էր կռուի դաշտում որպէս հերոս։ Ալի աղան թէև դժկամակելով ընդունեց, բայց պատուիրեց, որ անմիջապէս սկսեն։ Լեռնային մուզան քրդական պարզ լեզուով սկսեց երգել քաջ տղամարդի պատերազմական քաջագործութիւնները ոտանաւոր անգերով ջութակի ձայնի ընկերակցութեամբ, այնպէս ոգևորված, այնպէս ներդաշնակ, որ ոչ միայն լսելու արժանի էր, այլ և ամբողջ երգվածը արձանագրելու։ Ահա մի պատառ այդ հովւական—լեռնական երգվածից, որ քիւրդ երգիչները յօրինել են ի պատիւ իրանց ցեղապետ իշխանի որդու։

«Դու չես մեռած, Ահմէդ աղա, քո գործերըդ
շատ մեծ են,

Քանի որ կայ քո որդին, դու կը մնաս միշտ անմոռաց։
Նա կը մեծանայ, ձի կը հեծնէ, ձի կը հեծնէ զէնքը ձեռին,
Եւ կը լուծէ հօր վրէժը, դու կը լինես անմահացած։
Վէրքը կուրծքիդ մեռար, Աճմէդ աղա, պարծանք ցեղիդ։»

Դիւցազնական հիւսուածքի բովանդակութիւնը այնքան երկար էր և այնքան յափշտակիչ, որ անզգալի կերպով տևել էր մինչև ուշ գիշեր, իսկ մենք անշարժ նայում էինք որպէս քարացած մարդիկ և չէինք նկատել, որ որդեկորոյս Ալի աղան վրանից վաղուց դուրս էր գնացել իր հետևորդներով տխուր տպաւորութեան տակ։ Երբ լռեց քրդական խօրը, նրա ծառաներից մէկն ասաց մեզ, որ իշխանը ամբողջապէս չը կարողացաւ լսել այդ տխրալի երգվածը, որ ամեն մի բառում յիշեցնում էր նրան իր սիրելի քաջ որդուն։ Նա վրանից հեռացաւ արտասուքն աչքերում։ Նա երբէք թոյլ չէ տալիս, որ իր ներկայութեանը այդ հիւսուածքը երգեն, այս գիշեր բացառաբար միայն նա ընդունեց, որովհետև դուք խնդրել էիք։ Մի ուրիշ ծառայ էլ ասաց «Այո՛, քաջերը չեն ուզում լսել դառն մրմունջներ և կսկծալից արտայայտութիւններ»։ Մենք հարցնելով իմացանք, որ ցեղապետը

առանձնացել է Ջօլաի եզերքում, վրանից ոչ այնքան հեռու։

—Այս դէպքում, Րաֆֆին ասաց, պէտք է գնալ նրա մօտ և մխիթարել նրան մի քանի քաղաքավարական խօսքերով. որովհետև ես չիմանալով, որ այդ երգուածը այդչափ տխուր տպաւորութիւն պիտի գործէր նրա վրա, ես դրանով առիթ եղայ նրա վշտերի նորոգվելուն։ Մենք դուրս գալով վրանից, գնացինք դէպի գետեզրը, ուր ցեղապետը նստած էր գետնի վրա՝ թիկն տուած մի մեծ քարաժայռի, որպէս մի սպարտացի հսկայ, երեսը դարձրած դէպի գետի ընթացքը, տխուր և մտայոյզ ծխում էր իր չիբուխը։ Նրա թիկնապահները և որդիքը նրանից քիչ հեռու կանգնած էին արձանի պէս։ Նրանք մեզ նշանացի արեցին, որ մօտենանք նրան։ Մենք մօտեցանք։ Երբ նա մեզ տեսաւ, հարցրեց։

—Ինչո՞ւ հանդէսը թողիք եկաք ինձ մօտ։

Րաֆֆին նրան ուղղեց հետևեալ խօսքերը։

—Ես չիմացայ, իշխան, որ ձեր քաջ և աննման որդու վրա յօրինված այն հերոսական երգուածները այդպէս վշտալի ազդեցութիւն պէտք է առաջ բերէին ձեզ վրա, ուստի և եկայ, որ ձեր ներողամտութիւնը խնդրեմ։ Բայց նա աւելի քան արժանի է այդ գեղեցիկ գովասանքին։

—Չը խօսենք, ասաց Ալի աղան տխուր ան-

ցեալի մասին, տեսնում էք, հանդէպի լեռների ետևից ինչպիսի գեղեցկութեամբ է բարձրանում լրումն առած լուսինը, ճշմարիտ որ մազի չափ մեծ է, ինչպէս հրաշալի է, տեսնում էք։

Եւ ճիշտ որ գիշերային արեգակը, փարատելով խաւարը, մի լեռան գագաթի յետևից սկսել էր ցոյց տալ իր լուսաւոր սկաւառակը ամենայն փառահեղութեամբ, ցոլացնելով իր սպիտակագոյն լոյսի ճաճանչները Զօլաի արծաթափայլ ջրերի և փոքր առ փոքր ամբողջ ձորակի տարածութեան վրա։ Մի սքանչելի տեսարան էր այդ։

Լուսնի արտափայլումից ձի, արջառ և ոչխար վաղ արթնանալով իրանց անուշ քնից խրխնջում, բառաչում և մայում էին, որպէս թէ առաւօտ եղած լինէր։ Այս ամենը այնքան գեղեցիկ էր, այնքան հրապուրիչ, որ արժէր առանձին նկարագրութեան։ Հսկայ Ալի աղան, որ կէս թմրած և կէս արթուն էր, դառնալով դէպի Րաֆֆին, ասաց։

—Արդէն կէս գիշերը վաղուց անցել է, դուք հեռու տեղից էք գալիս, յոգնած կը լինիք, հարկաւոր է ձեզ հանգիստ, գնացէք ձեզ համար պատրաստած վրանը քնելու։

Մենք նրան բարի գիշեր մաղթելով, հեռացանք և նրա սպասաւորի առաջնորդութեամբ գնացինք այն վրանը, որի մէջ մեզ համար արևելեան ճաշակով պարզ ու մաքուր անկողիններ էին պատ-

րաստած։ Մենք երկուսս հանգիստ քնեցինք, իսկ Րաֆֆին իր անկողնում նստած, ճրագի աղօտ լուսով մատիտը ձեռքին գրում էր ու գրում։ Ի՞նչ էր գրում նա... ի՞նչով էր հետաքրքրվում...

Վաղ առաւօտը, արևը հազիւ թէ լեռների գագաթներն էր լուսաւորել, որ մենք արթնացանք ձորի մէջ տեղի ունեցած աղմկալից իրարանցումից։ Ալի աղայի որդիներից մէկը՝ գլուխը կորցրածի պէս յանկարծ մտաւ մեր վրանը և նստելով պատուիրեց, որ թէյ բերեն։

—Ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, ինչ-որ յուզված էք երևում, հարցրեց Րաֆֆին։

—Յուզված եմ, այո՛, պատասխանեց իշխանի որդին, հայրս վաղ առաւօտ 400 ձիաւորներով գնաց մեր թշնամի ցեղի հետ ընդհարվելու, որովհետև նրանք յանդգնելով մեր սահմանն անցել են և արդէն սկսել են մեր ցեղի վրանները կողոպտել։ Հէնց այդ լուրը հայրս իմացաւ թէ չէ, իսկոյն դուրս գնաց իր հեծեալներով։ Հայրս բարևներ ղրկեց ձեզ, ներողութիւն խնդրելով, որ չը կարողացաւ այսօր իր խոստումը կատարել, թողնելով նրան մի այլ յարմար ժամանակի։

Ինչպէս տեսնում էք, ձիարշաւի հանդէսը չէր էլ կարող այսօր տեղի ունենալ։ Մի քառորդ ժամից յետոյ մենք ոտքի կանգնելով, պատրաստվեցինք հեռանալու։ Րաֆֆին սրտագին շնորհա-

կալութիւն յայտնեց երիտասարդ քիւրդ իշխանին, որ հաղորդէ իր հօրը նրա արած գեղեցիկ ընդունելութեան համար։ Երբ մնաք բարեաւ ասելով վրանից դուրս եկանք, նկատեցինք, որ ձորակը համարեա թէ դատարկված էր։ Մի քանի տասնեակ ձիաւորներ էին միայն մնացել, ցեղապետի ընտանիքը և վրանները պահպանելու համար։ Լեռների կատարների վրա երևում էին մի քանի քրդեր նիզակները ձեռներին, ոտքով արագ վազում, սլանում էին այս ու այն կողմը որպէս ուրուականներ։ Նրանք շրջանկատ հսկողներ էին Ալի աղայի կողմից՝ թշնամու շարժմունքները նկատելու համար։ Վերջապէս մենք մեր ձիերը հեծնելով, նոյն օրվայ կէսօրին հասանք Փայաջուկ գիւղը։

Սալմաստ գաւառի հայաբնակ գիւղերից մէկն է Փայաջուկը․ ուր մինչև օրս էլ բնակվում է Մելիք Յակոբեանցների ընտանիքը, ինչպէս և մի քանի երևելի հայ վաճառականների ընտանիքներ իրանց առևտրական տներով։ Միւս հայաբնակ և հայաշատ գիւղերից նշանաւորներն են Ղալասարը Հաֆթվանը, Սավրան, Մահլամը և Սառնան։ Սալմաստի տափարակ տարածութեան վրա գոյութիւն ունեցող բազմաթիւ գիւղերի գրեթէ մէջ տեղումն է Դիլման փոքրիկ քաղաքը, որ զուտ պարսիկներով է բնակեցրած։ Այդտեղ է ամբողջ Սալմաստի բազարը, քարվանսարաները, առուտուրի կետրոնը․

դա մի տօնավաճառանոց է։ Այդտեղ են գալիս և ամեն կողմից հաւաքվում Սալմաստի բոլոր հայ և պարսիկ վաճառականները շաբաթը մի կամ երկու որոշ օրեր, գնելու և վաճառելու համար։ Ամեն մի վաճառական Դիլմանի բազարում մի խանութ ունի, որ բացվում է միայն տօնավաճառի օրը. Րաֆֆին էլ ունէր այնտեղ իր յատուկ խանութը, ուր նա զբաղվում էր իր սեփական առուտուրով, որը այդ միջոցին հասել էր իր բարձրութեան մաքսիմումին։ Առևտուրի հետ զուգընթաց Րաֆֆին իր հօր պէս առաջ էր տանում իրանց գիւղի դաշտային և ագարակային գործերը, որոնց սական առևտուրից աւելի էր սիրում.

Ես այստեղ պէտք է ասեմ, որ թէև շատ անգամ շեղվում եմ կենսագրական պայմաններից, սակայն մի առանձին էլ պահանջ կայ բազմակողմանի կերպով ուսումնասիրելու կենսագրեալի ամբողջ կեանքի երևոյթները։ Օրինակ․ ի՞նչպիսի ընտանիքում է սնվել նա, ի՞նչպիսի մանկութիւն և երիտասարդութիւն ունեցել, ի՞նչ գործերով է պարապել, ո՞ւր է գնացել և ի՞նչպիսի մարդկանց հետ յարաբերութեան մէջ է եղել, թէ որպի՞սի դպրոցներում է աւարտել և ի՞նչ գաղափարի տէր էր և այլն։

Մտնենք մի րոպէ Րաֆֆիի վերոյիշեալ խանութը։ Մի կողմում դարսած են հազարաւոր շի-

լաների ծրարները, որոնք նա հետզհետէ գնում է ու վճարում։ Խանութից մշակները շիլաների ծրարները պատռտելով հակեր են պատրաստում։ Խանութում նստած են մի քանի պարսիկ համեստ վաճառականներ, որոնց հետ նա փոխանակագրերի, չէքերի և այլ հաշիւներ է տեսնում։ Երբ հաշւի գրքում արձանագրում է դրամական ելևմուտքը, այնուհետև սկսում է նրանց բացատրել, թէ հէնց սկզբից պարսիկները և հայերը իբրև դրացիներ գրեթէ միշտ լաւ յարաբերութեան մէջ են եղել։

Րաֆֆին նրանց բացատրում է, որ պարսիկները և հայերը իրար համակիր ժողովուրդներ են, բացառութիւնները աննշան են։ Նա խօսում է։ Կիւրոսի, Ջէմշիդի և Քսերքսէսի մեծամեծ գործերից։ Անուշիրավանի բարոյական խրատներից։ Արշակունեաց ժամանակ, ասում էր նա, Արշակ մեծ թագաւորը Պարսկաստանումն էր թագաւորում, իսկ նրա եղբայր Վաղարշակը Հայաստանում, որ այդ ժամանակ պարսկական մի նահանգ էր համարվում և այլն և այլն։ Վերջապէս ուզում եմ ասել, որ Րաֆֆին¯այն տեսակ և այն տիպի մարդկանցից էր, որոնք երբէք յարմար և դիպող րոպէն բաց չեն թողնի. Նա կաշխատէր մի բանով օգնել և օգտվել։ Նա ժամավաճառ լինել երբէք չէր սիրում։

Անուանի հնագէտ և դրամագէտ (Numismate) հայր Կղեմէս վարդապետ Սիբիլեանը, որ Վիեննայի

Մխիթարեաններից էր, 60-ական թուականներից էլ առաջ՝ բնակութիւն էր հաստատել Սավրա գիւղում և շրջելով Պարսկաստանի զանազան կողմերը իբրև հնախոյզ՝ բաւականաչափ հին ձեռագիրներ, հին դրամներ, հին քանդակներ և նկարներ էր հաւաքում։ Նա գիտէր արդէն, որ Րաֆֆին էլ ունէր մի գեղեցիկ հաւաքածու զանազան հին և հետաքրքրական իրեղէններից և շատ անգամ գնում էր ալանց գիտելու։ Այդ երկուսի մէջ բարեկամական յարաբերութիւնը առաջ գնալով նրանք միասին հրատապ վիճաբանութիւն էլ էին անում կաթոլիկ և հայկական եկեղեցիների տարբերութեան վրա։

Մի օր հանգուցեալ Կղեմէս վարդապետի հետ գնացինք Փայաջուկ՝ Րաֆֆիին այցելութիւն։ Երբ մենք ներս մտանք նրա գրասենեակը, առաւօտ էր, բայց նա զբաղված էր գրելով։ Երբ նա մեզ տեսաւ՝ ժպիտը երեսին սկսեց այսպէս խօսել։

—Աստուած օգնական, դուք լաւ էք արել, հայր սուրբ, որ բարեկամիս հետ եկել էք ինձ մօտ, ճշմարիտ, ես ձանձրացել էի մեր գիւղական և առևտրական գործերը վարելուց։ Մի մարդ, որ փոքր ի շատ է ապրել է քաղաքներում, նրա համար գիւղական կեանքը անտանելի է, դուք ինձ մի գեղեցիկ շնորհ էք արել և ամբողջ օրը իմ հիւրերս էք։

—Լաւ, ասաց վարդապետը, բեր տեսնենք նոր ի՞նչ էք գրել, ի՞նչ նոր լրագիրներ էք ստացել և ի՞նչ նոր բաներ էք աւելացրել ձեր հնագիտական հաւաքածուի վրա, որ ինձ աւելի են հետաքրքրում։

Րաֆֆին ոտքի կանգնելով, որտեղից որ էր, բերեց դրեց սեղանի վրա մարդկային մի հին, շատ խոշոր գանգ, նոր հանված հողի տակից, որի երկու ականջատեղերի միջանցքով, անցրել էին մի հաստ երկաթէ ձող՝ խսպառ ժանգոտած։

—Մի քանի օր առաջ, ես փորել էի տալիս մեր տորոնի արտը, ասաց Րաֆֆին, մէկ էլ տեսայ, որ մշակները մի բան նկատելով՝ վրա ընկան և դուրս բերեցին այդ գանգը, ես տեսնելով, որ իր խոշորութեամբ զուրկ չէ հնութիւնից, պահեցի։

—Խոհեմ էք վարվել, պատասխանեց վարդապետը, այդ գանկը կրկնակի նշանակութիւն ունի. մէկ՝ որ դա այժմեան գանգերից տարբերվում է իր խոշորութեամբ և մէկ էլ, այդ երկաթը ցոյց է տալիս, որ այդ մարդը յանցաւոր է եղել, յայտնի չէ թէ երբ, դրան պատժել են երկաթէ տաքացրած շամփուրով։ Ինչպէս տեսնում էք անցրել են նրա ականջներից։

Դրանից յետոյ Րաֆֆին մեզ ցոյց տուեց իր հնագիտական ամբողջ հաւաքածուն, որի մէջ կային հազուագիւտ հին դրամներ, նուրբ քանդակներ,

նկարներ, հին ձեռագիրներ և այլն, որոնք բաւական արժէքաւոր էին։

Հայր Կղէմէսը ձեռագիրներից մէկը թերթելով, լաւ չեմ յիշում, թէ ինչ գիրք էր, նրանում մի կրօնական խնդիր շօշափող նախադասութիւն գտաւ, որի վրա հրաւիրեց Րաֆֆիի ուշադրութիւնը։ Դրա վրա նորից բորբոքվեց նրանց մէջ հաւատաքննութեան խարոյկը և սկսեցին վիճել։ Վարդապետն ասում էր, որ այժմեան հայ եկեղեցու պաշտօնեաները արժանի չեն իրանց կոչման, նրանք ոչնչով չեն օգնում տգէտ ժողովրդին, հոգ չեն տանում, որ նա արթնանայ և կրթվի, նրանք մօտենում են ժողովրդին և եկեղեցուն այն ժամանակ. երբ փող դուրս քաշելու կարիք են զգում։ Նրանք պատարագ են մատուցանում, աւետարան են կարդում, շարականներ են երգում, բայց ոչ իրանք են հասկանում և ոչ ունկնդիր ժողովուրդը։

—Ես մտել եմ Սալմաստի հայ գիւղական եկեղեցիները. ցաւելով պէտք է ասեմ. որ նրանք եկեղեցու չեն նմանում. Աստուծու տաճարները այդպէս անմաքուր և տգեղ չը պէտք է պահվէին։ Եկեղեցու պաշտօնեաները, ասաց վարդապետը, պէտք է իրանց վսեմ, մաքուր և բարձր պահէին և իրանք էլ փոքր ի շատէ կրթված պէտք է լինեն, որպէս զի ժողովուրդը նրանցից պատկառէ։ Ժողովուրդը տարիներով քարոզ չէ լսում։ Աստուածած-

նի և սուրբերի վերաբերութեամբ շատ քիչ բան գիտէ։ Ս. Կուսի պաշտօնը Հայ եկեղեցիներում արժանաւոր կերպով չէ կատարվում, որին մեր խնկելի և հոգեշունչ հարք այնքան հրաշալի շարականներով փառաբանել են։ Հայ ժողովուրդը աղօթքից և եկեղեցուց խիստ հեռու է, որովհետև քահանաները ոչինչ չեն սովորեցրել նրանց։ Եթէ այսպէս շարունակվի ժողովուրդը կուլ կերթայ իր շուրջը թափոր կազմող բողոքականներից, և ես իբրև Հայ վարդապետ, ցաւում եմ շատ։ Էջմիածինը, աւելացրեց վարդապետը, որ կարող է օգնութեան հասնել, միայն սառն հանդիսատես է լինում։

—Ես արդարացնում եմ ձեր ասածները, Հայր սուրբ, և ձեզ հետ էլ համակարծիք եմ, պատասխանեց Րաֆֆին. դուք ասում էք և անցնում, բայց ես ձեզ բաց չեմ թողնի, դուք էլ էք յանցաւոր։ Պէտք է որոնել այդ չարիքի արմատը. դրանք տգիտութեան հետևանքներն են։ Երկաթէ դարերի կապանքներից դեռ չէ սթափվել պարսկահայը, նա դեռ չէ մտել կրթութեան աւազանը։ Էջմիածինը չունի ուսեալ և կարող վարդապետներ, որոնցով կարողանար կրթութեան գործը առաջ տանել և տգէտ ժողովրդին օգնել քարոզներով և բարոյական խրատներով, բայց նա էլ շուտով կը սթափվի, որովհետև Ռուսաստանում արդէն հայերը սկսել

են դպրոցներ հիմնել, գրքեր և լրագիրներ հրատարակել։ Տեսնո՞ւմ էք, շրջապատող հանգամանքներն էլ նպաստում են ժողովրդի առաջ գնալուն։ Ռուսաստանում կրթութեան գործը սկսվել է, իսկ մեզանում ՝ոչ, և ի՞նչ էք կարծում, եթէ Մխիթարեանները Եւրոպայում հաստատված չը լինէին՝ այսպէս ուսումնականներ և լեզուագէտներ կը դառնայի՞ն։ Ո՛չ երբէք։ Դուք յանցանքը փաթաթելով Էջմիածնի շլինքին, ինքներդ էլ ոչ պակաս սառնասրտութեամբ էք նայում այդ ցաւալի երևոյթներին և գուցէ սրտով էլ ծափ էք տալիս։ Դուք ինչո՞ւ չէք օգնում Հայ ժողովրդին անխտիր. արդէն միջոցներ ունէք. դուք օգնում էք միայն այն հային, որ ձեզ մեղայ է գալիս և կաթօլիկ է դառնում, և ներեցէք, որ եթէ ասեմ թէ, ձեզանից շատերը վարակված են լատինականութեան ախտով։ Մեր գալոց սերունդը ձեզ կը դատապարտէ այդ ընթացքի համար։ Մենք չենք մոռանում Մխիթարեանների երախտիքը և նրանց անխոնջ աշխատասիրութիւնները հայկական լեզուի վերաբերութեամբ. նրանք աւելին էլ կարող են անել։ Թող լինեն նրանք կաթօլիկներ, այդ նրանց համոզմունքն է. բայց նրանք իրանց դիմողին էլ պէտք է ազատ թողնեն իր համոզմունքի մէջ։ Թող նրանք չառաջարկեն պապի անսխալականութիւնը և Պետրոսի գլխաւորութիւնը այն նեղն

ընկած հային, որ դիմել է նրանց։ Հարկաւ նա առերես կնդունէ այդ բոլոր առաջարկութիւնները, բայց ոչ ի սրտէ, և դա նման կը լինի ջրում խեղդըվող մարդուն, որի ձեռքը ձկան հանդիպելով, ամուր բռնում է նրան, կարծելով թէ դրանով կազատվի։

Վարդապետի և Րաֆֆիի վիճաբանութիւնը երկար պիտի տևէր, բայց մի հասակաւոր հայ գիւղացի, որ այդ բանակռուի միջոցին եկել նստել էր Րաֆֆի սենեակի մի անկիւնում և լուռ լսում էր, յանկարծ մէջ ընկաւ և իր հետևեալ ծիծաղաշարժ անեկդոտով գրեթէ վերջ դրեց նրանց վառ կրօնական վէճերին։

—Այդ կաթոլիկները, ասեց գիւղացին, ոչ թէ միայն այս աշխարհում, այլ նոյն իսկ արքայութեան մէջ էլ բռնութիւն են գործ դնում իրանց նպատակին հասնելու համար։

—Միթէ կարելի է դա, ասաց վարդապետը, մենք կուզենայինք լսել այդ, թէ ինչպէս է լինում և դուք ո՞րտեղից գիտէք այդ։

—Ուրեմն լսեցէք դրախտի սկանդալը։ Ես իմ պապերից լսել եմ, վրա բերեց գիւղացին, որ մեր սուրբերը և առաքեալները մեռնելուց յետոյ, երբ նրանց հոգիները փոխադրվել են արքայութիւն, նրանց մէջ այնտեղ էլ վէճ է ծագել Պետրոսի գլխաւորութեան վրա, և այդ ծանըր խնդիրը լու-

ծելու համար մի մեծ ժողով են կազմել արքայութեան մեծ պարտիզի մէջ։ Հրաւիրված առաքեալները և սուրբերը հաւաքվելուց յետոյ, Պետրոսն ուզելով հանդիսին նախագահել, ժողովը բացված է հրատարակում։ Սուրբերից ոմանք Պետրոսին կուսակից լինելով ընդունում են, իսկ ոմանք էլ մերժում են, նկատել տալով, որ խնդիրը Պետրոսի գլխաւորութեան վրա լինելով, ինքը նախագահելու իրաւունք չունի և մանաւանդ, որ դեռ Գրիգոր Լուսաւորիչն էլ բացակայ է։ Վերջապէս գալիս է Լուսաւորիչն էլ, նստած մի սպիտակ հազուագիւտ աւանակի վրա, անցնելով պարտիզի ծառուղիի միջով։ Նրա առաջն ընկած երկու սպիտակազգեստ սերովբէները անդադար խնկարկում և հրեշտակային երգերով փառաբանում էին նրան։ Լուսաւորիչը, մօտենալով հանդիսավայրին, սպասաւորները նրա կողքերը մտնելով վայր են իջեցնում։ Լուսաւորիչը նկատում է, որ Պետրոսը ամենից բարձր է բազմել հանդիսում, ինքն էլ գնում ճիշտ նրա կողքին է նստում, որից Պետրոսը վիրաւորվում է։ Վէճը բացվում է. լինում են թեր ու դէմ խօսքեր, բայց ժողովը չէ կարողանում համաձայնութիւն կայացնել, ոմանք այո՛ են ասում և ոմանք ո՛չ և խնդիրը դարձեալ մնում է անորոշ։ Լուսաւորիչը ոտքի կանգնելով եղբայրնե՛ր, ասում է, ես գնում եմ, բայց իմացէք, որ Աստուծու արքայու-

թիւնը ազատ է ամեն տեսակ ոտնձգութիւններից և փառասիրական կապանքներից, ես ձեռքերս լուանում եմ։ Այս ասելով հեռանում է Լուսաւորիչը, նստելով իր աւանակի վրա, գնալով նոյն պատւով և անցնելով նոյն ծառուղիից։ Պետրոսի սպասաւորները նկատելով որ Լուսաւորչի պատճառով իրանց տէրը բաւական վիրաւորանք ստացաւ ուզում են Լուսաւորչից վրէժխնդիր լինել, և նրան ճանապարհ դնելու պատրուակով գնում են նրա յետևից։ Նրանցից մէկը, իր ձեռքում թագցրած է լինում փշերից կապած մի փոքր փունջ, որը անզգալի կերպով դնում է աւանակի պոչի տակը. կենդանին սկսում է աքացիներ տալ, վեր վեր թռչել և վերջապէս իր վրա նստողին վայր է գցում փշերի մէջ։ Լուսաւորչին մի կերպով կանգնեցնում են. և նա մի հայեացք գցելով դէպի աջ ու ձախ, հասկանում է, թէ բանն ինչի մէջն է եղել, ասում է «ախը՛ր էսպէս էք անում է՞, որ մարդ չէ ուզում էս խարաբը ոտ դնէ, էսպէս էք անում, որ Պետրոսի գլխաւորութիւնը չենք ընդունում»։

Տեսնո՞ւմ էք, շարունակեց գիւղացին, թէ մեր գլխին ի՞նչ խաղեր են խաղում կաթօլիկները։

Թէ հայր Կղեմէսը և թէ մենք ամենքս մի կուշտ ծիծաղեցինք միամիտ գիւղացու առասպելական պատմութեան վրա և դրանից յետոյ մենք

թողինք Րաֆֆիին իր գրասեղանի առաջ, իսկ մենք մնաս բարեաւ ասելով հեռացանք։

Մի շաբաթից յետ ես նորից Փայաջուկ գնալով, այցելեցի Րաֆֆիին. Նա սկսել էր մեծ եռանդով սովորել պարսկերէն լեզուն, նպատակ ունենալով պարսից հին պատմական գրքերը հայերէնի թարգմանել։ Այդ առիթով էլ նա ժամերով երկար խօսում էր իր ծանօթ պարսիկ վաճառականների և մօլլաների հետ, աշխատելով լսելով էլ ծանօթանալ նրանց պատմութեան և օրէնքի հետ, և արդէն բաւական տեղեկութիւններ էր ձեռք բերել։ Ես շատ անգամ հանդիպել եմ Րաֆֆիին պարսիկ վաճառականների հետ միասին նստած, որոնք թողնելով իրանց առևտրական հաշիւները խօսում էին իսլամ և քրիստոնէական կրօնքի այս ու այն կէտերի վրա։ Պարսիկներն առհասարակ շատ են յարգում այն հային, որը կարող է կրօնքի մասին բաւականաչափ խօսել։ Այդ կողմից Րաֆֆին շատ էր յարգված պարսիկների երևելիներից, իբրև գործին տեղեակ մարդ։

Այդ միջոցներին պարսիկները Մահլամ գիւղից մի 12 տարեկան հայ աղջիկ էին փախցրել և պնդում էին, թէ նա արդէն մահմեդականութիւն ընդունել է։ Աղջկայ չքաւոր մայրը, դիմելով Մելիք-Յակոբեանցների ընտանիքին, դառնապէս լալիս էր, խնդրելով մի ելք գտնել և աղջկան ազա-

տել։ Երիտասարդ Րաֆֆին, չը դիմանալով թշուառ գեղջկուհու մայրական մրմունջներին, գիշերով միայնակ գնաց Դիլման և մտնելով դէնպետի տունը, երկար վիճելուց յետոյ, աղջիկն անչափահաս համարելով, մի կերպով համոզել էր կրօնապետին և հէնց գիշերը աղջկան իր հետ ետ բերելով՝ յանձնեց իր մօրը։ Պարսկաստանում մի այդպիսի յանդուգն քայլ անելը աւելի քան դժուար է։ Այդպիսի դէպքերում հաւաքական ուժերով պէտք է դիմումներ անել, այն էլ թեմակալների նախաձեռնութեամբ։

Մի կիրակի օր Րաֆֆին իր պարսիկ բարեկամների շրջանից մի տասնեակ պարոնների ճաշի էր հրաւիրել իր պարտէզը. իսկ այդ օրը ես էլ նրա մօտ էի։

Վատ չէր լինի ասաց Րաֆֆին, որ դուք էլ ինձ հետ գայիք մեր պարտէզը, այնտեղ մենք միասին կը ճաշենք և կը խօսենք մեր պարսիկ հիւրերի հետ. նրանց խօսակցութիւնը և դատողութիւնները հետաքրքիր են։

Մեր հայերը շարունակեց, Րաֆֆին, խորշում են նրանց հետ յարաբերութիւն ունենալուց, բայց դա սխալ է պէտք է շփվել նրանց հետ, պէտք է կարծիքներ փոխանակել և մտերմական յարաբերութիւն հաստատել, որովհետև մենք ապրում ենք

նրանց հետ միասին և մանաւանդ որ նրանք են տիրող տարրը։

Րաֆֆիի հետ գնացինք պարտէզը։ Եւ որովհետև պարսիկները հայի ձեռքով պատրաստած կերակուր չեն ուտում, մի պարսիկ խոհարար յատկապէս վարձված էր, որ կերակուրները եփէ և պարսիկ ճաշակով պատրաստէ, Կէսօրից մի ժամ առաջ եկան պարսիկ հրաւիրվածները։ Սովորական բարևներից և մի կարճ խօսակցութիւնից յետոյ ճաշը տարածվեց գետնի վրա և նրանք ուտում էին առանց խօսելու։ Ճաշից յետ սկսվեց սուրճ խմելը և պարսկական ղալիանի ծխումը։ Այդ միջոցին է, որ պարսիկները սիրում են խօսել։

Հրաւիրվածների մէջ անուանի էր Հաջի Փաթալին, որ թէ վաճառական էր, թէ միջնորդ և թէ լաւ օրէնսգէտ պարսկական շարիաթին. Նա Րաֆֆիին ուղղեց հետևեալ խօսքերը։

—Մենք պարսիկներս, քրիստոնեաներին աւելի ենք համակրում՝ քան թէ սիւնիներին, որոնք թէև մահմեդական են, բայց մեզ դաւաճանում են այն ինչ քրիստոնեայ ազգերը խղճահար են, ուղղամիտ և ներողամիտ դէպի միւս կրօնական ազգերը։ Մենք հաւատում ենք, որ Յիսուսը (Հազրաթը Իսան) մեծ մարգարէներից մէկն է և ծնվել է Մարիամից առանց հօր, բայց չը գիտեմ ինչպէս է լինում, որ դուք նրան ընդունում էք Աստուած

կամ Երրորդութեան մի անձն (Սալիսէ), որ մեր օրէնքով անկարելի է Աստուածութեան ընկեր Որդի և կամ այլ անձն յատկացնել, որովհետև Աստուած անտեսանելի, անիմանալի և անմատչելի է և մի է (վահիդ)։ Բացի այդ, դուք, քրիստոնեաներդ, մեր մարգարէի վերաբերութեամբ լռութիւն էք պահում և ոչինչ չէք ասում։ Այդ երկու գըլխաւոր կէտերը մեր և ձեր մէջ շարունակ վէճի առարկայ և խտրոց են դարձել, փափագելի է դրանց մասին ձեր կարծիքը լսել։

Րաֆֆին նրան այսպէս պատասխանեց.

—Ձեր առաջարկածները կրօնական լուրջ և ծանր խնդիրներ են, այնպիսի խնդիրներ, որ մինչև անգամ Աստուածաբանները չեն կարողացել լուծել, բայց ես կասեմ միայն իմ կարծիքը։ Մեր աւետարանը ձեր մարգարէից մօտ 600 տարի առաջ է գրվել, և նրա մէջ որ և է յիշատակութիւն չենք գտնում այդ մասին։ Իսկ գալով Յիսուսի աստուածութեան, այս կասեմ, որ նա ձեր օրէնքով և բոլոր մահմեդական ազգի լեզուներով ընդունված է ասել և գրել Իսա Ռուհ Ուլլահ, այսինքն Յիսուս հոգին Աստուծոյ։ Բացի այդ դուք ընդունում էք, որ սուրբ կոյսը յղացաւ նրան հրեշտակի շունչ տալով և նա ծնվեց առանց հօր։ Արդէն դա մի չը տեսնված հրաշք է։ Իսկ Երրորդութեան համար ես այսպէս կարող եմ ասել. մենք ամենքս էլ տեսնում

ենք ամեն օր, որ արեգակը երկնակամարումն է և միակ մի գունդ է, բայց նա ունի և փայլողութիւն, ունի և ջերմութիւն, որոնք նրանից են բղխում և անբաժան են։ Կրկնում եմ, որ սրանք կրօնական խիստ վերացական խնդիրներ են, որոնց լուծելը իմ կարողութիւնից շատ վեր է։ Սրանց լաւ լուսաբանելու համար հարկաւոր է նախ լաւ ուսումնասիրել աւետարանը և ղուրանը, այլ և երկու կողմերի կրօնական այլ և այլ ծէսերը, գըրուածքներն ու հաւատալիքները, որից յետոյ կարելի լինի խօսել և վիճել։

—Ճիշտ է, ասեց Հաջին, Յիսուսը մեր օրէնքով կոչվում է Ռուհ Ուլլահ, բայց մեծ մարգարէներից շատերին մենք իրանց նշանակութեան համաձայն տուել ենք տիտղոսներ, օրինակ Աբրահամին մենք կոչում ենք Իբրահիմ Խէլիլ ուլլահ, Մովսէսին կոչում ենք Մուսա Քէլիմ ուլլահ և մեր մարգարէին կոչում ենք Մհէմմէդ Ռէսուլ ուլլահ, այսինքն Աբրահամ արդարն Աստուծոյ, Մովսէս աստուածախօս և Մեհէմմէդ առաքեալն Աստուծոյ։ Դրանք տիտղոսներ են, բայց ոչ մի մարգարէ, ոչ մի արարած չէ ծնվել առանց հօր, դա միայն Յիսուսն է, և դրա համար էլ ասվել է հոգին Աստուծոյ, փառաբանել պէտք է նրան. «Հեզրէթը Իսա ալէհիսէլամ, հէզրէթը Մէրիամ

ալէհիսսէլամ». այսինքն ողջոյն լինի մեծ Յիսուսին, ողջոյն լինի մեծ Մարիամին։

Պարսիկները սովորաբար այդպիսի ողջոյնով են արտասանում սրբերի և մարգարէների անունները։

Րաֆֆին շատ էր սիրում ճանապարհորդութիւնը։ Շրջելով շարունակ Գիլման, Խօյ, Ուրմի, Թաւրիզ և Թիֆլիս, թէ իրանց առևտրական գործերին էր վերահասութիւն անում և թէ իր վէպերն էր հետզհետէ ուրուագծում։ 1861 թուականի յունիս ամսին նա վճռեց նորից գնալ Ուրմի։ Ես էլ նրան ընկերացայ։ Մենք գնում էինք կարաւանով, որ բաղկացած էր մի տասնեակ բեռնաբարձ գրաստներից և մի տասնեակ էլ ձիաւոր ճանապարհորդներից։ Դրանց թւումն էին Րաֆֆիի հայ ծառան, մի Խարբերդցի հայ, իմ հայ ծառան. մնացածները պարսիկներ էին։ Սալմաստից հազիւ թէ տասն վերստ հեռացել էինք, երբ մեր ճանապարհի ձախ կողմում սկսեցին երևալ մի շարք ոչ այնքան բարձր լեռներ։

—Այդ լեռներից մէկի վրա է գտնվում այն հնադարան քանդակը, ասաց Րաֆֆին, որի մասին ձեզ պատմել եմ. նա շատ հեռու չէ, գնանք նայելու, արժէ տեսնել։

Մենք ճանապարհից մի քիչ շեղվելով և դէպի վեր բարձրանալով, հեռուից նկատեցինք քանդակը. բայց սկզբում նրա վրա երևում էին միայն

հօրիզօնական հաստ գծեր, իսկ երբ մենք աւելի մօտեցանք պատկերը պարզ երևաց։ Մի ամուր քարաժայռի մի կողքը տաշելով, նրա հարթած երեսում, յայտնի չէ թէ ո՛ր դարում, խիստ վարպետութեամբ քանդակել են մի քանի բաւական խոշոր ձիաւորներ հին դարերի տարազով և զէնքերով։ Պարսիկները այդ լեռան Փիրչաւուշ կամ Շէքիլ դաղի են անուանում, այսինքն պատկերի սար։ Րաֆֆիի կարծիքով այդ քանդակում դուրս բերված հեծեալները կամ պարսիկ կամ հայ իշխաններ էին իսկ ես պնդում էի, որ նրանք մակեդօնացիներ պէտք է լինէին, որովհետև նրանց երեսի տիպը աւելի նմանում էր յունականին։ Րաֆֆին այդ պատկերը նկարագրել է «Կայծերի» I հատորի Բ. գլխում։ Փակագծի մէջ աւելացնում եմ, որ երբ պ. Բէլք և պրօֆէսօր Լէման 1898-ին Պարսկաստան եկան հետազօտութիւններ անելու, ես Թաւրիզում ծանօթանալով նրանց հետ և խօսելով Պարսկաստանում գտնված հնութիւնների մասին՝ այդ հին քանդակի վրա էլ ծանօթութիւն տուի. Նրանք ցանկութիւն յայտնեցին տեսնել և հետազօտել տեղն ու տեղը։ քանի որ Սալմաստից պէտքէ անցնէին Վան գնալու համար։ Այդ խորին հընութիւնը. պատմական մի փշրանք ներկայացնող քանդակը, որին ժամանակի կործանիչ ժանիքները չեն կարողացել խորտակել՝ մարդուն մի առանձին պատ-

կառանք է ազդում։ Բայց ափսոս, որ մենք մի րոպէական ակնարկ տալով բաւականացանք, որովհետև մեր կարաւանը շատ էր հեռացել մեզանից. մենք հազիւ թէ մի քառորդ ժամից կարողացանք հասնել նրան։

Սալմաստի և Ուրմիի միջավայրում գտնվող ճանապարհները բաւականին վտանգաւոր են քրդերի շարունակ կողոպուտների և յարձակմունքների պատճառով։ Մեր ճանապարհի ընկեր Խարբերդցին կարաւանի առջևից էր գնում շարականներ երգելով։ Նա գրեթէ անգիր գիտէր ամբողջ ժամագիրքը և բոլոր շարականները։ Նրա անունը Միրան աղա էր (գուցէ Միհրան). նա ինչ-որ առանձին յանձնարարութիւններով եկել էր Սալմաստ և վերադառնում էր Վան։ Նա լաւ սպառազինված էր, կրելով իր վրա ատրճանակներ, հրացան և մի արծաթապատ սուր, որի երախակալից կախված ոսկէ հուռ փունջը ցոյց էր տալիս, որ նա կառավարչական պաշտօնեայ պէտք է լինէր։ Միրան աղան երբեմն կարաւանից քիչ հեռանալով՝ իր ձին խաղացնում և զանազան հմուտ ձիարշաւներ էր անում, ապա գալիս կանգնում էր մեր կարաւանապետի առաջ, որ մի քաջ պարսիկ էր, նոյնպէս լաւ զինված, և նրան հրահանգներ էր տալիս։

—Դուք ամենքդ, ասում էր Միրան աղան, կարաւանի ետևից և կողքից քայլեցէք, որպէս զի

կարաւանից մի բան չը գողանան, իսկ ես կարաւանի առջևից գնալով եթէ մի որևէ յարձակում պատահի՝ կը դիմադրեմ զէնքի զօրութեամբ, ինչպէս որ պէտք է։ Մանաւանդ։ աւելացրեց Միրան աղան, արևը խոնարհվում է դէպի իր մուտքը. ճիշտ այս միջոցին է, որ աւազակները դուրս գալով իրանց որջերից դիմում են յափշտակութիւններին։

Միրան աղայի անվեհեր խօսքերն այնպէս լաւ տպաւորութիւն թողին ինձ վրա, որ ես Րաֆֆիին ասացի, թէ մեր այս ընկերն ինձ թւում է, որ մի քաջ մարտնչող պէտք է լինի, բայց չը գիտեմ ձեր կարծիքն ինչ է նրա մասին։

—Ո՛չ, պատասխանեց Րաֆֆին, դուք սխալվում էք, խաբվելով նրա խրոխտ խօսքերից. նա այն մարդը չէ, ինչ ուզում է ցոյց տալ։ Դուք լաւ ծանօթ չէք մեր Թուրքահայերի հետ. նրանք մի քանի դարեր շարունակ, որպէս ստրուկ ապրելով Թուրքի և քուրդի հարուածների տակ՝ կորցրել են իրանց էնէրգիան և այրական քաջութիւնը։ Անձնապաշտպանութիւնը նրանց համար մեռած խօսք է. ես այդ բոլորը անձամբ նկատեցի իմ նախորդ ճանապարհորդութեան միջոցին և իբրև փորձ, այս իրիկուն երբ լաւ մթնանայ՝ ես մի անգամ հրացան կարձակեմ, և դուք կը տեսնէք, որ այդ մարդը իր գլուխը կը կորցնէ։

Այս խօսակցութիւնից մի քանի րոպէ յետոյ

մի դէպք պատահեց, որը ինչպէս կը նկատէ ընթերցողը, այդ մարդի վարագոյրը պատռեց, առանց Րաֆֆիի հրացան արձակելուն։

Մեր կարաւանը առաջանալով հասել էր Իլինջէ բուռնի ասված լեռան, որ մեր աջակողմն էր գտանվում, իսկ մեր ձախ կողմի լեռների ետևումն էր Ուրմիի լիճը։ Այդ ձորում դեռ գարունը փռած էր իր կանաչազարդ սփռոցները լայնատարած արօտատեղերի և լեռների լանջքի վրա, փչում էր իրիկվան անուշ հովիկը. ոչխարների բազմաթիւ հօտերը ամբողջ օրն արածելով այդ դալարիքով ճոխ տարածութեան մէջ՝ այժմ վերադառնում էին դէպի իրանց փարախը։ Հազարաւոր թռչուններ, թագնվելով դաշտերի կանաչ խոտութեան տակ, իրանց ուրախ դայլայլիկներով, իրանց երեկոյեան գադարի սիրուն երգերով, կարծես կախարդում էին անցորդներին։ Հովասուն զեփիւռը անցնելով լեռների ծաղկաւէտ փէշերից՝ օդը լցրել էր եթերական անուշահոտութեամբ. մի առանձին կենդանութիւն կար ամբողջ ձորի մէջ, որտեղից մարդ չէր կարողանում անցնել առանց հոգեզմայլութեան։ Արեգակն արդէն իր երեսը թագցրել էր լեռների յետևում, մեր կարաւանը ընթանում էր հանդարտ քայլերով և մենք ուրախ տպաւորութեան տակ էինք։ Յանկարծ մենք լսեցինք մի քանի հրացանի որոտմունք։

Թալան է, թալան, խօսեց մի ձայն։

Դա մեր կարաւանապետի ձայնն էր։ Երեսը սպիներով պատած, իսպառ այլանդակված մի քաջ պարսիկ էր նա, մի ծերացեալ առիւծ, որ եղել էր բազմաթիւ կռիւներում։

Քիւրդերը, ասաց նա, մեր տեսած ոչխարների հօտերից մի քանիսը գրաւելով՝ քշել են դէպի իրանց սամհանը, հովիւները չը կարողանալով իրանց հօտերը պաշտպանել՝ թողել, փախել են. այժմ ահա տեսէք այդ քրդերից մի քանիսն էլ մօտենում են դէպի մեզ, որովհետև մեր կարաւանը մի խւղալի պատառ է նրանց համար։ Քրդի հետ եթէ խիստ չը վարվէս, նա քո գլխի տէրն է. ես չեմ թողնի, որ նրանք մեր կարաւանին մօտենան. ով որ ձեզանից լաւ զինված է՝ թող ինձ հետ գայ։ Այս ասելով՝ հրացանը ձեռքն առաւ և առաջացաւ դէպի քրդերը, որ մի 50 քայլ հեռու էին կանգնած և մեզ դիտում էին։

Րաֆֆին, իր սպասաւորը և մի այլ պարսիկ, որոնք հրացաններ ունէին, հետևեցին կարաւանապետին։ Մեր կարաւանը կանգ առաւ։ Երկու խմբակները իրարու մօտենալով խօսքեր փոխանակեցին։ Քրդերն իսկոյն ճանաչել էին դիմադրող պարսիկին և յայտնեցին միանգամայն, որ իրանք կարաւանի հետ գործ չունէն, միայն ուզում էին իմանալ, թէ ո՛վ է անցնում այդ կողմից։ Մեզ ոչ-

խարներն էին հարկաւոր, ասել էին նրանք. նրանց տէրերից վրէժ լուծելու համար, նրանց գիւղի ոչխարները մեզ սեփականացրինք։ Քիւրդերը փոքր առ փոքր հեռացան և մերոնք վերադարձան։ Րաֆֆին սկսեց փնտռել Միրան աղային. ես էլ նոր մտաբերեցի, որ նա իրարանցումի միջոցին մէջտեղից վերացել էր, բայց թէ ո՞ւր էր գնացել՝ ես էլ չը գիտէի։ Մեր կարաւանի պարսիկներից մէկը, նկատելով որ մենք նրան ենք փնտռում՝ ասաց, ահա նրա ձին, որ յանձնել է ինձ պահելու, իսկ ինքը թագնվելով այս մօտիկ զառիվայրում՝ չոքել է և աղօթք է անում։ Րաֆֆին և ես առաջացանք դէպի պարսկի ցոյց տուած տեղը և տեսանք, որ ճիշտ, Միրան աղան նստել է խոտերի վրա, սուրն ու հրացանը ընկած են գետնին, իսկ ինքը բազկատարած անգիր կարդում է Նարեկից «Ընկալ քաղցրութեամբ և Որդի Աստուծոյ կենդանւոյ» աղօթքները։

—Այդ ի՞նչ էք անում, Միրան աղա, խօսեց Րաֆֆին. այսօր դուք ի՞նչ էիք խօսում, դուք խոստանում էիք, որ միայնակ դուրս կը գաք յարձակմունքների առաջ և հրաշքներ ցոյց կը տաք. բայց երբ հեռուից մի քանի քրդեր նկատեցիք, այն աստիճան սարսափահար էք եղել, որ երեխայի նման փախել թագնվել էք. լա՛ւ զէնք գործածող էք, կեցցէք դուք, լաւ անուն թողիք։

Միրան աղան ցնցված այս խօսքերից՝ ոտքի կանգնելով այսպէս պատասխանեց։

—Ինչե՞ր կը խօսես, աղբար, մի՞թէ աղօթքը զէնքի զօրութենէն պակաս է. ես եթէ աղօթքի չը կենայի, մեր կարաւանը հիմայ կորած կըլլար։ Չէ՞ք յիշեր, որ մեր երանելի Մեծն Ներսէսը պատերազմի ատեն աղօթքի դիմելով հակառակ բանակը կործանեց։

—Յիշում եմ, ասաց Րաֆֆին, բայց այդ անելու համար Մեծն Ներսէսներ պէտք են, և ես զարմանում եմ, որ դուք ձեզ համեմատում էք այդ անզուգական և սուրբ մարդի հետ։ Բացի այդ՝ հանգամանքներն այժմ այլ կերպարանք են ստացել։ Ասորոց պատրիարք Մար Շմօնը զէնք է կրում իր վրա և իր զինակիր—հրացանակիրներով ընկնում է քուրդերի ետևից և հալածում է նրանց։

Այս խօսքերից յետոյ Րաֆֆին ինձ ասաց, թէ չարժէ այլ ևս այդ մարդի հետ երկար ու բարակ խօսել, գնանք դէպի կարաւանը, և նա արդէն սկսել էր շարժվել և մեզ էր սպասում։ Միրան աղան էլ եկաւ նստեց իր ձին, բայց այնուհետև նա գալիս էր կարաւանի ետևից կորագլուխ։ Մենք գնում էինք ճանապարհի ուղղութեամբ և խօսելով։

—Դուք այդ մարդուն առիւծի նմանեցրիք այսօր, բայց տեսաք, որ նա կատու էլ դուրս չեկաւ, ասաց ինձ ժպտալով Րաֆֆին. այդպէս են

լինում միշտ պոռոտախօսները։

Արդէն խաւարն տիրապետել էր լեռ ու ձոր մենք մի ժամից յետոյ իջևանեցինք և երկրորդ օրը Որմիումն էինք։

Որմին մի զուարճալի և առևտրական քաղաք է, ընկած ծովակից քիչ տարածութեամբ հեռու. քաղաքը թէ ներսից և թէ դրսից լիքն է բազմաթիւ պարտէզներով և այգիներով։ Որմիի գաւառն ունի հարիւրաւոր լաւ մշակված գիւղեր։ Մի որոշ թիւ գիւղեր էլ կան, որոնց մէջ հին ժամանակներից բնակված են ասորիներ. դրանք հասարակ երկրագործներ են, խիստ տոկուն և աշխատասէր, բայց դժբաղդաբար անկիրթ և տգէտ. այնպէս որ ոչ մի հասկացողութիւն չունեն իրանց ազգային ինքնուրոյնութեան վրա։ Միսիօնարների աշխատութեամբ յոյս կայ. որ նրանց նոր սերունդը կրթվի և առաջանայ։ Ամերիկացի միսիօնարները և Ֆրանսիացի Լազարիստ վարդապետները, հաստատվելով Որմիում և նրա մի քանի գիւղերում, դպրոցներ, աղօթարաններ, եկեղեցիներ և այլն հիմնելով, նրանց մի մեծ մասը դարձրել են նեստորական հին եկեղեցուց բողոքական կամ կաթոլիկ, երկար տարիներ քարոզելով։ Որմի քաղաքում թէ ասորի և թէ հայ բնակիչներ էլ կան քիչ թւով։ Որմիի գիւղերից մի քանիսում էլ երկրագործ հայեր կան, որ նոյնպէս զուրկ են կրթութիւնից

և չունեն ոչ դպրոցներ և ոչ էլ կրթական միջոցներ։

Մի կիրակի օր Րաֆֆիի հետ գնացինք այցելեցինք ամերիկացիների հաստատած դպրոցը, տպարանը և աղօթարանը։ Այս վերջինը աչքի էր ընկնում իր ընդարձակութեամբ և մաքրութեամբ. այնտեղ բազմաթիւ ասորիներ, այր և կին, օրիորդ և երիտասարդ նստած քարոզ էին լսում աւետարանից։ Քարոզիչը մի ամերիկացի միսիօնար էր, որ առանց դժուարութեան խօսում և քարոզում էր ասորերէն լեզուով։ Քարոզից յետոյ բոլոր ունկնդիրները ձայն ձայնի տալով գեղեցիկ ներդաշնակութեամբ երգում էին Սաղմոսից։ Տեսանք և նրանց տպարանը, որ դուրս էր բերել զանազան կտորներ ս. գրքից և տպում էր մի լրագիր ասորերէն լեզուով։ Դրանից յետոյ գնացինք տեսանք Լազարիստների բնակարանը, եկեղեցին և դպրոցը, որոնցով նրանք նոյնպէս օգնութեան են հասել խեղճ ու կրակ ասորի ազգի մի փոքր մասին, թէ բարոյապէս և թէ նիւթապէս։ Մանաւանդ գթութեան քոյրերը (soeurs de charite) որոնք շարունակ մի պայուսակ ձեռներին, հարցնելով գնում գտնում են այն ամեն հիւանդներին և անճարներին, որոնք անտուն և անտէր են, և որոնց էլ ամենատեսակ օգնութիւն են հասցնում։

Մի անգամ էլ Րաֆֆիի հետ գնացինք ձիով

մի պտոյտ անելու Ուրմիի շրջակաները և երբ քաղաքից բաւական հեռացել էինք, Րաֆֆին ինձ ասաց.

—Արի մի քիչ հեռու գնանք, գնանք դէպի Վան տանող ճանապարհը. այն տեղերում մի քանի հետաքրքրական հնութիւններ կան, որ արժէ տեսնել. ես իմ ծառայիս պատուիրել եմ, որ մի քիչ ուտելիք վերցնէ. երբ կէսօր լինի, հէնց լեռներում կը ճաշենք։

Մենք բարձրացանք դէպի լեռները։ Մի ժամ քայլելուց յետոյ, նա կանգնեց մի լեռան լանջքի հանդէպ և ինձ ցոյց տուեց երկու քարացած ձըկներ մի ժայռի վրա կպած, իսկ դրանից մի քիչ հեռու, մի ուրիշ սարի վրա նա ինձ նշմարել տուեց մի քանի ծովային խեցգետիններ և այլ անծանօթ կենդանիներ, որոնք նոյնպէս քարացած էին։

—Ես առաջ այն կարծիքին էի, ասաց Րաֆֆին, որ սրանք արհեստական կերպով են դուրս բերված, բայց իմ նախորդ ճանապարհորդութեան միջոցին ես հանդիպեցի մի անգլիացի ճանապարհորդի, որ գիրքը ձեռքն այս կողմերում հետազօտութիւններ էր անում։ Անգլիացին պատմում էր, ասաց Րաֆֆին, թէ Ուրմիայի լիճը մի ժամանակ այնքան մեծ տարածութիւն է ունեցել, որ բոլոր այս լեռները պարունակված են եղել նրա մէջ։

Լիճը հետզհետէ տեղատուութիւն անելով և դարերի ընթացքում յետ յետ քաշվելով, այդ կենդանիները ջրից դուրս են մնացել և քարացել են, ինչպէս այդ երևոյթը պատահել է շատ տեղերում։ Անգլիացին, ինչպէս ասաց Րաֆֆին, երկար մնալով այս կողմերը, վարձել էր տասնեակ մշակներ և զանազան պեղումներ անել տալով, զանազան հին առարկաներ էր գտել և իր հետ տարել։

Լեռներից վայր իջնելով, եկանք քաղաքի այն աւերակ մասը, ուր մի քանի մոխրաբլուրներ կան, որոնք կուտված են անյիշատակ ժամանակներից։ Այդ մոխրակոյտերի առաջ Րաֆֆին կանգ առաւ։ Նրանց զանազան կողմերից մեծ մեծ ծակեր էին բաց արել ներս մտնելու համար, որոնք բաւական խոր էին երևում։

—Այս ծակերից, ասաց Րաֆֆին, ներս են մտնում շահասէր հրէաները, որոնք գիտեն ամեն դէպքից օգուտ քաղել։ Նրանք երկար խարխափելով մոխրակոյտերի խորքերում, քանդում և նորանոր պեղումներ են անում գաղտագողի դուրս բերելով, այն էլ գիշերով, տեսակ տեսակ պղնձէ, արծաթէ և մինչև անգամ ոսկէ անօթներ, այլ և հին ու հետաքրքիր դրամներ։ Նրանք այնպէս վարպետ են այդ գործի մէջ, որ դուրս բերած իրերը Ուրմիում չեն վաճառում, որ մի գուցէ բանը հասկացվի և իրերը նրանց ձեռքից խլեն, այլ մի

առժամանակ պահելով իրանց մօտ, առարկաները և դրամները սիրուն յղկում են, ժանգը մաքրում ապա տանելով նրանց այլ և այլ քաղաքներ բարձր գներով վաճառում են հետաքրքիր գնողներին։

Շատ անգամ էլ, ասում էր Րաֆֆին, խորամանկ հրէաները հին դրամների կեղծերը շինելով, վարպետօրէն նմանեցնում են ճիշդ իսկականին, որոնց էլ աւելի բարձր արժէքով են վաճառում։ Ես էլ իմ հաւաքածուի մեծ մասը, ասում էր նա, այդ հրէաներից եմ գնել, որ սկզբում լաւ չը ճանաչելով՝ իսկական հին դրամների հետ մի քանի հատ էլ կեղծ դրամներ էի գնել, որոնք հայր Կղէմէս վարդապետի խորհրդով դուրս նետեցի, այնուհետև նա ինձ հրահանգներ էր տուել, թէ ինչպէս պէտք է ճանաչել հին դրամները և թէ նրանք ինչպիսի հանգամանքներում պէտք է լինեն և այլն։

Ես երկու շաբաթ միայն Ուրմի մնալով, վերադարձայ իմ հայրենի քաղաքը Թավրիզ, իսկ Րաֆֆին մի քանի ամիսներ մնացել էր Ուրմիում, իր մի կողքին ունենալով առևտրական համրիչն ու հաշուէգրքերը և միւս կողքին իր գրական աշխատութիւնները։

Ուրմիից վերադառնալուց յետոյ, ես Րաֆֆիին շատ անգամ հանդիպել եմ Թաւրիզում 1862-ից մինչև 1867 թւականները, ուր գրեթէ նա տարին

մի անգամ գալիս էր իր սեփական գործերի համար։ Բացի այդ նա սիրում էր տարին մի քանի ամիսներ ժամանակ անցկացնել Թաւրիզում իր ծանօթների և բարեկամների շրջանում։ Եւ որովհետև նա բուռն ցանկութիւն ունէր իր նախագծած վէպերը առաջ տանելու, ուր որ գնում էր, նա շալակած ման էր ածում իր հետ իր գրական աշխատութիւնները։

1863 թւականներին Ատրպատականի թեմակալ առաջնորդն էր Աբէլ եպիսկոպոս Մխիթարեանցը, որ գրագէտի և ուսումնականի համբաւ ունէր։ Րաֆֆին, պէտք է ասած, շատ չէր համակրում մեր կղերականներին. Նա շատ անգամ ասում էր, թէ մեր վարդապետները միայն երեք բան են ցանկանում—լինել եպիսկոպոս և վիճակաւոր, ունենալ գրպանում մի քանի հազար ռուբլիներ և մի քանի շքանշաններ կրել կուրծքի վրա, պրծաւ ու գնաց։ Բայց հայ ժողովուրդը խարխափում է տգիտութեան մէջ, նա մնում է անհովիւ, նա լինում է կրօնափոխ, նրա զաւակները մեծանում են անկիրթ. այդ բոլորի համար մեր վարդապետները անտարբեր են։ Նրանք, ասում էր Րաֆֆին, միայն երկար ու ողբալի երեմիականներ կարդալով են բաւականանում և իրանց տեղերում հանգիստ նստած յօրանջում են։ Աբէլ եպիսկոպոսը Րաֆֆիի հետ ծանօթ լինելով՝ նրա գրուածքներից մի քանիսը

վերցրել պահել էր իր մօտ, որպէս զի կարդայ և նրանց մասին իր կարծիքը յայտնէ։

Թաւրիզումն ենք։ Մի օր Րաֆֆիի հետ գնացինք ազգային առաջնորդարանը Աբէլին տեսութիւն։ Նա նստած էր դահլիճում. նրա առաջ դրված սեղանի վրա երևում էին «Հիւսիսափայլի» տետրները և Պօլսի հայ թերթերը։ Նա տրամադիր էր երևում խօսելու։ Սկզբում նա խօսում էր Սալմաստի հայերի վերաբերութեամբ, որոնք, ասում էր նա, թէև բազմաթիւ են և ունևոր, բայց դպրոցներ ունենալու համար չեն աշխատել, որ մի ցաւալի երևոյթ է և այլն։ Յետոյ եպիսկոպոսը խօսքը դարձրեց Րաֆֆիի գրուածքների վրա։

—Ես ձեր աշխատութիւնները ծայրէ ի ծայր կարդացի, ասաց նա, գովում եմ ձեր գրական եռանդը, բա՛յց համաձայն չեմ ձեր գաղափարների հետ և ձեր գրութեան ոճը բուն հայերէն չեմ կարող համարել. դա մի ափեղցփեղ գրուածք է։ Ես նկատում եմ, որ դուք հետևում էք թէ «Հիւսիսափայլի» լեզուին և թէ նրա ուղղութեան։ Խոստովանում եմ, ասաց Աբէլը, որ Նազարեանցը, Նալբանդեանցը և իրանց գաղափարակից մի խումբ ուսումնական ընկերակիցները ժիրաժիր գործում են մեր գրական ասպարէզում, բայց նրանք մոլորութիւններ էլ ունեն, որ հետևանք է օտար երկրում ստացած դաստիարակութեան։ Նրանք պա-

հանջում են, որ Հայաստանեայց եկեղեցին վերանորոգվի. դա անկարելի է. հայկական եկեղեցին այդպէս էլ կը մնայ մինչև կատարած աշխարհի։ Իսկ ձեզ էլ խորհուրդ եմ տալիս, որ փոխանակ «Խըլվըլիկների», «Սալբիների» և «Կայծերի» վրա աշխատելու, փոխանակ գռեհիկ ժողովրդի վրա աշխատելու, փոխանակ գռեհիկ ժողովրդի միջից «Մըկօի, Մարօի, Մըհէի» և այլ այդ տեսակ տիպեր վերցնելու դուք աւելի լաւ կանէիք, որ մեր անսպառելի գանձի նման ազգային պատմութիւնից և մատենագրութիւնից ընտրէիք ձեր գրելու նիւթերը, որոնք լի են բազմազան գեղեցիկ հատուկտորներով։ Դուք հետևեցէք իմ գրելու ձևին և ոճին, ա՛յ, ինչպէս գրել եմ ես «Անուշաւանը» (ցոյց տալով իր «Անուշաւան» աշխատութիւնը, որը դըրված էր իր գրասեղանի վրա։

Րաֆֆին, չը կարողանալով կուլ տալ վարդապետի վիրաւորական խօսքերը, բացեց իր բերանը. «Սրբազան հա՛յր, ասաց նա, ես էլ ծայրէ ի ծայր կարդացել եմ ձեր «Անուշաւանը» նա ոչ գրաբար է և ոչ աշխարհաբար, ոչ Պօլսական բարբառով է գրված և ոչ արարատեան բարբառով. դա մի տարօրինակ և մտացածին ոճ է, այդպէս էլ մտածում են մեր կղերականները։ Փոխանակ ժողովրդի սրտին մօտիկ և նրա խօսեցածի պէս գրելու, նրանք պահանջում են, որ ժողովուրդ մօտենայ իրանց առա-

ջարկած բարբառին։ Եւ տեսէք, այժմեան հայ ժողովրդի խօսեցած լեզուն որքա՜ն իրանից հեռու է թողել Եզնիկի և Եղիշէի լեզուն։ Անկարելի է այդ երկու ծայրահեղութիւնները ի մի բերելու, այդպէս չէ մտածում «Հիւսիսափայլը»։ Նա գրում է ժողովրդի խօսեցածին պէս, որ գնալով հասարակաց լեզու և գրական բարբառ կը դառնայ և արդէն դարձել է, իսկ ձեր գրելու ոճը, սրբազան հայր, հասարակաց չէ կարող լինել, որովհետև ժամանակիս պահանջին հակառակ է։ Գալով «Հիւսիսափայլի» պահանջներին, ոչ թէ միայն դուք, շատերն են ծուռ հասկացել։ Պէտք է իմանալ, որ նա իսկապէս շատ էլ հակառակ է, որ հայ եկեղեցին որ և է օտարամուտ փոփոխութեան ենթարկվի, կամ միանայ մի այլ եկեղեցու հետ։ Նա պահանջում է, որ հայ կղերը ուսեալ լինի, շարականները, երկարաձիգ ընթերցուածները և ս. Աւետարանը աշխարհաբար լեզուով աւանդվեն։ Պատարագը, որ տևում է 3—4 մինչև անգամ 5 ժամ տօներին, մի կամ 2 ժամում վերջանայ, թէկուզ հէնց գրաբար լեզուով էլ լինի։ Մ՛ի ժամ բաւական է պատարագի համար, մի ժամ էլ թող կենդանի լեզուով քարոզ լինի եկեղեցում, որպէսզի ժողովուրդը հոգևոր սնունդ ստանայ հասկանալի լեզուով։ Բայց բանն այն է, որ ժողովուրդը մի քանի ժամեր մնալով եկեղեցում փայտի նման

ոչ մի բան չէ հասկանում, նոյն իսկ եկեղեցական պաշտօնեաների մեծագոյն մասն էլ չէ հասկանում թէ ինքն ի՞նչ է աւանդում։ Ես եղել եմ հռոմէական և բողոքական եկեղեցիներում իբրև ունկնդիր. կաթօլիկ եկեղեցում թիւ պատարագը տևում է 20 րոպէ, ձայնաւոր պատարագը կիրակի կամ տօներին մի ժամ միայն և մի կարճ քարոզ, իսկ բողոքական եկեղեցիներում ժողովրդին մատակարարում են հասկանալի լեզուով Աւետարանի ընթերցանութիւնը, քարոզներ և մի քանի հոգևոր երգեր, որոնք դարձեալ մի ժամից աւելի չեն տևում։ Բայց մեր եկեղեցական արարողութիւնների վերջը չէ գալիս։ Այդ դէպքում՝ ժողովուրդը յուսահատված խրթին լեզուից և անախորժ երգեցողութիւնից, դուրս է փախչում և հոգևորականներն էլ դժգոհութիւն են յայտնում, թէ ժողովուրդը ժամասէր չէ և այլն։ Ահա սրանց համար է, սրբազան, որ «Հիւսիսափայլը» նոր պահանջներ է անում, բայց միշտ հայկական եկեղեցու կարգերի համաձայն։ Մեր հոգևոր երգերը, աղօթքները և շարականները հրաշալի են, իրանց խնկելի բովանդակութեամբ, բայց ցաւալի է, որ անգրագէտ ժամասէրները նրանցից ոչինչ չեն հասկանում։ Անցել են երկար դարեր այն ժամանակից, որ սակաւապետ հայ ժողովուրդը, գործ և պարապմունք չունենալով, բացի առաւօտեան և երեկոյեան եկեղե-

ցու պաշտամունքներին ներկայ լինելուց, օրվայ միւս ժամերին էլ մտնում էր եկեղեցին կամ մօտիկ վանքը, որ մի բան լսէ անցեալից և սուրբերի վարքից։ Ասածս վկայում է Յայսմաւուրքի գոյութիւնը, որ պատրաստված է յատկապէս այդ պարապ ժամերի համար։ Մեր եկեղեցական երկար արարողութիւնները յարմարեցրել են յիշեալ ժամանակներին, իսկ մեր օրերում հանգամանքները փոխվել են, հացի անհագին խնդիր կայ մէջտեղում, որ ստացվում է մեծ դժուարութեամբ։ Մարդիկ ամբողջ շաբաթը այնպէս զբաղված են լինում, որ նոյն-իսկ կիրակի և տօն օրերին խուսափում են եկեղեցում երկար մնալուց։ Անհասկանալի և աններդաշնակ երգեցողութիւնն էլ չունի իր գրաւիչ կողմերը, որ աղօթաւորներին հրապուրէ։ Ներեցէք, սրբազան, որ այսպէս երկար խօսեցի. թող հայ եկեղեցին մնայ անփոփոխ մինչև աշխարհի կատարածը, ինչպէս դուք, այնպէս էլ մենք ամենքս ցանկանալով ցանկանում ենք այդ։ Բայց եթէ նրան մի փոքր բարեփոխութիւն ներշնչվի մեր եկեղեցու նախնաւանդ կարգերի համաձայն՝ մեզանից ոչ ոք կրօնափոխ չի լինի։ Մեզանից հազարներով կաթօլիկ և պրօտեստանտ են դառնում, բայց ինչու նրանցից էլ չեն դիմում դէպի մեր եկեղեցին։ Պատճառը շատ պարզ է։ Նրանց կրօնականները, ընթացիկ ժամանակից օգտվելով, իրանց եկեղեցու

կարգերը թեթևացրել և հասկանալի են դարձրել, իսկ մեզանում դրա հակառակն է, ծանր, երկար և վերացական է։ Երկու խօսք էլ և վերջ։ Դուք պահանջում էք, սրբազան, որ թող տալով հասարակական տիպերը, միայն մեր ազգային պատմութիւնից նիւթեր վերցնենք։ Թէ մէկը և թէ միւսը հարկաւոր են։ Այժմս աւելի կարիք կայ ազգի ստորին խաւերում գտնվող գռեհիկների կեանքը և սովորոյթները պատկերացնելու։ Դա ժամանակի պահանջ է։ Մենք պէտք է նկարագրենք մինչև անգամ ընդհանուրի կացութիւնը, որպէս զի ապագայում մենք դատապարտելի չը դառնանք, ինչպէս մենք այսօր դատապարտում ենք մեր նախորդների անփութութիւնը, որ լաւ չեն լուսաբանել հայ ժողովրդի կեանքը և նիստ ու կաց և այլն»։

Եպիսկոպոսը, որ մի դիւրագրգիռ և բարկացող մարդ էր, սակայն լուռ լսում էր, երբ Րաֆֆին իր ճառը վերջացրեց՝ այսպէս պատասխանեց.

—Յարգելի պարոն, ես ձեզ մի յորդոր և խրատ կարդացի, իսկ դուք մի երկար ճառ և քարոզ խօսեցիք ինձ։ Ճառ և քարոզ խօսելու իրաւունքը վարդապետինն է, ես պէտք է ճառեմ և քարոզեմ։ Ես նկատում եմ, որ դուք էլ Նազարեանցի թելն էք հիւսում, նա իրան վարդապետ էր անուանում, իսկ դուք էլ քիչ է մնում, որ ձեզ քարոզիչ հրատարակէք։ Վերջապէս ես ձեզ

պատուիրում եմ, որ այսուհետև իմ ներկայութեանը այդպիսի նորամուտ խօսքեր չարտասանեք, եթէ ոչ...

Այս յանդիմանական խօսքերից էլ Րաֆֆին վշտանալով՝ սկսեց նորից աւելի բորբոքված խօսել։ Ես նկատեցի, որ նրանց վիճաբանութիւնը երկար պիտի տևէ, հեռացայ մի կարևոր գործի համար, թող տալով, որ երկու շէնք ու շնորհք միասին վիճեն որքան կամենում են։

Մի քանի օրից յետոյ, երբ Րաֆֆիի հետ տեսնվեցայ.

—Տեսա՞ք, ասաց նա ինձ, ինչ խայտառակ կերպով վերաբերվեց վարդապետը դէպի իմ գրվածքը և իմ կարծիքները։ Եւ դա մեր լուսամիտ և գիտնականի հռչակ ստացած վարդապետն է. այժմ կարծեմ մի լաւ գաղափար կազմած կը լինէք, թէ ինչ կը լինեն մեր միւս սևագլուխները...։

Այս երկրորդ շրջանում Րաֆֆին ամուսնացած է, աւելի խոհուն, լուրջ և մտածող է դարձել։ Նա երկունքի մէջ է, դեռ իրան չէ ծանօթացրել գրական աշխարհին որպէս հրապարակախօս։ Նրա երկերից պատրաստ են «Փունջի» մի քանի հատորները, վաղէ վառ աշխատում է «Խաչագողի յիշատակարանի», «Սալբէի» և «Կայծերի» I հատորի վրա, նրանց փոփոխութեան ենթարկելով։ 64, 65 և 66 թուականներում, նա իր սովորութեան պէս, ինչպէս շատ տեղեր՝ նոյնպէս էլ Թաւրիզ գալիս

և գնում է։ Նա այդ թուականներում յղացել էր մի այսպիսի միտք էլ, որ իր հաշուին մի սեփական տպարան բերել տայ Ռուսաստանից կամ Պոլսից։

—Մամուլն, ասում էր նա, լուսաւորութեան բերանն է, եթէ ես կարողանամ մի տպարան հաստատել՝ դա առաջին քայլը կը լինի մեր պարսկահայերի համար և ինձ համար էլ այն դիւրութիւնը կունենայ, որ ես նրանով հետըզհետէ իմ գրուածքները լուս աշխարհ կը բերեմ և թերևս մի փոքրիկ լրագիր էլ կունենանք։

Րաֆֆիի այս դիտաւորութիւնը աջողութիւն չը գտաւ, հակառակ իր ջերմ ցանկութեան։ Աջողութիւն չը գտաւ, որովհետև այս երկրորդ շրջանը, ինչպէս ընթերցողը պիտի տեսնէ, Րաֆֆիի համար դառնում է մի աւերանքի և հալածանքի շրջան։

Մէլիք Միրզայի տան և Րաֆֆիի կատաղի հակառակորդները յայտնի և ծածուկ այնքան աշխատեցին, որ զանազան անարդար միջոցներով այդ տունը քար ու քանդ արին։ Վաճառական Րաֆֆին սնանկ հրատարակվեց։ Պատուասիրութիւնից զգածված՝ նա անդադար դիմում է Սալմաստից, Խօյ, Ուրմի, Թաւրիզ և Թիֆլիս, իրանց առևտրական գործակալներից հաշիւ է պահանջում, որ մի կերպով կարողանայ իրանց գործերը ընթացիկ վիճակի մէջ դնել և դարձեալ շարունա-

կել։ Բայց գործը գլուխ չէր գալիս։

Թաւրիզում 1867-ին հանդիպելով բանաստեղծին՝ նկատեցի, որ աւելի մռայլ և աւելի մելամաղձոտ էր դարձել, էլ հանաքներ չէր անում։ Նրանում այլ ևս չէր երևում նրա սովորական աշխուժի վառ կրակը, նրա հոգեկան թարմ զգացմունքները կարծես նրանից հեռացել էին։ Նա ընկճված էր թէև, բայց դարձեալ գրասեղանից չէր բաժանվում։ Պլատոնական սառնութեամբ և յօնքերը կիտած՝ նա գրում էր մտայոյզ և խռովայոյզ։

—Ի՞նչ է, ի՞նչ է պատահել ձեզ հետ, հարցրեցի մի օր ես նրանից, որ ձեր նախկին խանդը հեռացել է ձեզանից, չէք խօսում և չէք զուարճանում։

Էլ ի՞նչ էք ուզում, որ պատահի ինձ հետ, պատասխանեց Րաֆֆին, մեր ուխտեալ թշնամիները վերջապէս հասան իրանց նպատակին. մեր դրամական կարողութիւն և տուտուրը վտանգեցին, մեր կալուածները գրաւեցին և մեզ անդունդը գլորեցին։ Դրանք բաւական չէին, աւելացրեց նա. մեր գործակալները, որ կեղտոտ և ապերախտ մարդիկ են եղել՝ այժմ նրանք էլ են սկսել մեզանից զանազան անիրաւ պահանջներ անել իրանց խարդախ հաշիւներով, փոխանակ մեզ կարեկցելու և մեր սեփականը մեզ վերադարձնելու։ Հոգիս դուրս եկաւ դրանց հետ վիճելով. ոչի՛նչ չեմ կարողանում

հասկանալ դրանց լաբիրինտական հաշիւներից. ինձ մնում է մի յոյս միայն—ես որոշել եմ Թիֆլիս գնալ և կարծում եմ, որ այնտեղի մեր գործակալի մօտ մի բաւական խոշոր գումար պէտք է լինի գանձված մեր վաճառումներից, որը կարող էր մեր գործերի ընթացքը մի փոքր փոխել։ Ես շատ չեմ ցաւում, որ մեր բաղդը մեզանից այժմս երես է դարձրել. դրամական հարստութիւն, բախտ և վիճակ՝ դրանք փոփոխական են և գրեթէ անցողական։ Ես աւելի ցաւում եմ նրա համար, որ մեր նիւթական կարողութիւնը և մեր առևտրական վարկը օդը ցնդելուց յետոյ, որի վերջինը մեզ համար աւելի պատուաբեր էր քան թէ առաջինը՝ այժմ ես կորցնում եմ իմ թանգագին ժամանակը։ Գրելու համար հարկաւոր է խաղաղ վիճակ, հանդարտ սիրտ և ոգևորութիւն և մի փոքր էլ խանդ, դրանք ամենքն էլ արդէն խոյս են տուել ինձանից։ Մեր անիրաւ պահանջատէրերը ինձ միջոց չեն տալիս, որ ես մի տեղ դադար առնեմ. հալածված որսի պէս ինձ վռնդում են մի տեղից մի այլ տեղ։ Նրանք ինձ պարտքերի մէջ խեղդել են, իմ բոլոր ապրուստի աղբիւրները փակել են։ Աշխարհս կատարեալ դժոխք է դժոխք։ Բայց այնու ամենայնիւ ես շատ չեմ զարմանում. թող ի՛նչ ուզում են անեն, սակայն ես իմ գրչից չեմ բաժանվի։ Ես նրան կը զօրեղացնեմ և թոյլ չեմ տայ, որ նա

ժանգոտի չը պէտք է վհատվել աշխարհիս պատահարներից, պէտք է գործել։

Բանաստեղծը ուղևորվեց Սալմաստ, որտեղից էլ պէտք է գնար Թիֆլիս բայց առաջ քան Կովկասի ուղևորութիւնը, ես նրանից ստացայ հետևեալ նամակը, գրված Փայաջուկից յունվար 1868-ից։

«Քրիստոնեաների ընդունած տարեթիւը փոխեց իր մի ցիֆրը, այդ նշանագրի փոփոխութեան պատճառով միլիոնաւոր մարդիկ լցված ուրախութեամբ կոչում են. «շնորհաւոր նոր տարի» բայց ես չեմ սիրում հաղորդ լինել հասարակաց անխորհուրդ ուրախութիւններին, ուրեմն ներեցէք, որ միևնոյն քաղաքավարութեամբ չեն բարևում ձեզ։ Ընդհակառակը, այդ փոփոխութեան րոպէներում իմ սիրտս լի էր վշտերով, և կարծես մի աներևոյթ ձայն մեղմիկ շշնջում էր իմ ականջիս, թէ մի տարի ևս գնաց քո կեանքից, և դու մի քայլ ևս մօտեցար գերեզմանիդ։ Դեկտեմբերի վերջին գիշերը, ես նստած միայնակ և խորասոյզ եղած խառն մտածմունքներում, յանկարծ լսելի եղան անսովոր դղրդմունք, և հրացանի որոտը փոխեց իմ սենեակիս մելամաղձական լռութիւնը։ Գիւղական խրճիթների կտուրների վրա բաբելոնական կատաղի խառնաձայնութիւններ կային։ Ես կարծեցի, թէ գիւղացիք այդ սպառնալիքով հալածում էին սատանային, որ այնքան հինուց բոյն էր դրել նրանց

խրճիթներում։ Բայց ոչ. Նրանք իրանց սովորական աւանդութեամբ հալածում էին հին տարին նրա համար, որ նա խիստ չար էր և որ չէր բերել մեզ հայերիս համար մի նոր բախտ։ Թող նա կորչէ ուրեմն... Քանի՜-քանի՜ հազար այդպիսի դեկտեմբերներ արտաքսել են մեր ռամիկները, քանի՜-քանի նոր տարիք սիրով ընդունել են, բայց նրանցից ոչ մինը չէր բերել նրանց համար մի երջանիկ բախտ։ Արդարև հոլովական տարիքն ոչինչ չեն ներգործում հայերի տխուր վիճակի վրա, պատճառ որ բնութեան օրէնքների համաձայն տարիքը փոփոխվում են գնում է հինը, գալիս է նորը. բայց մեր հայերը անխռով իրանց գերեզմանական անշարժութեան մէջ երբէք չեն մտածում փոխել իրանց մեռելային դրութիւնը։ Նրանք իրանց կեանքը չեն համաձայնեցնում տարիների ընթացքի հետ։ Միով բանիւ հայի համար չը կայ նոր տարի...

«Ստացայ ձեր ուղարկած ներկա յտարոյս օրացոյցը որ կացուցանում է ձեր առ ինձ ունեցած բարեկամական յիշատակարանը. որքան չնչին գնով էք գնահատում դուք բարեկամութիւնը, որի յիշատակի համար կանգնած մետալեայ. մարմարեայ, որձաքարէ կոթողները, գրանիտէ սիւները մաշվում փչանում են, իսկ ձեր յիշատակարանը մի գրքոյկ է, որ տարին լրանալուց յետոյ կորուսանում է իր նշանակութիւնը և պիտի մի կողմ ձգվի։

Ներեցէք այդ մի փոքր երկիծաբանութեանս...» Վերջին զասիդով (ոտքով գնացող սուրհանդակ ստացայ նոյնպէս ձեր վերջին գրութիւնը. մի քանի թերթ «Մասիս» լրագրից, այլ և մի թերթ «Ծաղիկ» լրագրից, որի մէջ կարդացի Մ. Նալբանդեանցի մահը։ Այդ յօդուածը գոհացուցիչ չէր. ազգի այդ թանկագին զոհի ցաւալի կորուստը նկարագրելու համար՝ հռչակաւոր Հիգօի գրիչը պէտք է և Աբովեանի վառված, կրակված սիրտը։ Մի՞թէ այդքան կարճ պէտք էր խօսել այն տղամարդի մասին, որ այնքան երկար ու սրտաշարժ ոճով խօսել է մեր ազգային կարիքների մասին։ Գրած էիք, թէ Նալբանդեանցի լուսանկարը տեսել էք մի Պօլսեցի պարոնի մօտ և խնդրած էք, որ մի քանի հատ էլ բերել տայ Պօլսից։ Երևի մի քանի ամիսներ կը տևեն, մինչև որ ստանաք։ Բեր այդքան համբերութիւն»...։ Այդ նամակն ինձ գրելուց յետոյ, Րաֆֆին Սալմաստից ուղևորվել էր Թիֆլիս և երկար աշխատել իր տարտամ գործերի վրա, որոնք շատ հեռու էին կանգնած կարգի տակ մտնելուց։ Արդէն նա եղել էր Թիֆլիսում իր ուսանողութեան ժամանակ. բայց այս անգամ նա գտնում է Թիֆլիսը շատ բարեփոխված, ինչպէս ինքն է նկարագրում իր հետևեալ նամակում, որը ես նրանից ստացայ 1868, օգոստոս 24-ից գրված։

«Ես այժմս Թիֆլիսումն եմ, դուք այդ վաղուց

իմացած կը լինիք, բայց ի՜նչ Թիֆլիս... Ո՛չ այնպէս երևում է ինձ այժմ այդ գեխ ու շռայլ քաղաքը՝ որպէս տեսել էի նրան տասն տարի առաջ. այժմ ինձ այստեղ ամեն մի առարկայ, ամեն մի իրողութիւն հրապուրում է և հիացնում։ Դուք գիտեմ, կասէք, ի՞նչ հաճոյական մի բան պիտի լինի մի կիսասիական և կիսևրօպական քաղաքում, որպիսին է Կովկասեան Թիֆլիսը։ Ի՞նչ էք ուզում սիրուն յաւերժահարսունք, կախարդական գրօսանքներ գեղեցիկ ծառազարդ ճեմելիքներով... Միով բանիւ ամեն ինչ, որ կարող են գրաւել մեր խելքն ու միտք՛ը դուք կը տեսնէք այստեղ։ Դրանք ցնորական բաներ են։ Բայց ես ունեմ այժմ մի նախանձելի շրջանակ, այստեղի ուսումնական և կարի աշխոյժ երիտասարդներից։ Իմ «Խըլվըլիկը» գարմանալի ընդունելութիւն գտաւ տեղիս ընթերցող հասարակութենէն։ Քանի-քանի գիշերներ եղել են առանձին առանձին ժողովներ նրա ընթերցանութեան համար։ Նազարեանցէն նամակներ եմ ստանում, նա պահանջել էր իմ գիրքը Մօսկվայ յուղարկելու, որ տպվի իր «Լապտեր Հայաստանի» օրագրի մէջ, որ միտք ունի այս տարի հրատարակել։ Մեր առևտրական գործի և ընկերական հաշիւների մասին, որոնց համար այստեղ եկած եմ, տակաւին պիտի ուշանամ, որովհետև անիրաւ Զ... զանազան չարահօգի և մեզ թշնամի անձանց թե-

լադրութեամբ չկամի իր գործը մեզ հետ վերջացնել»։

Րաֆֆին երկար մնաց Թիֆլիսում, աշխատելով ալէկոծութեան մէջ տատանվող իր նաւի ղեկը մի կերպով ձեռք բերել, բայց ոչինչ չէր օգնում։ Երբեմն նա արհամարանքով էր նայում դէպի այն թակարդը, որի մէջ գլորել էր նրան իրանց առևտրական տան հակառակորդ լէգէօնը։ Թակարդի հիւսուածքի թելերը հասցրած էր այդ միջոցին մինչև Թիֆլիս։ Երբեմն էլ Րաֆֆին խիստ կատաղի յարձակումներ էր գործում հակառակ բանակի վրա, որպէսզի նրանց զինաթափ անէ, բայց Գորգեան հանգոյցը չէր լուծվում։ Թէ գործերի հանգամանքը և թէ իր ընտանիքը տեսնելու տրամադրութիւնը՝ նրան ստիպեցին վերադառնալ Պարսկաստան։ Այդ միջոցին ես Թէհրանումն էի։ Նաւաբեկեալ Րաֆֆին տխուր և բեկբեկված սրտով ինձ գրել էր մի այսպիսի բովանդակութեամբ նամակ։

«Թաւրիզ, 22 մարտի 1869 ամի։ Աւելորդ եմ համարում իմ գործերի այժմեան վիճակից ձեզ որևիցէ տեղեկութիւն տալ, մտածելով այն իրողութիւնքը, որ այնքան անտանելի են ինձ, չըցաւեցնել նրանով մի... բարեկամի սիրտ։ Բայց զարմանալի է, երբ մարդկային կեանքի մի տարրը շեղվում է իր բնական կարգից, արդէն դժբախտութեան մրրիկը կատաղաբար սկսում է ամեն կողմից

փոթորկել... ազգականք, բարեկամք, ընկերք և ծանօթք բոլորը հեռանում են նրանից... բայց մարդը, այդ դժողըմբեր դրութեան մէջ, ոչինչ յոյս ոչինչ մխիթարութիւն և ապաւէն չէ գտնում իրան, բացի այն միակ աներևոյթ էակից, որոյ վրա դրվում է անճարների յոյսը։ Արդարև ես մի մեծ պատերազմ եմ մղում բախտի անաջողութեան դէմ, բայց միևնոյն ժամանակ իմ սիրտս և իմ խիղճս այնպէս անդորր և հանգիստ են որպէս առաջ։ Ես միշտ մխիթարութիւն եմ գտնում իմ տեսած, լսած և կարդացած հազարաւոր օրինակների մէջ. որ բախտի անհաստատ ճախարակի շրջանը երբեմն մինչև աստղերը բարձրացնում է մարդին, իսկ երբեմն մինչև անդունդն ի խոր գլորում. Կամք նախախնամութեան օրհնեալ եղեցի, կը վարվենք բախտի յեղափոխութեանց հետ, միշտ ակներև ունենալով, որ աշխարհս անցաւոր մի բան է»...

Բանաստեղծը իր աննախանձելի և անապահով վիճակը այդպիսի տխրամած սրտով նկարագրելուց յետ, այդ միջոցին նա այն աստիճանի արծաթի կարօտութիւն է զգում Թաւրիզում, որ կարիքը ստիպում է նրան իր «Խըլվըլէկ» աշխատութիւնը գրաւ դնել։ Այն «Խըլվըլէկը», որի համար գիշերները իր երիտասարդական քունը կտրելով, իր հանգիստը, իր աչքերը և իր կուրծքը զոհել էր թէ նրան, թէ «Խաչագողի Յիշատակարանին»,

թէ «Սալբիին» և «Կայծերին»։ Րաֆֆին թալանված էր բոլոր դրամական կարողութիւնից և ապրուստի միջոցներից, այս անգամ նա նորից դիմում է դէպի Կովկաս, որպէս մի նոր փելիասկօ, որ միայնակ և ձեռնունայն կանգնելով դատարկ ու մերկացրած նաւի մէջ, մեծ յուսով էր դէպի ցամաքը։

Բանաստեղծը 1870 թւականից մինչև 1875-ը Թիֆլիսումն էր, բայց դառն խիստ դառն չքաւորութեան մէջ։ Նրա կրած դրամական տագնապը և ապրուստի միջոցների համար ունեցած տառապանքը խիստ զարհուրելի է եղել, մանաւանդ մինչև 1872 թւականը։ Նա մի օր ինձ հետևեալը պատմեց իր ունեցած կարօտ և չքաւոր վիճակի մասին։

—Ի՞նչու թագցնեմ, ես այն աստիճան հացի կարօտ մնացի Թիֆլիսում, որ օրվայ կարիքն ինձ ստիպեց մի հասարակ գործակատարի պաշտօն ընդունել մի մագազինում, այն էլ ոչ թէ իսկական գործակատարի, այլ պարզապէս դուքանչու աշակերտի պաշտօն մի չնչին ռոճիկով։ Օրվայ հացս գտնելու համար յանձն առայ այդ ստորութիւնը։ Մագազինում պատրաստի հագուստներ էինք վաճառում, ես շորերը հագցնում էի յաճախորդներին, քղանցքներից բռնելով, քաշքշելով յարմարացնում էի և սուտ գովաբանութիւններ էի անում, որ մուշտարուն ձեռքիցս չը փախցնեմ։ Մի անգամ մի երիտասարդ ծանօթի մի քանի իրե-

ղեններ նիսիա էի վաճառել, այդ օրը քիչ էր մնում, որ ինձ մագազինից դուրս վռնդէին։ Ա՜խ, ինչ զզուելի պաշտօն էր այդ և որքան անտանելի…

Բայց երբ 1872 թւականից բանաստեղծը ծանօթանում է արժանայիշատակ Գրիգոր Արծրունու հետ և նրա խորհրդով սկսում է գրել «Մշակում», նրա անապահով վիճակը մի քիչ փոխվում է և նա սկսում է շունչ քաշել։

Րաֆֆին, փոքր առ փոքր սթափվելով չքաւորութեան հարուածներից, 1873—1874 թւականներում լոյս ընծայեց իր «Փունջ» անունով աշխատութիւնից 2 հատոր։ Բայց Փունջերը ոչ թէ երկու, այլ տասն հատորներով պիտի վերջանային։ Նա որոշել էր սկզբում, որ իր ձգտումները և հրահանգիչ մտքերից շատերը ճկուն ոտանաւորների մէջ ամփոփէ, բայց հետևելով հանգուցեալ Գրիգոր Արծրունու լուսաւոր կարծիքներին՝ հեռացաւ Փունջերի մնացած հատորները հրատարակելուց։ Արծրունու սուր և խորաթափանց աչքերը արդէն նկատել էին Րաֆֆիի գրական դէմքը և նրա մտքի մէջ կուտակված անհամար ժողովրդական յուզիչ գաղափարները, որոնց համար էլ շարունակ խրախուսում էր նրան, որ հրապարակ դուրս գայ կենդանի նկարագիրներով։ Արծրունու խորհրդով մեր բանաստեղծն այնուհետև աւելի ոգևորված անձնատուր եղաւ իր արձակ վիպագրութիւններին,

թողնելով լիրիքական բանաստեղծութիւնը, որ պէտք է ասած, նրան բաւականին աջողվում էր։ Այդպէս նա բոլոր ուժով ընդգրկեց արձակ ռոմանտիզմը և շարունակեց մինչև իր կեանքի վերջը։ Նա թէև այդ թւականներում ընդունված էր «Մշակի» խմբագրութեան մէջ, բայց 1872-ին մինչև 1875 «Մշակը» շաբաթական էր, այն էլ սակաւաթիւ բաժանորդներով. Հասկանալի է որ նրա նիւթականն էլ նախանձելի չէր կարող լինել։ Րաֆֆին իր «Պարսկաստանի նամակները» հետզհետէ հրատարակելով «Մշակում» մի մասնաւոր վարձատրութիւն էր ստանում։ Այդ նամակների թիւը, կարծում եմ 50-ից աւելի պէտք է լինէին, որոնցից 25-ը միայն տպվեցին, որոնք լաւ տպաւորութիւն էին թողնում և հետաքրքիր էին։

Րաֆֆին որպէս ուսուցիչ

Հանգուցեալ Անդրէաս եպիսկոպոս Յովհաննիսեանը 1875 թւականին Ատրպատականի թեմակալ նշանակվելով, եկաւ Թաւրիզ և իր պաշտօնն ստանձնեց։ Նա մի համեստ և բարեխիղճ վարդապէտ էր և պատկանում էր կրթված դասին։ Նոր թեմակալը նկատեց, որ Թաւրիզի միակ արական դպրոցը, այժմեան Արամեան դպրոցը, համապատասխան չէ իր կոչման, ուստի և իր ամբողջ ուշադրութիւնը դարձրեց նրա վրա։

Այդ դպրոցը կառուցել էր նախկին թեմակալ,

երախտաշատ Սահակ եպիսկոպոս Սաթունեանը 1850 թւականին, մասամբ իր սեփական և մասամբ ժողովրդի արդիւնքներով և իր բազմադիմի ջանքերով, որին էլ անուանել էր Ներսէս V կաթուղիկոսի յիշատակին նուիրված, այն դիտաւորութեամբ, որ դպրոցը Ատրպատականի հայոց նոր սերունդի մտաւոր զարգացման բաւականութիւն տայ։ Բայց հանգուցեալի մահից յետոյ նորակառոյց դպրոցը իր որոշ նպատակով չէր ընթացել։ Ճիշտ մի քառորդ դար սահել էր դպրոցի գլխով, «որպէս հողմն զոր հոսէ»։

Նոր թեմակալը թէ եկեղեցու բեմից և թէ առաջնորդարանում ժողովներ կազմելով բացատրեց հասարակութեան ուսման կարիքները, դպրոցը նորանոր փոփոխութեան ենթարկելու պէտքը՝ նոր մանկավարժական ուղղութեամբ և այլն։ Բացատրեց, որ եթէ ժողովուրդը անտարբեր մնայ, ինքն այդ դէպքում միայնակ ոչինչ չէ կարող առաջացնել։ Հասարակութեան առաջաւոր մասը, ըմբռնելով թեմակալի կուլտուրական օգտակար առաջարկութիւնները և իր աջակցութիւնը խոստանալով, դիմում է անմիջապէս դրամական հանգանակութեան, որը մի քանի օրվայ մէջ հասցնում է մօտ տասն հազար ռուբլիի։ Թեմակալի ջանքերով պատրաստվեց մի ընդարձակ ուսման ծրագիր դպրոցի համար և կազմվեց մի նոր հոգաբարձական մար-

մին 6 հոգուց բաղկացած։ Նոր թեմակալը այնուհետև մի քանի ուսումնասէր և բանիմաց անձինքների հետ աշխատելով հաստատեց և մի գրադարան-ընթերցարան, որ դպրոցի չափ կարևոր էր, Պոլսից և Կովկասից ստացվեցան հարիւրաւոր ընթերցանութեան օգտակար գրքեր, հայերէն և օտար լեզուներով։ Այդ միջոցին՝ գրական աշխարհին ծանօթ պ. Հ. Առաքելեանը, որ մեր քաղաքումն էր բնակված, գործում էր երիտասարդական մեծ եռանդով։ Պէտք է աւելացնել, որ ընթերցարանի կազմակերպութեան համար մենք նրա ջանքերին ենք պարտական։ Նոր հոգաբարձութիւնը մի քանի ուսուցիչներ հրաւիրեց Արամեան դպրոցի համար, որոնցից մէկն էլ Րաֆֆին էր։

—Երբ Արամեան դպրոցի հայերէն լեզուի ուսուցչութեան պաշտօնը Թիֆլիսում ինձ առաջարկեցին, ասում էր Րաֆֆին, սիրտս ճխալով ընդունեցի և անմիջապէս ուղևորվեցի դէպի Պարսկաստան։ Թիֆլիսը ես շատ եմ սիրում, ասում էր նա, բայց կեանքի պայմանները թանգ են այնտեղ։ Ես թէև մի կերպով ապրում էի, բայց միշտ ընտանիքիցս հեռու։ Եթէ ընտանիքս Թիֆլիս փոխադրէի, մեծ ծախքեր պէտք է անէի, որը ես չէի կարող գտնել, բայց այսուհետև հեշտութեամբ կապրեմ Թաւրիզում՝ ընտանիքիս հետ, որովհետև կեանքի պայմանները այստեղ աւելի նպաստաւոր

են։ Մանաւանդ որ ես շատ սիրում եմ մեր նոր սերունդի կրթական գործերով պարապելը։ Մի այլ առաւելութիւն կայ ինձ համար, որ այստեղ հանդարտ ապրելով մի կողմից թէ իմ հեղինակութիւնքը, կը պատրաստեմ տպագրութեան համար և թէ տեղիցս կը թղթակցեմ «Մշակին», որը ինձ համար աւելի քան ցանկալի է։ Արամեան դպրոցով մի նոր շրջան բացվեցաւ պարսկահայի առաջ, կազմելով մի նոր վերածնութեան դարագլուխ։

Դրանք էին ահա իսկական առիթները, որոնցից Րաֆֆին ուզելով օգտվել, նոր յոյսերով և նոր եռանդով շինված՝ եկաւ բնակվեց Թաւրիզ և մըտնելով ուսուցչական նոր կազմի մէջ, սկսեց շարունակել իր պաշտօնը Արամեան դպրոցում։ Հինգ տարի էր, որ ես չէի տեսել Րաֆֆիին. չքաւորութեան սև օրերը և դառն ապրուստը նրան այնպէս էին ընկճել, որ նա գրեթէ կմախք էր դարձել։ Նրա երեսի և ճակատի վրա դրօշմվել էին խորշոմներ. աչքերը առանց ակնոցի համարեա թէ լաւ չէին տեսնում, կերպարանքն աւելի մռայլ և ձայնն աւելի խռպոտ էր դարձել, նրա միջակ հասակը աւելի փոքր ծաւալ էր դարձել։ Մի բան, որ նրանում չէր փոխվել, դա նրա հպարտ ու բարձր պահած գլուխն էր, որ երբէք չէր խոնարհվում ոչ ոքի առաջ, և դա նրա ինքնաճանաչութեան յատկութիւններից մէկն էր։

Րաֆֆին ցերեկը պարապում էր դպրոցում, իսկ գիշերը հանգիստ նստած գրում էր և պատրաստում էր վէպերը՝ լի կորովով։ Մի քանի ամսվայ ընթացքում նա այնպէս փոխվել, այնպէս զուարթացել էր, որ կարծես նա թշուառութեան երեսը չէր տեսել։ Նրա դէմքը ցոյց էր տալիս, որ նա իր այժմեան վիճակից խիստ գոհ էր։ Մի բանից միայն, որից ինքն էլ երկիւղ էր կրում, դա նրա կուրծքն էր, որ սկսել էր խռխռալ։ Նրա թոքերը կարծես քանդվում էին։ Հանգուցեալը մի օր անհանգիստ պարկած էր իր սենեակում, երբ ես ներս մտայ. Նա սկսեց իր մասին այսպէս խօսել.

—Իմ կուրծքս իմ գերեզման իջնելու սանդուխքներն է պատրաստում թէև, բայց ինձ թւում է, որ դեռ մի քանի տարիներ էլ կապրեմ։ Ինձանում արդէն մարմին ու միս է դարձել գրելը, գիտեմ էլ, որ այսպէս վրա ընկած գրելը՝ իմ առողջութիւնն աւելի է խախտում, բայց ես չեմ կարող միանգամ սկսածը բաց թողնել։ Մեր նոր սերունդը ընթերցանութեան գրքեր չունի, ասում էր նա, անցել է «Երազահան» և «Պղնձէ քաղաքի» և դրանց նման գրքերով պարապելու ժամանակը. ես մեր նոր սերունդին ուշադրաւ և միտք մշակող նոր վէպեր, նոր պատմական վէպեր պէտք է տամ, որքան կը ներեն իմ ուժերը։ Թող աւելի բարձր գրուածքները, բարձր վէպերը գրեն նրանք,

որոնք աւելի բարձր ուսում են ստացել։ Ով ինչ կարող է։ Ես թէև այժմս ծերանալու վրա եմ բայց միտքս արթուն է, ես պէտք է կռուեմ նեղ հայեացքների և նախապաշարմունքների դէմ, որոնք հասարակութեան թարմ ձգտումները կաշկանդել են։ Ես անշէնջ պէտք է հետևեմ իմ այս ծրագրին։

Այդպէս նա գրեթէ ընդմիշտ ոգևորված առաջ էր տանում իր գաղափարական վսեմ գործը։ Թաւրիզում այդ միջոցին թէև չը կային աչքի ընկնող երևոյթներ, բայց պէտք է խոստովանած որ հասարակական կեանքը լաւ պայմանների մէջ էր։ Նկատելի էր, որ մի խումբ ուսման արժանիքը հասկացող պարոնների ջանքերով կազմվեցան դպրոց, ընթերցարան, հոգաբարձութիւն և ուսուցչական մարմին, որոնցով առաջ էր տարվում ուսման գործը հաստատ քայլերով։ Հայ հասարակութիւնը համակրանքով էր ողջունում այդ ազգային գեղեցիկ ու նորաբողբոջ երևոյթները Րաֆֆին էլ այդ միջոցին խիստ յարգված էր ամենքից։ Հասարակութեան մէջ հռչակ ունեցող անձինք՝ երբ մի հրաւէրք կամ ճաշկերոյթ էին տալիս, Րաֆֆին էլ հրավիրված էր լինում, բայց շատ քիչ անգամ էր մասնակցում։ Նա չէր սիրում աղմկալից կեանք և ատում էր հանդէսները։ Կերուխումի մէջ էլ նա խիստ չափաւոր էր և ժուժկալ։ Նրա սիրածը մի կտոր խորոված էր՝ մի կամ երկու բաժակ գինի.

իսկ լաւ թէյը և ընտիր ծխախոտը նրա անբաժան ընկերներն էին իր գրասենեակում։ Մի քանի բաժակ թէյ կը խմէր ու կըսկսէր ծխել, այնուհետև կը գրէր ու կը գրէր։

Ես carte blanche ունէի նրա մօտ գնալու համար։ Ձմեռային երկար գիշերները մօտեցել էին, որոնց նա անհամբեր սպասում էր։ Այդ երկար գիշերների մէջ էր գտնում նա իր հրճուանք, որպէսզի անձնատուր լինի իր գրելու վէպերին։ Երեկոյեան ժամը 6-ն էր, որ ես մի օր մտայ նրա գրասենեակը։ Այս իրիկուն, ասացի ես պ. Թումանեանցների տանը հրաւէրք կայ, գիտեմ, որ դուք էլ հրաւիրված էք, վերկացէք միասին գնանք։

—«Դուք գիտէք, որ ես չեմ կարողանում հաշտվել հրաւէրքների հետ, պատասխանեց Րաֆֆին, այս իրիկուն, որքան ինձ յայտնի է, այնտեղ կը լինեն բազմաթիւ հիւրեր, լաւ ուտելիքների հետ կը լինեն և լաւ ըմպելիքներ, և դուք ինչ էք սպասում մի այդպիսի ժխորից։ Անսովոր կերակուրները, անսովոր կեանքի շրջանը ինձ այնպէս յոգնեցնումեն այնպէս ջարդում, որ մի քանի օրեր են պէտք լինում ինձ, մինչև որ ես իմ նախկին տրամադրութեան վերադառնամ։ Նրանք ազնիւ մարդիկ են, ասեց նա, և մեզ կը ներեն մեր բացակայութեան համար, արի չը գնանք, ես սիրում եմ փոքրիկ բարեկամական շրջանը, այս իրիկուն այստեղ ինձ մօտ անցկացնենք, ես կարծում եմ, որ վատ չի լինի։

Շատ ճիշտ է ձեր նկատողութիւնը, պատասխանեցի ես, բայց, այնուամենայնիւ մի առանձին կարիք էլ կայ սովորական կեանքին փոփոխութիւն տալու համար։ Հանդէսները, բազմամարդ ընկերութիւնները և զանազան շրջաններն էլ ունեն նշանակութիւն։ Պէտք է մտնել այդպիսի շրջանները՝ թէ լսելու և թէ խօսելու համար։ Լաւ չէ այդպէս կորված, այդպէս անջատ ապրելը, պէտք է մօտենալ և շփվել հասարակական խաւերի հետ։

Դուք իմ խօսքերի համար կացին ունէք պահած, ասեց նա, և հազիւ թէ համոզվեց։

Մենք գնացինք։ Սեղանի վրա նա իրան այնպէս պատկառանքով էր պահում, որպէս մի նորահարս նա շատ չէր խօսում, ուտում էր շատ սակաւ քանակութեամբ, և երբեմն էլ ակնոցների տակից նկատում էր սեղանակիցներին։ Նրա մթնգած դէմքը նկատելի էր։ Բայց երբ սեղանի վերջում խօսք եղաւ մի օրիորդաց դպրոց հիմնելու և մի մշտական ուսուցչական խումբ պահելու մասին, Րաֆֆիի տրամադրութիւնը փոխվեց, և նա սկսեց հրապուրված խօսել։

—Մեր մայրերը դաստիարակված չը լինելով մեզ ոչինչ չը սովորեցրին, ոչինչ չը տուին, ասեց նա, հայ կինը նոյնն է մնացել գրեթէ ամեն տեղ,

ես չեմ խօսում բացառութիւնների վրա։ Պարոններ, եթէ դուք ցանկանում էք կրթված զաւակներ ունենալ, դրա համար էլ հարկաւոր է կրթված մայրեր պատրաստել, և այդ պէտք է սպասել մի օրիորդական դպրոցից, որի անհրաժեշտութիւնը ակներև է և ոչ միայն Թաւրիզում, այլ ամբողջ պարսկահայերի մէջ։ Կրթութիւնը նախ ստացվում է ընտանիքից, իսկ յետոյ դպրոցից։ Կրթված մայրը օրօրոցում պէտք է նախապատրաստէ իր երեխային նրա ականջներին հայկական օրօրներ ասելով, Աղասու մօր երգը հնչեցնելով։ Երկա՜ր շատ երկա՜ր կը տևէ մինչև որ մեր իգագական սեռը Կոռնելիաներ ծնէ, յարուցված խնդիրը ստիպողական է և անհրաժեշտ, պէտք է առաջնութիւն տալ օրիորդական դպրոցին։ Իսկ մշտական ուսուցչական խումբ պահելը՝ դեռ վաղաժամ է Թաւրիզի համար, դա այն ժամանակ կարելի կը լինի, երբ մեր դպրոցը զարգացած աշակերտներ կը հասցնէ, առ այժմ եղածները պէտք է պահպանել և լաւ վարձատրել։ Ես շատ անգամ դառնապէս գանգատվել եմ, թէ ժողովուրդը լաւ չէ վերաբերվում դէպի ուսուցիչները, բայց պէտք է այն նկատի առնել, որ մեր ուսուցիչներն էլ շատ քիչ բան են տուել հասարակութեան, գոնէ մինչև այսօր։ Տեսնո՞ւմ էք «Մշակ» լրագիրը ի՞նչպէս է յարգվում հասարակութիւնից, որովհետև նա ծնվել է ժողովրդի համար, նա տա-

լիս է հայ ժողովրդին այն նիւթը, այն պաշարը, որոնք նրան օրըստօրէական կերպով պէտք են և օգտակար։ Այդպէս էլ մեր ուսուցիչները պէտք է տան հասարակութեան, ազգին լաւ կրթված և պիտանի անդամներ, որպէս զի իրանք էլ յարգվեն։

Մեր նորահաստատ ազգային ընթերցարանը նախանձելի դիրք էր բռնել նա, բացի գրադարան լինելուց, դարձել էր և մի տեսակ հանդիպատեղ։ Վաճառական դասից, ուսուցիչներից և ընթերցասէր երիտասարդներից շատերը նրա բացման որոշ երեկոներին ներկայ էին լինում մինչև գիշերվայ ուշ ժամանակ՝ զբաղված լրագիրներ կարդալով և գրախօսութիւններ անելով։ Ընթերցարանը ունէր տեսուչ, գանձապահ և քարտուղար, որոնք ընտրվում էին անդամակիցների ձայներով։ Քարտուղար էր ընտրված Րաֆֆին, ուր գրեթէ միշտ գալիս էր թէ իր պաշտօնը կատարելու, թէ խօսելու և թէ ընթերցանութեան գրքեր վերցնելու։ Ես նկատում էի, որ նա վերցնում էր Ժօրժ Զանդի, Էօժէն Սիւի, Ալէքսանդր Դիւմայի և Վ. Հիւգօի հատորներից, որոնք թարգմանված էին պօլսական աշխահաբառով Պօլսում և Զմիւռնիայում։ Դրանց մէջ՝ նա Հիւգօի գրուածներից յետոյ փոքր ի շատէ նշանակութիւն էր տալիս Մօնթէ-Քրիստօին, իսկ հրապուրված և ծարաւի կերպով կարդում էր Հիւգօի հատորները՝ որպէս յափշտակված սիրահար։ Տուրգենեվի գործե-

րից էլ նա կարդում էր և շարունակ կասեր, որ դրանք
իրանց գեղեցիկ դարձուածքներով և պարզու-
թեամբ ռուս գրականութեան զարդն են կազմում։
Ես մի օր ներս մտնելով բանաստեղծի գրա-
սենեակը և նկատելով նրան խորասուզված «Թշու-
առներին» ընթերցանութեան մէջ, ուզեցի նրան մի
փոքր գրգռել, և բացականչեցի.
—Ինչ էք այդպէս վրա պրծել այդ ֆանֆա-
րօն ֆրանսիացու գրուածքի վրա, դրանք ընթեր-
ցողի ուղեղում միայն երևակայական տպաւորու-
թիւն են թողնում, աւելի ոչինչ։
Րաֆֆին գլուխը բարձրացնելով և մի ապշած
հայեացքով ինձ նայելուց յետոյ, պատասխանեց.
—Մի այդպիսի կարծիք ես երբէք չէի սպա-
սում ձեզանից. ես այն կարծիքի էի, որ դուք Հիւ-
գոի փառաբանողներից էք... Ո՛չ, անկասկած, դա
մի կատակ է, ես ձեզ շատ անգամ նախանձել եմ,
ասեց նա, տեսնելով Հիւգոի բնագիր հեղինակու-
թիւնները ձեր գրասեղանի վրա, որոնք ես չեմ
կարողանում կարդալ։ Ես կարդում եմ միայն հայ-
երէնի թարգմանածները, որոնք բնագրի համն ու
հոտը չունեն, և աւելացրեց, «Երանի է քեզ ֆրան-
սիա, որ Հիւգոի պէս բանաստեղծ ես ծնել, և ո՞վ
կարող է հաւասարվել նրան»։
Վերջին խօսքերը կարծես նա իր սրտի խոր-
քերից հանեց։ Պէտք է ասած, որ Րաֆֆին իրա-

ւունք էլ ունէր նախանձելու, որովհետև նա ոչ մի
եւրօպական լեզու չը գիտէր, բացի ռուսերէնից,
այն էլ ոչ մեծ չափերով։ Եթէ նա գիտենար եւ-
րօպական լեզուներ և ունենար բարձր ուսում,
գուցէ նա այդ չափերով չէր ենթարկվի ոչ այս, ոչ
այն հեղինակի դարձուածներին և ոչ էլ Հիւգոի
ազդեցութեան, որ պարզ երևում է համարեա թէ
նրա վիպագրութիւններից շատերի մէջ։ Հաւատա-
լով որ այդ այդպէս է, հաւատալով, որ նա դաւա-
ճանել է ռոմանտիզմի և գեղարուեստի կանոննե-
րին, հաւատալով որ նա նմանողութեան հետևեով
զօռով խուրացրել է ստուալաթիւ էֆֆեկտներ և
կրկնութիւններ, որոնցով հոգեբանօրէն դատողները
պէտք է ասեն, թէ դրանք բանաստեղծի հետևո-
ղութեան պակասութիւններն են, բայց այսու-
հանդերձ Րաֆֆին մնում է միշտ հայ վիպագրա-
կան աշխարհի առաջընթաց զինուորը։ Նրա մէջ
կամքը այնքան զօրեղ է եղել, որ յաղթելով ստու-
ար դժուարութիւններին՝ նա միայնակ առաջ տա-
րաւ իր բազմաթիւ աշխատութիւնները՝ արիւն
քրտինք թափելով։
Ես, շօշափելով նրա պակաս կողմերը, այս էլ
ասեմ, որ խալֆայական դպրոցից դուրս եկած մի
բանաստեղծ է նա, մի բնական ձիրքերով օժտված
բանաստեղծ, որին չէ աջողվում բարձր ուսում
ստանալ, որին և չէ աջողվում հայերէն լեզուով

նպատակայարմար վիպական գրքեր գտնել, որոնցով կարողանար իր բեղմնաւոր ուղեղը զօրեղացնել։ Դիմել, օտար լեզուներով կլասիքական, քնարերգական, ռոմանտիքական և այլն հեղինակութիւնների, չէր կարող։ Ուրեմն նրան մնում էր միայն մի ելք։ Դա այն ելքն է, որին էլ դիմել է նա։ Նրա թերութիւնն էլ կայանում է նրա մէջ, որ շատ է ենթարկվել նմանողութեան, և այդ է նրա հոգեբանական թոյլ կողմը։ Ուրիշ կերպով էլ Րաֆֆին Րաֆֆի չէր կարող լինել, շատ շատ նա մեզ համար մի աշուղ պիտի դառնար։ Նկարագրելով զանազան լեգենդաներ, հին զրոյցներ և աւանդավէպեր «Ասլի Քարամի» նման։ Կամ պիտի երգէր մի այսպիսի բան։

Ով էր տեսել էս աշխարհս էս օրին,
Մեր մեղացը շարժը քանդեց Ագուլին։

Եւ ինչպէս կարելի է համեմատել այդ երգուածը «Ձայն տուր ով ծովակի» հետ։ Այլ պայմանների մէջ են ծնվել կրթված աշխարհի բանաստեղծները։

Բանաստեղծը շարունակ իր գրասեղանի վրա պահում էր պոլսական աշխարհաբառով թարգմանած վէպերից, ըստ մեծի մասին Հիւգօից, բայց նա ատելով ատում էր արևմտեան աշխարհաբառի գրելու ձևը, ոճը և թափթփած տառադարձութիւնը։ «Պոլսական բարբառը, ասում էր Րաֆֆին,

բառերով է միայն հարուստ, իսկ նրա երկարաձիգ նախադասութիւնները և տարօրինակ հնչմունքները անտանելի են. օրինակ փան մը ըսել (մի բան ասել), քորց մը ընել (մի գործ անել), փաւական քէշ կըլլայ (բաւական գէշ կը լինի), թասըս սորվել եմ (դասըս սովորել եմ) և այլն խիստ անսովոր են հայ ականջների համար, և կարծես դրանք թմրած մտքերի հնչմունքներ լինեն։ Այդ խոտորմունքների պատճառը, ասում էր նա, աւելի Մխիթարեան գիտնական հայրերն են եղած, որ փոխանակ նոր աշխարհաբառը այդ ախտերից մաքրելու, աւելի և աւելի տարածել են»։ Երբ ես նկատում էի, որ Րաֆֆին լաւ տրամադրութեան մէջ է, առիթներ կը տայի, որ նա մի քիչ խօսէ։ Գիշեր է և մենք ազգային ընթերցարանումն ենք։ Ես երկար թերթում էի Պոլսից ստացված լրագիրները. յանկարծ Րաֆֆին այդ նկատելով հարցրեց.

—Այդ ի՞նչ էք կարդում։

—Պոլսից նոր ստացված թերթերը,

—Ի՞նչ էք գտնում դրանց մէջ կրթական։

—Ես մի քիչ սիրում եմ պոլսական ոճը։

—Ինչու էք սիրում։

—Որովհետև նա աւելի կոկված է քան թէ մերը։

—Ինչպէ՞ս էք գտնում նրա ուղղագրութիւնը։

—Է՛հ, դա էլ մի մօդաի պէս բան է, էլի։

—Իսկ ի՞նչ կասէք նրանց լրագրական ուղղութեանը։

—Նրանց ուղղութիւնն էլ մի տեսակ ուղղութիւն է։

—Ո՛չ, ասաց Րաֆֆին, դուք գործին թէ քննական աչքով չէք նայում և թէ ձեր էսթեթիկան լաւ զարգացած չէ։

Րաֆֆին երբեմն ինձ հետ մենտօրի պէս էր վարվում որովհետև նա ինձանից 6 տարով էլ մեծ էր։

Պօլսական—տիրացուական ուղղութիւնը, վրա բերեց նա, որը դուք սիրում էք, չունի իր հրահանքիչ կողմերը։ Պօլսի լրագրութիւնը՝ երկար տարիներ ախ ու վախ քաշելով, ափսոս, աւաղ Հայաստան կանչելով և զանազան հառաչանքներ արձակելով՝ ըթամիտ է դարձրել տեղական ժողովրդին, խարխափեցնելով նրան այդ տափակ ուղղութեամբ և մեռելային հեծեծանքներով։ Ցաւալի է, ասաց նա, որ նրանց խմբագիրները նոր սերունդին չեն տալիս սթափեցուցիչ գրական պաշար։ Ժամանակն է, որ նրանք իրանց լրագրական ուղղութեան փոփոխութիւն տային՝ մօտեցնելով նրան ժողովրդի սրտին, կրթելով նրանց թմրած և ապշած միտքը։ Ժամանակ է, որ նրանք թօթափելով տղայական խանձարուրքը, փոխանակ իրանց էֆէնդի—բէյերի ունեցած ապրուստը, բնակարանը և

կեանքի զանազան երևոյթները նկարագրելու՝ ժողովրդին տային այնպիսի կենդանի նկարագիրներ, այնպիսի զարթեցնող վէպեր, որոնցից նա կարողանար մտաւոր ուժ և պաշար հաւաքել։ Ժամանակիս պահանջն ուրիշ է. դուք անշուշտ յիշում էք մեր Միրան աղային, մնացածը հասկանալի է։

Ես կարծում եմ, որ ընթերցողը ինձ հետ կը համաձայնի ենթադրելու, որ Րաֆֆին իր պարզ ու վսեմ գաղափարներով և իր զօրեղ գրչով միշտ մնացել է ժողովրդի սրտին մօտիկ, ժողովրդի մոռացված խաւերը նկարագրող վիպասան առանց սեթևեթելու։ Կարդալով նրա բազմաթիւ նամակները, յօդուածները և հեղինակութիւնները, ես գոնէ չեմ յիշում նրա մեծաքանակ գրուածքներում մի այնպիսի վայնասուն, որպիսի յիշատակվեց վերևում։ Մի անգամ ես հանդիպել եմ նրա գրուածքներից մէկում «(Հիւսիսափայլի)»մէջ որտեղ Րաֆֆին, խօսելով հայրենասիրական բուռն զգացմունքներով, բերում է մի այսպիսի հառաչանք, այն էլ մի սրբազան հեղինակի հոգեբուխ երգերից

«Հուրն սիրոյ իմոյ ազգի, միշտ ի խարոյկ
սրտիս վառի։

«Ջուրրք արտասուաց ոչ շիջանի, օգնեա՛ Յիսուս Փրկիչ բարի»։

Րաֆֆիի համար առանց գրելու օր չը կար։ Խուսափելով կեանքի ամեն տեսակ լաւ ու վատ

երևույթներից, նա լարվում էր իր գրասեղանի առաջ և կուրծքը դէմ տուած՝ գրում։ Նա այն տեսակ գրողներից էր, որոնք քիչ են մտածում և շատ են գրում։ Նրա միակ հոգեկան մխիթարութիւնն այն էր, որ իր վշտահար կուրծքի խորին վէրքերը, իր նուիրական գաղափարները ամփոփէ իր սիրած երկում։ Երբ նա խորասուզված էր լինում «Կայծերը» գրելու մէջ, այնպիսի թախծալի կերպարանք էր ընդունում, որպէս մի սգաւոր։ Ոչ մի կատակով, ոչ մի զուարճալի խօսքերով, նոյն իսկ ցնծութեան աղաղակներով չէր կարելի հրապուրել նրան։ Դժուար էր հեռացնել նրան իր մի անգամ սկսածից, լինէր դա մի մեծ գրւածք կամ մի յօդուած։ Նա իր մտքում մի անգամ յղացած պատկերը, բազմակողմանի ամբողջը մինչև չը վերածէր թղթի վրա, նրանից չէր բաժանվի։ Այդ դէպքում նա մոռանում էր իր մօտ եղած հիւրը, իր ընտանիքը, մինչև անգամ իր կեանքը։

Մի կիրակի օր, արդէն ժամը երեքն էր, երբ ես այցելեցի վիպասանին, նա պինդ կըպած էր իր գրասեղանին։ Վեր կացէք, ասացի ես, գնանք մի պտոյտ անելու, տերունական օրերին շատ չեն զբաղվում, այլ հանգիստ են մնում և մի քիչ էլ զբօսանքներ են անում։

—Այո՛, պատասխանեց, նա, ես էլ գիտեմ, որ կիրակի օրերում գեղեցիկ զբօսանքներ են անում

մի լաւ ճաշից յետոյ, բայց արդէն ժամը երեքն է, և ես դեռ չեմ ճաշել և ախորժակ էլ չունեմ։ Զափազանց աշխատութիւնը ախորժակս կտրել է։

Ես, կարեկցելով նրան և մի քանի մտերմական կշտամբանքներ անելով, աւելացրի, որ այդչափ վրա ընկած գրելը կարող էր նրա առողջութեան վտանգ սպառնալ։ Իսկ յետոյ սկսեցի նրան մի նորութիւն, մի հետաքրքիր անցք պատմել հանգամանօրէն, որ նոր էր տեղի ունեցել մեր քաղաքում։ Ես խօսել էի մօտ 10 րոպէ, բայց նա այդ միջոցին առանց խանգարվելու թէ գրել էր և թէ լսել միաժամանակ։ Երբ ես դադարեցի խօսելուց, նա երեսը դարձրեց դէպի ինձ և կրկնեց իմ ասածները առանց մի կէտ անգամ մոռանալու, իր կողմից էլ զանազան նկատողութիւններ անելով։ Եւ այդ առաջին անգամը չէր, ես մի քանի անգամ փորձել էի նրա մտքի այդ կարողութիւնը։ Այդ օրը, նա աշխատում էր «Կայծերի» վրա։ Րաֆֆին մի այսպիսի սովորութիւն էլ ունէր, որ երբեմն իր գրածներից մի պրակ կը դնէր սեղանի վրա և կը յանձնէր իր բարեկամների ուշադրութեանը, որ կարդան, երբեմն էլ ինքը կը կարդար իր յատուկ տոնով։ Վերջացնելով մի կամ երկու գրուածքը՝ ապա կը հարցնէր. «Ի՞նչ տպաւորութիւն թողեց ձեզ վրա, ես կարծում եմ, որ հաւանեցիք, այնպէս չէ՞»։ Բայց անկարելի էր մի լեթեև նկատողութիւն

անել կամ մի փոքրիկ փոփոխութիւն առաջարկել, նա անմիջապէս իր պատճառները հեղեղի պէս դուրս կը թափէր, որ իր գրածն ու ասածը լրիւ հաստատէ։ Նա շատ յամառ էր իր համոզմունքի մէջ և հաւատարիմ իր գրչին ու ընդգծած գաղափարներին։ Նա թէ իր հարուստ և թէ չքաւոր միջոցներին միշտ հաւատարիմ մնաց իր տաժանակիր բեռին, որ տանում էր առանց յոգնելու, և որը մի մարդու, մի հասարակ արարածի գործ չէր։ Նա գիտէր թէ ինքն ինչ է. նա իրան աւելի լաւ էր ճանաչում։

Ես մի ուրիշ անգամ էլ այցելեցի Րաֆֆիին և գտայ նրան այդ օրը իր բնակած տան բակում՝ զբաղված իր բազմաթիւ ծաղկամաններով, որոնց մէջ եղած գոյնզգոյն և հոտաւէտ ծաղիկները ինքն էր ցանել, տնկել և մշակել։ Ամառ էր, ծաղկամանները շարված էին ստուէրում՝ բագի հիւսիսային պատի երկարութեամբ, և ինքն էլ թեքված դրութեամբ, նրանց զննողական հայեացք տալով, մօտից տնտղում էր ու իր մատներով մի ինչ որ բան էր շինում, որ ինքն էր միայն հասկանում։

—Այդ ի՞նչ էք անում, հարցրի ես։

—Տեսնում էք էլի, ինչպէս գիտէք, ես ծաղիկներ շատ եմ սիրում և դրանք շատ խնամք են պահանջում հակառակ դէպքում նրանք կը փչանան։ Ծաղիկների բուրմունքը նրանց անուշ հոտը

մարդու ճաշակն ու հոտոտելիքը ազնուացնում են։ Նստեցէք հէնց այստեղ, և երեկոյեան թէյը այստեղ խմենք, ծաղիկների հանդէպ։ Թէյ խմելու միջոցին, ես նկատեցի, որ բանաստեղծը ոչ միայն տրամադիր է երևում խօսելու, այլ և կատակներ անելու։

—Ես ցանկանում եմ, ասաց նա, որ այսօր ձեր ճանապարհորդական տոպրակը էլի մի քիչ թափահարեմ։

Ուզում էր ասել, որ ես իմ ճանապարհորդական տպաւորութիւններից դարձեալ մի բան պատմէի նրան։ Նախորդ տարին ես, վերադառնալով Թէհրանից, նրան նկարագրել էի մայրաքաղաքի առաջադիմութիւնը, նորանոր շէնքերով, եւրոպական ճաշակով շինված նոր փողոցները, ճաշակաւոր պարտէզները և պալատները և այլն։ Րաֆֆին, որպէս պարսկաստանցի, շատ էր փափագում, որ մի անգամ Թէհրանը տեսնէ, բայց այդ նրան չը յաջողվեց։ Դրա համար էլ նա միշտ ախորժանքով էր լսում ճանապարհորդներից՝ հարաւային Պարսկաստանի և մայրաքաղաքի նկարագրութիւնները։ Վերջապէս, ես այդ օրը նրան պատմեցի մանրամասնօրէն կրակապաշտ պարսիկների մասին, որոնք այսօր գեբրներ են կոչվում։ Նրանց մեծ մասը ապրում է Պարսկաստանի հարաւային կողմերում և աւելի մեծ բազմութեամբ։ Եզդ քաղաքում։

Նրանք ազատ են իրանց նախնիքների հին կրօնքը պաշտելում, խօսում են հին պարսկերէնը, որ այժմեան պարսիկներին անհասկանալի է։ Մի քանի տասնեակ գէբրի ընտանիքներ էլ ապրում են Թէհրանում, որոնց նշանաւորներից մի քանիսի հետ ես անձամբ տեսնվել և խօսակից էի եղել։ Նրանք դիմագծով, հագուստով և սովորոյթներով, թէ այր և թէ կին, այժմեան պարսիկներից տարբերվում են։ Դրանք պատմելուց յետոյ, ես որպէս ականատես, նկարագրեցի գէբրների գերեզմանատունը, որ Թէհրան քաղաքից մի քանի վերստ հեռու է շինուած կառավարչական կարգադրութեամբ։ Գէբրները իրանց մեռելներին չեն թաղում այլ փոխադրում են այնտեղ, ուր իւրաքանչիւր ընտանիք իր որոշ տեղն ունի մեռել պահելու համար։ Գերեզմանատունը մի մեծ պարսպապատ տարածութիւն է՝ կտրտված և բաժանված բազմաթիւ քառակուսի ածուների, որոնց մէջ էլ կանգուն կերպով թողնում են դիակը, երեսը դարձրած դէպի արեգակը և դիակի թևերի տակ փայտէ յենարաններ դնելով, որ կանգուն մնայ ածուի մէջ։ Ածուն ունի մի քառակուսի մէթր տարածութիւն և կէս մէթր խորութիւն։ Դիակի միսը, երկար մնալով ածուի մէջ, որ մի տեսակ օջախ է հետըզհետէ սկսում է թուլանալ, հոտել և վայր ընկնել ածուի խորութեան մէջ և մի մասն էլ գիշատիչ

թռչունների և գազանների բաժին է դառնում։ Այդ գերեզմանատունն ասվում է «Բիբը Շարաբան» որի նկարագրութիւնը խոր տպաւորութիւն թողեց Րաֆֆիի վրա։ Նա լսում էր մեծ հետաքրքրութեամբ։

Անցան մի քա՛նի շաբաթներ։ Րաֆֆին համարեա թէ ամեն կիրակի օր ներկայ էր լինում պատարագին։ Մի կիրակի օր, ես դուրս գալով եկեղեցուց, տեսայ որ Րաֆֆին ինձանից աւելի շուտ է դուրս եկել Բերդաթաղի եկեղեցուց և ման է գալիս վրդովված, առաջնորդարանի դռան առաջ։ Երբ ես մօտեցայ նրան, այսպէս խօսեց.

—Այս ի՞նչ է, մարդ չի կարողանում եկեղեցում պատարագի արարողութիւնը, նոյն իսկ «սուրբ սուրբի» ժամանակ, սրբազնագործութեան խորհրդին ուշադիր լինել և ջերմեռանդութեամբ աղօթել։ Մարդուս խանգարում են, մի կողմից վաճառական դասը շշուկներ հանելով, բօրսայի, բարաթի և առևտրի որպիսութիւններն են իրարու հաղորդում, միւս կողմից էլ եկեղեցականը գանձանակադրամը վերածելով սեղանի վրա ահագին դղրդիւնով, սկսում է համարել։ Աստուծոյ տաճարը սեղանաւորների տուն են դարձրել, այնպէս որ մարդ չը գիտէ թէ դրանց որին լսէ։

Ես կարող եմ բացարձակ ասել, որ Րաֆֆին մի ջերմեռանդ քրիստոնեայ էր և որքան ես նկա-

տել եմ, նա, մանաւանդ եկեղեցում, իրան խիստ համեստ էր պահում և ամենայն երկիւղածութեամբ լսում էր պատարագի արարողութիւնը։ Մենք, եկեղեցու բակից դուրս գալով, գնացինք Րաֆֆիի բնակարանը, որ եկեղեցուն խիստ մօտ էր։ Երբ մտանք նրա գրասենեակը, նա վեր առնելով իր գրասեղանի վրա դրված «Մշակի» մի քանի համարները, որոնք նոր էին ստացվել և տալով ինձ, ասաց. կարդացէք, դրանց մէջ են «Բիբը Շարաբանը», որ դուք ինձ պատմեցիք և տեսէք թէ դուք էք լաւ նկարագրել դրան, թէ ես։

«Բիբը Շարաբանը» տպվել էր 1876-ին «Մշակի» բանասիրականում։

Հազիւ թէ մի դպրոցական տարի էր բոլորել, որ Րաֆֆին Թաւրիզում ուսուցչութեամբ էր պարապում, նորանոր փոթորիկներ սկսեցին բարձրանալ նրա դէմ։ Ինչպէս տեսանք, նա Սալմաստում մտրակելով մի խումբ հայ վաճառականների պակաս կողմերը, շարժել էր նրանց զայրոյթը և սևնախանձով լի ատելութիւնը դէպի իր անձը։ Նա իր ետևում թողել էր մի անհաշտ հակառակորդ բանակ, որից մի քանի հոգի օձի պէս սողալով մտել էին Թաւրիզ։ Նրանք, միանալով մի քանի Թաւրիզեցիների հետ, սկսեցին Րաֆֆիից զանազան հին և անարդար դաֆթարններով դրամական պահանջներ անել։ Մի քանի սրտացաւ հայ վաճա-

ռականներ, մէջ մտնելով իբրև իրաւարարներ։ Ժողովներ արին և գործը քննեցին, որոնց մէջ նրա հակառակորդները չը կարողանալով իրանց առնելիքները հաստատել՝ աւելի և աւելի զայրացան։

Եւ այդ եղաւ նրա հալածանքի սկիզբը։ Հակառակ հոսանքը Րաֆֆիին Սալմաստում պռօտ և ուրացող էր անուանել, Թաւրիզում նոր կազմված հակառակ բանակն սկսեց նրան անուանել որպէս առևտրական խարդախ, թերահաւատ, սալմաստեցի խաչագող և այլն։ Հալածող բանակը ատելութեամբ լցված՝ Թաւրիզի հասարակութեան մի մասն էլ գրգռելով նրա դէմ, իր թևը ստուարացրեց և սկսեց բացարձակ պահանջել, որ նա դպրոցից հեռանայ իբրև ուսուցչութեան իսպառ անյարմար մարդ, այլ և այլ անվայել զրպարտութիւններ անելով։ Իսկ Րաֆֆին սառնարիւն անտարբերութեամբ ուշ չէր դարձնում այդ սպառնալիքներին, հանդարտ շարունակելով իր ուսուցչական պաշտօնը։ Այս խայտառակ միջնադէպը երկար ամիսներ ձգձգվեց։

Սա մի թշուառ երևոյթ է, որ մենք մեր հասարակական գործիչներին ծածկում ենք սև տիղմով, որպէս զի նրանց ստուէրն էլ չը տեսնվի։ Հայը միշտ հայ է մնացել գրեթէ ամեն տեղ իր նկատելի պակասութիւններով։ Եթէ Րաֆֆին իբրև մարդ մի քա-

նի թերութիւններ է ունեցել, դա կարող է պատահել. «ով իցէ, որ ոչ մեղիցէ», բայց նա ունեցել է և այնպիսի բացարձակ առաւելութիւններ, այնպիսի գրական հրաշալի տաղանդ, որ մեր օրերում շատ քիչերն են նրան հաւասարվում։ Անձնական հաշիւների, անձնական ատելութիւնների համար Րաֆֆին ոչ միայն Պարսկաստանում հալածվեց, այլ նոյն իսկ ռուսահայոց մէջ էլ, ուր մի խումբ հակառակորդներ զինված զզուելի նախանձով, թէ նրա անձը և թէ նրա վիպագրութիւնները յանիրաւի քննադատեցին, աւելացնելով թէ նա կռօ է, խաչագող է, գրական գողութիւն անող է և այլն։ Այդպիսի բաղդի են հանդիպել մեր գրական գործիչներից շատերը։ Օրինակներ պակաս չեն։ Եւ Րաֆֆին այնքան շատ չէր մտածում իր նիւթական կարողութեան կորուստի համար, որքան նա մտածում էր Թաւրիզում պատահած անախորժ դէպքերի վրա։

Երբ նրա հակառակորդները իրանց շինովի թղթերով և խարդախած մուրհակներով նրանից պահանջներ էին անում, երբ նա լսում էր, որ Թաւրիզի հասարակութեան մի մասն էլ զայրացած է իր դէմ, նա ընկնում էր սրտի տագնապի մէջ, մի տեսակ տենդային դրութեան մէջ։ Երբեմն սառնասիրտ կերպով էր վերաբերվում Րաֆֆին դէպի հակառակ հոսանքի բռնած ընթացքը և

քրիստոնէական հեզութեամբ տանում էր այն ամեն անտեղի անարգանքները, որ տեղում էին նրա գլխին, բայց երբեմն էլ նա դուրս էր գալիս իր խաղաղ դիրքից և ազդու հարուածներ էր տալիս իր անիրաւ հալածողներին։ Նա նկատում էր. որ նրանք մի առիթ են սպասում, որ նոր խռովութիւն հանեն իր դէմ։

—Ես այժմ համոզվեցի ասում էր Րաֆֆին, որ մեր երկիրը բնաւ յարմարութիւն չունի գրական գործիչի և ուսուցչի համար։ Չը կայ լաւ շրջան, չը կան կրթիչ և հրահանգիչ հաստատութիւններ, որոնցից մարդս կարողանար օգտվել։ Ոչինչ չը կայ նպաստող, լաւ տրամադրութիւն էլ, ինչպէս գիտէք, այստեղ շատ սակաւ կարող է լինել։ Երբ ես մտքով խորասուզված եմ լինում մի բան գրելու համար, յանկարծ տեսնում էք, հանգիստս վրդովվելով, կտրեցին մտածութեանս թելը, որին այլ ես չեմ կարող վերադառնալ և նա յաւիտեան կորաւ ինձ համար։ Հարկաւոր է լինում մի աջող դէպք, որից ես նոր ի նորոյ ոգևորվեմ բայց դրա փոխարէն առաջ էր գալիս մի թշուառ երևոյթ, մի խայտառակ դէպք կամ մի զզուելի գործ։ Ոչ մի տեղում հանգիստ և բարօրութիւն չեմ գտնում, ինչ թշուառ եմ ես... Այդպէս է գրած իմ բաղդում։

Բանաստեղծի սիրտը լցված էր խորին թախ-

ծութիւններով. Նա իր սրտի անհամար վշտերը արտայայտում էր մինը միւսի յետևից։ Այդպիսի սև մտածութիւնները այդ միջոցին այնպէս էին ազդել նրա վրա, որ մի քանի օր իբրև հիւանդ նա տանից դուրս չէր գալիս։ Ես գնացի նրան տեսնելու և գտայ նրան պառկած, թմրածի պէս։ Նրա թուխ դէմքը աւելի մռայլած էր, շարժուածքը թոյլ և մտային կարողութիւնը կարծես կորցրածի պէս լինէր։ Նա աւելի նիհարել էր և ակնոցներն էլ աչքերից հանելով՝ թէ նրա ցաւագար աչքերը և թէ նրա կերպարանքի փոփոխութիւնը մի բոպէ զարհուրելի տպաւորութիւն թողեցին ինձ վրա։ Նա ինձ իր սովորականի պէս չընդունեց. ես երբէք նրան այդպիսի անելանելի վիճակում չէի տեսել։ Չը նայելով նրա սառն ընդունելութեան, ես նստելով մի թիկնաթոռի վրա՝ սկսեցի կատակներ անել։

—Դուք հիւանդ չէք, ասացի ես, բայց ես, կուզէի գիտենալ, թէ ինչ է պատահել ձեզ հետ։ Երևի դուք շատ էք մտածում այն հին ու մին անախորժ հաշիւների մասին կամ լսած կը լինէք մի քանի մարդկանց անտեղի սպառնալիքները. այդ ոչինչ, դրանք անցաւոր բաներ են։

—Ինչպէս թէ դրանք անցաւոր բաներ են, ասաց Րաֆֆին, դրանք այնպէս վատ են ազդել ինձ վրա որ ես ջղային հիւանդութիւն եմ ստացել. անցեալ

գիշեր ես անցրել եմ զառացանքների մէջ։ Ես կարծում էի, թէ Թաւրիզում աւելի հանգիստ կապրեմ, բայց հանգամանքները այնպէս թարս են եկել, որ ինձ թւում է թէ ես այստեղ պէտք է նահատակվեմ։ Ամբողջ օրը ես ուսուցչութեամբ եմ պարապում, գիշերն է մնում ինձ գրելու, մտածելու և հանգստանալու բաժին աւելացնենք և այն էլ, որ աշակերտների շարադրութիւններն էլ պէտք է որ գիշեր ժամանակ սրբագրեմ։ Ճշմարիտ, որ մէջիցս կէս եմ լինում մի անշնորհք ամսականի համար, այն էլ մշտական չէ։ Մեր մէջ գրական գործիչները նախանձելի դիրք չունեն. ուսուցչութիւնն էլ, պէտք է ասած մի ապերախտ պաշտօն է, մաշող և տանջող պաշտօն։ Ընկել եմ մի փշոտ հողի վրա. ես և ընտանիքս այսօր կուշտ ենք, վաղը սոված. գրողի առաջ պէտք է լինի լայն ասպարէզ և ընդարձակ միջոցներ, իսկ իմ ասպարէզը, իմ կեանքը տեսնում էք էլի... Եւ սա կեանք չէ, մի կտոր զահրումար է... Իմ տարիքը, վրա բերեց բանաստեղծը, շատ չեն, բայց ես զգում եմ, որ լաւ առողջութեան մէջ չեմ, իմ ուժերը սպառվում են... Այսպիսի բաղդի են ենթարկվել մեր մէջ գրեթէ բոլոր հեղինակները, ուսուցիչները և ազգի կօպէկներով ապրողների մեծագոյն մասը։ Մերայինք գիտեն միայն գնահատել և ովսաննաներ կարդալ արժանիք ունեցող գործիչների վրա ետևից։ Ետևից

մի՛այն, երբ արդէն նրանք դադարել են ապրելուց։

Այս բոլորն ասաց Րաֆֆին իբրև սրտի խոստովանութիւն, բայց մի դառն խնդումով և կարծես յոգնած մի քիչ շունչ քաշեց։ Նա թէև չէր սիրում յուսադրական խօսքեր, բայց ես կարեկցելով նրա նկարագրած դժնդակ վիճակի վրա, հետևեալ խօսքերն ուղղեցի նրան։

—Դուք իզուր էք վշտանում, պարոն Րաֆֆի, որ կորցնելով ձեր նախկին փայլուն վիճակը, այժմ կօպէկներով էք ապրում, բայց վերջապէս պատուաւոր կերպով էք ապրում և դա միայն ձեզ հետ չէ, որ պատահել է. շատերին է վիճակված բաղդի փոփոխութիւն և նրա անողոք հարուածները կրել։ Բայց այժմ դուք ունէք մի գրական գործիչի անուն։ Դուք առաջ տարէք թէ ուսուցչական և թէ վիպական աշխատութիւնները, այս վերջինները ձեզ մի լաւ հետևանքի կը հասցնեն։ Ով ինչ գործում է, շուտ թէ ուշ, վայելում է նրա պտուղը։ Ոչ ոք չգիտէ, թէ վաղն ինչ կը լինի։ Մեծամեծ դժբաղդութիւններին յաջորդել են երջանիկ օրեր, սև սև ամպրոպները ծնել են պայծառ օրեր։ Մերայնոց զարգացած մասի սիրտը ձեզ հետ է։ Քաջալերվեցէք և ապագան ձերը կը լինի։

Փակենք այս մեռելային խօսակցութիւնը, որ ծայրահեղութեան հասցրինք, պատասխանեց Րաֆֆին, կարծես մի փոքր զուարթացած, ես մի պառաւի նման իմ դարդերը պատմեցի ձեզ, իսկ դուք էլ ինձ ապագայի յոյսերով կերակրեցիք։

Նոր փազիս։ Րաֆֆին դուրս է քըշվում Արամեան դպրոցից.

Րաֆֆին Թաւրիզից թղթակցում էր «Մշակին»։ 1877 թւականին գարնան սկզբին «Մշակում» տպվեց նրա մի նամակը, որի մէջ նա ցաւ էր յայտնում, թէ Թաւրիզի հասարակութիւնը չէ սթափվում և չէ մտածում մի օրիորդական դպրոց հիմնելու մասին, որը օրվան հրատապ և անհրաժեշտ խնդիրներից մէկն է։ Աւելի ցաւալին այն է, որ եկեղեցական դասն էլ պնդում է, թէ պարսկաստանցի հայ աղջկայ համար ամօթ է բաց երեսով վարժարան երթևեկել՝ պատռելով սովորական փակ կեանքի վարագոյրը։

Րաֆֆիի հակառակորդները, կարդալով «Մըշակի» այդ համարը, աւելի բորբոքվեցին և գըրգռելով իրանց կողմնակիցներին, մի զօրեղ կուսակցութիւն կազմեցին, հաստատ վճիռ կայացնելով, որ ինչ միջոցով էլ լինի այս անգամ պէտք է Րաֆֆիին դպրոցից արտաքսել։ Այս կուսակցութիւնն ասում էր թէ Րաֆֆին, ինչ ասել կուզի, որ ամէն տեսակ զեղծումներ արել է, այժմս էլ սկսել է մեր ընտանեկան պարզութեան և մեր կղերականների վրա յարձակվել։ Տրտունջ, դժգոհութիւն և զարոյթ մինը միւսի ետևից բարձրացան Րաֆ-

ֆիի դէմ։

Այդպէս չէր մտածում սակայն հակառակ կուսակցութիւնը, որն աւելի զօրեղ էր։ Այդպէս չէր մտածում դպրոցի և հոգաբարձական կազմը, որ բաղկացած էր հետևեալ անուանի վաճառականներից՝ պ. պ. Արգ. Նազարբէգեանց, Սիմ. Թումանեանց, Սարգ. Տէր-Օհանեանց, Տէր-Վարդանեանց, Աս. Միքայէլեանց, Ա. Ղարաբէգեանց և Խաչ. Տէր-Զաքարեանց։ Սրանք ասում էին, թէ Րաֆֆին իբրև Յակոբ Մէլիք-Յակոբեանց 3 տարի ժամանակով վարձված է դպրոցի համար և ահա 2 տարի է, որ նա անթերի կատարում է իր պաշտօնը և որ հասարակութեան մի մասը չէ կարող նրան դպրոցից հեռացնել, որովհետև այդ իրաւունքը վերապահված է հոգաբարձութեան։ Եթէ Րաֆֆին «Մշակի» միջոցով վիրաւորանք է հասցրել ժողովրդին, նրա երեսին շպրտելով նրա տգիտութիւնը, դա երբէք առնչութիւն չունի նրա ուսուցչութեան հետ։ Վիրաւորված համարվող կուսակցութիւնը կարող է իր պատիւը վերականգնել նոյն լրագրում և այլն։ Հասկանալի է, որ այս փաստաբանութիւնները իրաւացի էին, բայց ընդունելութիւն չը գտան և Թաւրիզի հայ հասարակութիւնը բաժանվելով երկու կուսակցութիւն կազմեց, որից առաջացաւ մի եղբայրասպան պատերազմ։

Րաֆֆիին հակառակ եղող կուսակցութիւնից

մօտ 30 հոգի՝ մի օր յանկարծ մտնելով Արամեան դպրոցը, ուղղակի գնացին ներս մտան այն դասարանը, ուր Րաֆֆին այդ ժամին դասախօսում էր։ Րաֆֆին այլայլած նկատում է նրանց և հարցնում.

Ի՞նչ էք կամենում, պարոններ։

—Մենք կամենում ենք, պատասխանում են նրանք, որ դուք դպրոցից դուրս գնաք այսօրվանից։

—Ինչո՞ւ դուրս գնամ։

—Այնպէս էլի, մենք չենք ուզում, որ դուք մեր դպրոցում լինէք։

—Բայց ես ձեզ չեմ ճանաչում, ես վարձված եմ հոգաբարձութիւնից։

—Հոգաբարձուներին էլ մենք ենք ընտրել, ասել են նրանք։

—Ուրեմն դուք կարող էք իմ մասին հոգաբարձութեան հետ խօսել։

—Բայց մենք կարող ենք ուժով դուրս վըռնդել։

—Ո՛չ, դա անկարելի է, չէք կարող, ասում է Րաֆֆին և երկաթի նման դիմադրում է մինչև վերջը։ Իսկ նրանք տեսնելով, որ հեշտ չէ Րաֆֆիին դուրս քշելը, խոհեմութիւն են համարում թողնել և հեռանալ։

Արամեան դպրոցի հոգաբարձութիւնը, լսելով այդ տխուր անցքը և միևնոյն օրը ժողով կազմելով, Րաֆֆիին էլ է հրաւիրում և նրան խորհուրդ

է տալիս որ միառժամանակ դպրոց չը գնայ։ Հասարակութեան մի մասի մտքերը գրգռված լինելով, ասել էին հոգաբարձուները, կարող է մի այլ աւելի տխուր տեսարան առաջանալ դրանից, այդ դէպքում պէտք է չափազանց զգոյշ լինել։

Այսպէս երկու կուսակցութիւններ իրարու հետ վիճում էին երկար ժամանակ։ Մէկն՝ ասում էր, որ ես իրաւունք ունեմ դպրոցի ուսուցչին դուրս քշել, իսկ միւսն ասում էր, որ դու միայնակ այդ բանը չես կարող անել։ Բայց արդարութիւնը պահանջում է խոստովանել, որ երկու կուսակցութեան մէջ էլ խոհեմ և զգայուն սրտեր շատ կային, որոնք ոչ թէ չէզօք մնացին վէճերի ժամանակ, այլ մինչև անգամ ի սրտէ ցաւում էին, որ երկու հարազատ եղբայրներ կռւում էին միասին, աշխատելով յափշտակել մէկը միւսի ձեռքից այն ժառանգական իրաւունքը, որ պատկանում էր երկուսին էլ հաւասարապէս։

Այս անօգուտ մրցումների միջոցին Թեմակալ Անդրէաս եպիսկոպոսը բացակայ էր իր թեմից։ Լսելով այդ ցաւալի միջնադէպը, շտապեց Էջմիածնից վերադարձաւ Թաւրիզ։ Նա աշխատում էր խաղաղասիրական քարոզներով հանդցնել այն եղբայրատեաց վէճի կրակը, որ իր բացակայութեան ժամանակ տեղի էր ունեցել իր սիրելի հօտի մէջ, բայց նրա հովուական սպեղանիները շատ շուտով

չը բուժեցին նոր բացված վէրքերը։ Հաշտութիւնը չէր կայանում։ Ուստի Րաֆֆիի բարեկամները և հոգաբարձուները խորհուրդ տուին նրան, որ Թաւրիզից հեռանայ։

Րաֆֆին էլ արդէն պատրաստ էր նաւը փըրկելու համար իրան ծովը նետել։ Այդպէս էլ արեց։ Նա իր կօշիկների փոշին թօթափելով տխուր ու սրտաբեկ ուղևորվեց Թիֆլիս 1877 թւականի մայիս ամսին։

Վերջացաւ Րաֆֆիի հալածանքի շրջանը։ Բախտն իր դառնութեան բաժակի վերջին մըրուրը քամեց նրա գլխին։ Նա այժմ սկսել է ազատ շունչ քաշել։ Բանաստեղծն այս շրջանումն է հրապարակ հանում իր վառվռուն մտքի ամենամեծ պաշարը, ամփոփելով նրան բազմաթիւ ժամանակակից և պատմական վէպերի մէջ իր կրակոտ ու խանդավառ լեզուով։ Այս վերջին տասնամեակում նա հրապարակելով տանում է իր ետևից հայ ընթերցող հասարակութեան ուշքն ու միտքը։ Բայց նախ տեսնենք, թէ նա այժմ ո՛րտեղ է և ինչո՛վ է պարապած։ Այդ պարզելու համար ես թոյլ եմ տալիս, որ այստեղ բանաստեղծը ինքը խօսի իր նամակով, որը ես նրանից ստացայ 1877 թուի նոյեմբերին, գրված Ագուլիսից։

«Ներողութիւն եմ խնդրում այսպէս անագան ձեզ գրելուս համար։ Գիտեմ, ձեզ ցանկալի կը

լինի լսել իմ Պարսկաստանից դուրս գալէն յետոյ վարածս թափառական կեանքը։ Ուրեմն գրեմ։ Դեռ Թիֆլիս չը հասած՝ բարեկամներիս յայտնել էին այն բոլոր անխրաւ անցքերը, որ անցան ինձ հետ Թաւրիզում։ Ամենքը համարել էին ինձ կորած... այս պատճառաւ իմ անակնկալ յայտնվելը Թիֆլիսում բոլորին զարմանք պատճառեց, Բոլորը նայում էին ինձ վրա որպէս մի նոր Ղազարոսի վրա, որ նոր էր վերադարձել գերեզմանից... Թիֆլիսում ես մնացի մի ամբողջ ամիս։ Այդ ամիսը անցաւ որպէս մի քանի րոպէ. ամեն տեղ սէր և համակրութիւն էի ստանում ծանօթներից։ «Փորձի» խմբագրութեան մէջ արդէն բացվել էր ինձ համար մի տեղ, որովհետև պ. Աղայեանցը գնացած լինելով Երևան, նրա պաշտօնը, կատարող չը կար։ Բացի դրանից Ներսիսեան դպրոցում դասեր առաջարկեցին. բայց ես չը կամեցայ Թիֆլիս մնալ, երբ Ագուլիսի հոգաբարձութիւնից հրաւէր ստացայ։ Ինձ վաղուց սիրելի էր հեռու մնալ քաղաքի աղմկալի կեանքից և գիւղական պարզ ու խաղաղ մի անկիւնի մէջ ապրել։ Ագուլիսը իմ ցանկութեանը համապատասխանում էր։ Աստեղ կարող եմ փոքր ինչ շունչ քաշել և հանգստանալ՝ անցեալ յոգնածութիւնից...

«Երևակայեցէք Սալմաստի խսարովա գիւղը. Ագուլիսը մի այդպիսի տեղ է, միայն դրա լեռնա-

յին դիրքը բացառութիւն է կազմում, որ աւելի նպաստում է առողջութեան։ Բոլոր տները կորած են այգիների և պատնէշների մէջ։ Փողոցներով հոսում են սառն ու մաքուր աղբիւրներ։ Ես կենում եմ Թոմայ առաքելոյ հոյակապ վանքումը. երեք սենեակ ունեմ բոլոր պատրաստի պարագաներով հանդերձ։ Կացարանիս լուսամուտները երկու կողմից ևս նայում են ծառազարդ պարտեզների վրա։ Վանքի գաւթումն է նաև տղայոց դպրոցը, այստեղ է կենում և վանահայրը—հայր Սուրենեան վարդապետը, որ միանգամայն թէ փոխ-առաջնորդ է և թէ տեղոյս երկսեռ դպրոցների տեսուչը, այլ և դասեր ունի աշխարհագրութիւնից և ընդհանուր պատմութիւնից։ Հայր Սուրէնեանը մի երիտասարդ կրօնաւոր է, որ վարդապետական վեղարի տակ պահպանել է ուսանողի և ուսումնականի մաքուր բնաւորութիւնը։ Շատ եռանդով և ազնիւ մարդ է. ես և նա թէև առանձին սենեակներում ենք ապրում, բայց միասին ենք ճաշում և ընթրում։ Ես ընդունել եմ երկսեռ դպրոցների բարձր դասատանց հայոց լեզուի և հայոց պատմութեան դասերը. շաբաթական 24 դասեր ունեմ։ Դասերն սկսվում են առաւօտեան 8 ժամին և վերջանում ժամը 2-ին, այնուհետև բոլոր ուսուցիչները ազատ են։ Եւ այսպէս, ես ամեն օր կէսօրից յետ ազատ ժամեր ունեմ իմ

առանձին գրաւոր աշխատութիւններով զբաղվելու, որոնց մէջ գտնում եմ իմ գլխաւոր մխիթարութիւնը։ Թողեալ այդ, տեղոյս հասարակութիւնը բաւականին համակրական է և կրթեալ քաղաքացու կեանքը է վարում։

«Ցանկալի էր ինձ Արամեան դպրոցից տեղեկութիւններ ունենալ և մանաւանդ դպրոցի այժմեան դրութիւնը ինձ շատ հետաքրքրում է։ Դուք աշխատեցէք խնամք տանել դպրոցի բարւոքմանը, որպէս..., որ գիտէ, թէ ինչ կարևորութիւն ունի ազգային դաստիարակութիւնը։ Խաւարասէրների խոչընդոտները թող չը վհատեցնեն ձեզ, խաւարասէրը ամեն տեղ լոսոյ դէմ պատերազմում է, բայց ճշմարիտ ազգասէրների եռանդը թուլացնել չէ կարողանում... Չը գիտեմ, ինչպէս վերջացան ինձանից յետ տեղոյդ խռովութիւնները։ Կը ցանկայի, որ խռովարարները մինչև այժմ հանգստացած լինէին իրանց չար կրքերից. որ պատիւ չէ բերում Թաւրիզի հասարակութեանը և մանաւանդ կործանման անդունդ է բացում ամենքի առաջ... Ես ներում եմ իմ հակառակորդներին և աշխատում եմ մոռանալ այն բոլոր անիրաւութիւնքը, որոնցով վարվեցան ինձ հետ։ Ես քրիստոնէական անյիշաչարութեամբ ցանկանում եմ որ, Աստուած հեռու պահէր նրանց իրան մոլորութիւններից»։

Այս նամակի գրելուց յետոյ Րաֆֆին լուռ

գործում էր Ագուլիսում, բայց ինձ համար պարզ չէ, և ինքն էլ ինձ ոչինչ չէ գրում, թէ ինչ էր շարժառիթը, որ նա մի տարի միայն Ագուլիս մնալուց յետոյ տեղափոխվեց Թիֆլիս։ Երկար լռութիւնից յետոյ, 1879 թուականին, ես նրանից ստացայ հետևեալ նամակը գրված Թիֆլիսից։

—«Վաղուց է, որ առիթ չեմ ունեցել ձեզ նամակ գրելու։ Պարսկաստանի հետ յարաբերութիւններս կտրելով՝ ես անզգալի կերպով մոռացայ բարեկամներիս։ Բայց պէտք է մոռանալ տխուր անցեալը։ Ես կը ցանկանայի, որ դուք շարունակէիք գրել ինձ, որպէս մէկը... Կեանքի ալիքների մէջ տատանվող իմ նաւակը այժմ, կարծես թէ հասել է իր նաւահանգստին։ Երկար թափառելէն յետոյ, երկար անախորժութիւններ կրելէն յետոյ, վերջապէս Թիֆլիսում դադար գտայ։ Տացէ Աստուած, որ մի նոր փոթորիկ չը բարձրանայ իմ դէմ, որը գրեթէ ինձ վիճակված է։ Այժմ ես իմ աշխարհի մէջն եմ գտնվում, որ վաղուց ինձ փափագելի էր։ Գրաւոր աշխատանքը միշտ եղել է իմ կեանքի նպատակը, և գոհ եմ, որ այդ աշխատութեամբ կարողանում եմ մի կողմից իմ ապրուստը հայթայթել, միւս կողմից էլ իմ մտքերը տարածել։ Օրական երկու ժամ պարապմունք ունեմ «Մշակի» խմբագրատանը, այնուհետև զբաղվում եմ իմ մասնաւոր հեղինակութիւններով։ Դուք արդէն

կարդացած կը լինէք, որ առաջիկայ տարվանից կը սկսվի տպվել իմ «Կայծերը»։ Այստեղ և գաւառներում ստորագրութիւն են հաւաքում նրա տպագրութեան համար։ Առաջին անգամն է, որ մեր հասարակութիւնն սկսում է համակրել և նպաստել գրականութեանը։ Դա ուրախալի երևոյթ է։ Շարունակեցէք ձեր թղթակցութիւնները «Մշակին», ձեր նամակները հետաքրքիր են։ Խնդրում եմ այս ծրարով ձեզ ուղարկված նամակները հաւատարիմ մարդու միջոցով հասցնել Վան քաղաքը»։

Ինչպէս տեսանք՝ Րաֆֆին երկար չը մնաց Թաւրիզում, բայց այդ կարճ երկամեայ միջոցին էլ նա համարեա թէ ընդ միշտ ուժգնապէս մրտրակելով հայ հասարակութեան թոյլ կողմերը, հին ծուռ ու մուռ հայեացքները՝ կարողացաւ պատրաստել թարմ և ժամանակի ոգուն համապատասխանող նոր ուղղութիւն՝ նորակազմ ուսուցչական խմբի աշխատակցութեամբ։ Հէնց նրա հետ պատահած այն տխուր հանգամանքներն էին, որ առիթ տուին նոր սերունդին աչքերը չորս բանալու։ Երիտասարդ վառվռուն ոյժերը և դպրոցաւարտ աշակերտները այդ դէպքից քիչ յետոյ սկսեցին կազմել Թաւրիզում ընթերցարան—գրադարաններ, թատրոնական ներկայացումներ, զանազան բարեգործական և բարեսիրական ընկերութիւններ կանանց ընկերութիւններ և օրիորդական դպրոցներ և այլն,

որոնք մինչ օրս էլ գոյութիւն ունեն և հետզհետէ հաստատ հիմունքներ ձգելով, ճիւղեր և ընձիւղներ են արձակում դէպի Ատրպատականի հայաբնակ գիւղերը և գաւառները։ Իսկ Րաֆֆին, որ թէև հեռու աշխարհում է ապրում, բայց սակայն այդ բոլորի վրա հեռուից նայում է գուրգուրանքով և բաւականութիւն զգում։

Այժմ բանաստեղծը վերջնականապէս Թիֆլիսումն է, ինչպէս ինքն է ասում, իր սիրած աշխարհում և վայելում է մեծանուն Գրիգոր Արծրունու համակրանքը և ընդունված է «Մշակի» աշխատակիցների շարքում։ Նա սկսում է իր մեծաքանակ գրական հիւսուացքի—շտեմարանի դուռը բանալ, հետզհետէ լոյս աշխարհ բերելով «Խենթը», «Խաչագողի յիշատակարանը», «Խամսայի Մէլիքութիւնները», «Դաւիթ Բէգը», «Կայծերը», «Ջէլալէդինը», «Ոսկէ Աքաղաղը», «Ղարաբաղի Աստղագէտը», «Կայէնի կտակը», «Սամուէլը» 2 ստուար հատորներով։ Այս 10 աշխատութիւնները լոյս են տեսել հեղինակի կենդանութեան միջոցին 1880—1888։ Իսկ նրա մահվանից յետոյ հրատարակվել են հինգ աշխատութիւնները, «Վէպիկներ և պատկերներ» և «Հայ կինը և Հայ երիտասարդութիւնը», «Արծիւ Վասպուրականի», «Ջահրումար», «Մէկն այսպէս և միւսն այսպէս»։ Վերոյիշեալ աշխատութիւններից շատերը նախ հրատարակվել են մաս առ մաս

«Մշակի» միջոցով և յետոյ առանձին հատորներով։ Ես չեմ խօսում նրա բազմաթիւ օգտակար և հրահանգիչ նամակների և յօդուածների մասին, որոնք իր կենդանութեան օրերում լոյս են տեսել «Մշակի», «Փորձի», «Արձագանքի» և «Աղբիւրի» մէջ. չեմ խօսում նրա անտիպ մընացած երկերի մասին։

Այդ ստուար և բազմաբովանդակ հատորներով Րաֆֆին կարողացաւ իր հմայիչ լեզուով նոր սերունդի ուշքն ու միտքը գրաւել և կրթել։ Երիտասարդութիւնը ծարաւի կերպով կարդում էր ու կարդում նրա գրուածքը և էլի պահանջ զգում։ Ո՜րքան դժուարութիւններ է հարթել յարգելի վիպասանը՝ մինչև որ կարողացել է այդ հսկայական գործերը ի լոյս բերել։ Նա այնքան կորովի է եղել դէպի իր ձեռնարկները, որ երբ նրանց տպագրութեան է յանձնել՝ ինքն էլ անձամբ օրական մի քանի ժամ գնացել, նստել է գրաշարների շարքում, հարկաւոր բացատրութիւններ տալու համար, որպէսզի տպագրական գործերը անսայթաք ընթանան։ Այդպիսի դժնդակ աշխատութիւնների տակ ճնշված, նիւթականից զուրկ. երկաթէ Րաֆֆին՝ դեռ էլի ոգևորված, մի կողմից էլ նորանոր մտքեր յղանալով գրում և պատրաստում էր ապագայի համար։ Այնու ամենայնիւ նա Կովկասում էլ ունեցաւ մի խումբ սևանախանձ հակառակորդներ, որոնք յանիրաւի դատափետեցին նրա վէպերը որպէս ինկ-

վիզիտօրներ։ Մի դատաստան, որ շատ անգամ պէտք էր արդարադատութեան բովերին ենթարկել։

Եւ դա արդէն կատարվեց, երբ նրա մահից յետոյ հայ հասարակութիւնը նրա վրա երախտագիտական արձան կանգնեց Խօջիվանքի գերեզմանատանը։ Դա մի խրատական ապտակ էր միևնոյն ժամանակ, որ հակառակ բանակն ստացաւ ինտելիգենտ հասարակութիւնից, Րաֆֆին մի անվեհեր հրապարակախօս էր. նա շատ ուշ չէր դարձնում թէև ամբոխական յարձակմունքներին, բայց երբ ժամանակ էր գտնում՝ նրանց արժանի պատասխանն էլ շպրտում էր նրանց երեսին։ Նա իբրև մի անսասան վիպագրող՝ մեծ զոհաբերութիւններով հրապարակ հանեց իր հեղինակութիւնները մինչև իր կեանքի վերջը, ինքն էլ նահատակ դառնալով իր ուխտած վէպերին, որոնք այսօր մեր գրասեղանների զարդն են կազմում։ Հէնց այդ իր նոր վէպերով էլ նա կարողացաւ հայ վիպական աշխարհում նոր ձևեր ստեղծել, որոց մէջ էլ պէտք է փնտրել վիպասանի փառքը։

Րաֆֆին առաջին վիպագրող հայն է, որ շըրջելով Թիւրքահայերի մէջ, պատկերացնում է նրանց հասարակական ցաւերի, զրկանքների և հառաչանքների արձագանգները իր վէպերում։ Թէև նա բանաստեղծական հնչուն յանգերով չէ երգել նըրանց, բայց նա եղել է միշտ պարզ թարգման այդ

բոլոր դարդերին, ջերմ հայրենասիրութեամբ լուսաբանելով երկրի դրութիւնը իր սեփական գեղանկար ոճով և հայեացքներով։ Նա է հանդէս բերել թիւրքահայ կեղեքիչների իսկական նկարագիրը և իր բանաստեղծական տաղանդով կարողացել է ստեղծել իր վէպերում և այնպիսի բնորոշ տիպեր, հերոսներ և դէմքեր, որոնք սակայն եղածի պէս են։

Նա ամեն ճիգ թափել է ժողովրդական ամեն տեսակ տիպեր ուրուագծելու համար օրինակ մի Խաչօի ընտանիք, մի Սալման։ Դուրս է բերել մի Թօմաս էֆէնդի և մի Վարդան, առաջինը որպէս մի աւերիչ և խռովացար, իսկ երկրորդը որպէս մի քաջ հայրենասէր հերոս։ Րաֆֆիի բերանում կարծես խօսքերի հեղեղ կայ՝ հետզհետէ հետաքրքիր և լայնարձակ գլուխներ արտադրելու համար, որոնց մէջ եռում են նրա վսեմ զգացմունքները՝ ուղղված ժողովրդին։ Նա նկարագրում է, օրինակ, մի վանք, նրա շրջակայքը, ուխտաւորների խումբը, սազ, աշուղ, սիրահարներ, հիւանդոտներ և ընկաւորներ, այնպիսի տիպիքական կերպով, որ մարդ կարծում է թէ ինքն անձամբ ներկայ է այդ բոլորին։ Նա խօսում է ջրի, ցամաքի, լեռների և բնութեան հրաշալիքների վրա, այնպէս մարմնացրած՝ որպէս մի հայելի, մի լուսանկար։ Եւ իսկապէս դրանք են նրա վառվռուն մտքի մեծ ոյժը։

Րաֆֆին մի զօրեղ գրական մարտնչող էր։ Շարունակ հալածանքներ կրելով, նա թէև յոգնում էր, բայց չէր ենթարկվում, այլ շուտով նոր աշխոյժ ստանալով ոգևորվում էր։ «Յարդէ գընդակներ» են դրանք, կասէր նա, և բուռն եռանդով կը սկսէր գրել։ Նա շատ մեծ հաւատ ունէր իր ներշնչած գաղափարների և իր քարոզած սկզբունքների վրա։ Ես յիշում եմ, մի անգամ այցելեցի նրան, երբ նա իր սովորականի պէս մռայլ կերպարանքի տակ մտած՝ խորասուզված գրում էր։

—Թոյլ տուէք ինձ տեսնելու, ասացի ես, թէ ինչ էք առաջացրել երեկ ու այսօր, թոյլ տուէք, որ կարդամ ձեր կախարդական գրչի նոր արտադրութիւնները, որոնք ախորժելի տպաւորութիւն են թողնում։

—Ո՛չ թէ միայն դուք՝ պատասխանեց Րաֆֆին, այլ ես ինքս էլ շատ անգամ հիասթափվում եմ իմ գրածների վրա, և հէնց այդ է պատճառը որ յափշտակված գրում եմ։ Ոչ քաղցը, ո՛չ ծարաւը և ոչ էլ աշխարհային հոգսերը չեն կարողանում ազդել ինձ վրա։

Այդ խօսքերից յետոյ նա սկսեց մի քիչ կատակներ անել։ Նրա կատակները խիստ հաճելի էին։ Մեր կատակները շատ անգամ Քաւոր Պետրոսի և նրա գործողութիւնների մասին կը լինէին։ Րաֆֆին մի կատարեալ գառն էր, մի agnus Dei,

երբ նա ուրախ տրամադրութեան տակ էր, իսկ դրա հակառակը նա մի առիւծ էր, երբ նրան դիպչէին։ Մի քանի սրախօսութիւններ անցնելուց յետոյ նա ինձ հետեւեալն ասեց մի խորին հառաչանքով.

—Տեսնում էք ինչքա՜ն եմ աշխատում, ինչքա՜ն եմ հալ ու մաշ լինում իմ վէպերի վրա, բայց իմացէք, որ հէնց դրանք էլ ինձ վաղաժամ գերեզման կը տանեն։ Ես չը գիտեմ, թէ ի՛նչ յուսով և ո՛ւմ յուսով եմ գործում։ Թէ Կովկասում և թէ մեր երկրում յուսացածս յարգանքը և օժանդակութիւնը չը գտայ։ Գրեթէ ամեն տեղ ինձ ծաղրում են և հալածում, մարդ չը գիտէ թէ ի՛նչ անէ։ Դժո՜խք է, դժո՛խք, մի դառնութեան բաժակ է տուած միայն իմ ձեռքը։

Այստեղ հարկ եմ համարում աւելացնել, որ Րաֆֆին չէր այն ֆանտաստիկ և սպանիչ վիպագրողներից, որոնք իրանց գրուածքներում լցնում են ճարճատող ճոռոմաբանութիւններ, որոնք կարդացվում են միայն կարդալու համար, բայց մտային սնունդ չեն տալիս, նման սառույց կռծող երեխայի, որ իր ատամների ձայնից խաբվելով կարծում է թէ մի բան է կերել, բայց նրա ստամոքսը շուտով բողոքում է, որ ոչինչ չէ ստացել։ Րաֆֆին գրում էր ժողովրդի հասկացողութեան չափով, պարզ ու կենդանի լեզուով ու կրակված սրտով։ Նրա նպատակն էր արթնացնել հասարակական

թմրած մտքերը, պատկերացնել թիւրքահայերի կրած սարկական տանջանքները։ Այդ յանդուգն ձեռնարկութիւնը նա իր ձեռքով պսակեց և հասաւ իր նպատակին, փշրելով այն ամեն խոչընդոտները, որոնք ցցվում էին նրա առաջ։ Նրա մի առաւելութիւնն էլ այն է, որ հին վիպական հեռաւորութեամբ չընթացաւ։ Նա մտքով չը բարձրացաւ օդեղէն, երևակայական աշխարհը գրչի նիւթ շինելու, ինչպէս անում էին այդ հին վիպագրողները։ Նա իր վսեմ և աժմէական գաղափարներով հինը տապալեց, դիմելով նորանոր յեղաշրջվող մտքերի, նուիրելով իր գրիչը իրական աշխարհում աչքի ընկնող երևոյթների, այն երևոյթների, որտեղ անհամար զեղծումներ էին կատարվում, որտեղ թշուառը, անճարը և կեղեքվածը իրանց ողորմելի հառաչանքներով զարհուրանք էին բերում ականատեսներին և իրանք էլ զոհ դառնում մարդակուլ հրէշներին։ Մի խօսքով նա նկարագրում էր մարդկային իսկական տիպեր և ոչ թէ օդեղէն և հրեղէն դէմքով։

Աւելին կասեմ։ Բանաստեղծը մի խոշոր գրական դէմք կը լինէր, եթէ նա բարձր ուսում ստանար։ Բայց ինչպէս տեսանք, այդ նրան չաջողվեց։ Նա իր մանկական կրթութիւնն էլ խալֆայական թափթփած դպրոցում կատարելով, ցանկալի առաջադիմութիւնից էլ զրկվեց։ «Հայր մերը» պոչի

կողմից աշակերտին անգիր սովորեցնող վարժապետները քանի քանի մատաղ հանճարներ են սպանել՝ ամբողջ քերականական գրաբառ, անմարսելի կանոնները, բայերը և հոլովները բերան անել տալով։ Որքան սրամիտ աշակերտների միտքը բթամիտ և ապուշ են դարձրել սոսկալի գանակոծութեան տակ։ Ես ինքս էլ յիշում եմ վաթսունական թւականներում աւանդված ուսումը։ Այդ մեռցնող դրութիւնն էր, որ վաթսունական թւականներից առաջ մի քանի սերունդ, ապուշ կրթելով՝ կիսատ ու թերատ թողեց ուսանելի առարկաներից։

Ես բաւական շեղվեցի։ Այժմ էլ երկու խոսքով իմ կարծիքս եմ ուզում յայտնել «Կայծերի» վերաբերութեամբ, որ այնքան աղմկալից քննադատութիւնների ենթարկվեց։ Որքան էլ քննադատեն «Կայծերը», նա միշտ մնում է, որպէս մի գեղգարուեստական գեղեցիկ գրուածք, լի հերոսական սքանչելի տիպերով և նուիրական գաղափարներով Դրանով յարգելի վիպասանը թիւրքահայերին շատ բան է ասել, ինքնապաշտպանութիւն է ներշնչել, բայց ոմանք լաւ չըմբռնելով հեղինակի իսկական նպատակը՝ այդ գրուածքը նկատել են, որպէս մի այլանդակ, որպէս մի անտակտ հեղինակութիւն։ Ափսոս, որ «Կայծերի» III հատորը՝ հեղինակից անկախ, կարճ ու պռատ դուրս եկաւ։ Ճիշտ է, որ հեղինակը «Կայծերի» լեզուի վրա հոգ չէ տարել,

բայց նրա վրա շատ երկար տարիներ աշխատել է,
որ իր փայլուն և հեռատես գաղափարները տա-
րածէ նրանց մէջ։ «Սամուէլը» գրված է գեղանկար
և սիրուն աշխարհաբառով, որի նիւթը վերցրած
է ազգային պատմութիւնից, իսկ «Կայծերը» կեն-
դանի կեանքից վերցրած կենդանի պատկերների
տեսարանացոյց է։ Մի խօսքով, ինչ որ էլ ասեն
ու գրեն նրա հակառակորդները, «Կայծերը» Րաֆ-
ֆիի գլուխ գործոցն են կազմում։ Րաֆֆի և «Կայ-
ծեր» այդ երկու անունները միասին ամուր կապ-
ված են։ Ո՛վ որ անձամբ ծանօթ չէ եղել բանաս-
տեղծի հետ, ո՛վ որ խօսակից չէ եղել նրա հետ,
թող կարդայ «Կայծերը»։ Դրանց մէջ կարծես ինքը
Րաֆֆի—վիպասանն է, որ խօսում է իր բորբոք-
ված մտագաղափարներով և հայրենաշունչ ոգևո-
րութեամբ։ «Կայծերը» կարդալով մարդ բնաւ չէ
յոգնում։

Րաֆֆին 1881 թւականին Թիֆլիսից ուղևոր-
վելով Սիւնեաց աշխարհը, Ղարաբաղի մէլիքների
պատմութիւնը ուսումնասիրելու համար, երբ նա
վերադառնում էր Թիֆլիս, մի անգամ էլ Պարս-
կաստան եկաւ նոյն թւականի աշնանը։ Ժամանելով
Թաւրիզ, նա մի քանի օր միայն մնաց, որից յետոյ նա
վերցնելով իր հետ իր ընտանիքը, ընդմիշտ հե-
ռացաւ Պարսկաստանից։ Րաֆֆին ամուսնացել է
1863 թւականին Ուրմիում և թողել է երկու արու

զաւակներ։ Մեր պարսկաստանցի միակ գրական գործիչը և նշանաւոր բանաստեղծը այժմ այնպէս է մոռացված իր հայրենի երկրում, որ պարսկահայերից շատ քչերն են ծանօթ նրա հազուագիւտ տաղանդի հետ, թէև ինքը միշտ մնում է պարսկահայերի պարծանքը։ Այդպէս է մարգարէն իր գաւառում։ Րաֆֆին ծնած լինելով 1835-ին, վախճանվել է Թիֆլիսում 1888 ապրիլ 24-ին 53 տարեկան։

Ես 1896 թւականին Թիֆլիսումն էի. մի օր ես առաջին անգամ գնացի Խօջիվանքի գերեզմանատունը՝ բանաստեղծի գերեզմանին այցելութեան։ Դեռ ևս նրա վրա արձան կանգնած չէր։ Գիտէի արդէն, որ հանգուցեալը ծաղիկներ շատ էր սիրում, ուստի ես ինձ հետ վերցրել էի մի սիրուն ծաղկէ փունջ։ Ես պատկառանքով մօտեցայ նրա գերեզմանին, երբ թեքվեցի որ ծաղկէփունջը նուիրեմ, երկու կաթիլ արտասուք դուրս թռան իմ աչքերից և ընկան նրա սառն. շիրմի վրա, իսկ ես մնացի կանգնած որպէս արձան։

Մեր մտերմական հին յիշողութիւնները զարթեցրին ինձանում նորանոր, բայց տխուր զգացմունքներ։ Խորտակված սրտով, լռիկ ու մնջիկ, ես մտքովս հետևեալ խօսքերն ուղղեցի նրան։ Ընդունիր իմ այս չնչին ու պարզ նուէրը բարեկամ Րաֆֆի։ Թէև ուշ, բայց այսօր միայն ինձ աջողվեց այցելել քո պատկառելի գերեզմանիդ։ Ես բերել եմ ինձ հետ քո հայրենի երկրից և պարսկահայերից շատ, շատ բարով, ուղղված քո արդէն չորացած ու ցամաքած ոսկրներիդ։ Ննջէր ողբացեալ Րաֆֆի, դեռ ևս փոթորիկների մէջ է Թիւրքահայաստանը։ Որսորդ Աւօն իր գործող խմբով անշարժ քնած են գերեզմանի խորքերում։ Մի օր արգուցէ քո արթուն հոգին քեզ կաւետէ, թէ արդէն մօտ է ցանկացեալ րօպէն. այն ժամանակ միայն քո ոսկորներից աճիւնը կը շարժվի։ Վաղաժամ մեռա՛ր բանաստեղծ և թողվեցի՛ր քո աշխատասիրած բազմաթիւ հատորների կոյտի տակ, որոնք ընդմիշտ կը մնան որպէս մի-մի փառաւոր յիշատակարաններ քեզանից։ Պատռելով խաւարի վարագոյրը, վերջապէս դու տարար այն գրականական դրօշակը, որի վրա քո ձեռքով գրված է Րաֆֆի։

Աւագ խան Աֆրանդիշեանց։

Բագուի Հայոց Մեսրոպեան Դպրոց
Եկեղ.-Ժողով. (ՏԵՂԱԿ)
Публичная Библиотека
7/XI—1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0389342

71.352